

ପ୍ରମତ୍ତ ଉତ୍ତରାଜ୍ୟ  
କ୍ଷେତ୍ରନାଳୀ  
ପ୍ରଦୀପ  
ଶବ୍ଦବିମନପତ୍ରରାଜ୍ୟରାଜ୍ୟ





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ИСКУССТВ

Дармен ЗАРЬЯН

СОВРЕМЕННАЯ  
ИТАЛЬЯНСКАЯ  
АРХИТЕКТУРА

1927-1960

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН ,  
1975

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ԳԻՏՈՎԱՅՐԻՆՈՐԴ ԱԿԱԴԵՄԻ  
ԱՐԵՎԱՏ ԲՈՒԺԻԱՆԻ

ԱՐԵՎԱՏ ԶԱՐՅԱ

A 55609

ԿԸՍԼԱԿԱՆ  
ԱՐԴԻ  
ԾԱՌԱՐԱՄԾՈՒԹՅԱՆՔՆԵՐԸ

1927-1960

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ՕՆ ՀՐԱՄԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ

1975



Աշխատաթյանը և իրաված է արդի իտալական Հարաբերագուության հասագուությանը: Բնեության և առնվամբ ինչպես Հարաբարագուության և բազարաշինության զարգացման ընդհանուր ռազմականները, այնպես էլ առանձին հարաբարագուությունների դորձնությունը և տեսաբանների առաջացրած զարգափարհեցը: Պատմա-քիմիան և դեղագիտական վերլուծության և հիմնարկված այլ տիպական կոռոցվածքները և բազարաշինական սիստեմները, որոնք բերուած են ժամանակակից իտալական Հարաբերագուության առանձնահատկությունները ՀՀ դարի համբեկություր Հարաբերագուության պատմության մեջ:

0321  
Զ. 82-74  
703(02)-75

© Հայական ԱՄՆ Գրատարականթյուն, 1975

## Ա. Ռ. Զ. Ա. Բ. Ա. Ն.

Դաւեց նաշորդում են իշտը՝ կրելով պատմական եղիսաբյունների, քաղաքական կառուցվածքների, ցայտուն անձնավորությունների, ինչպես և մըտի, արվեստների ազդեցուրյունները, որանց միջոցով մարդը նշանարանում, կերպարում և մեկնարանում է իր էստրանը, աշխարհը, կյանքի իմաստը: Կյանքի բնաշշշման օրենքների թելադրանքով մեկը մյուսին են նաշորդում մշակույրներ, ինչպես, ոռմանականին՝ զօրականը, ունեսանսին՝ բարոկկոն, երեմն խաղաղ անցումներով, երեմն էլ՝ անցյալը բացասելով:

Մեր դարաշշանում պատկերն ավելի բարդ է: Երե նկատի ունենանք միայն 1905—1914 րր. ժամանակաշշանը, ապա կտեսնենք, որ իշտը են նաշորդել ֆովիզմը, բյուտին, կորիզմը, էկոպրեսիոնիզմը, ֆուտուրզը և այլն, ոյսինքն՝ տարբե ուղղությունների մի ամբողջ շաբաթ:

Ավանդականի սահմաններից դուրս արդի նարարապետությունն արտացոլում է նյուրական և հոգիկան նոր պահանջներ, նոր մտեր, տնախական և նասարակական խոչըն իշտարակություններ ու անդաշտեր:

Արդի նարարապետությունը սկիզբ առավ շինարարական տեխնիկայի<sup>1</sup> և բնդմանքավես նյուրական-արտադրական միջոցների զարգացմամբ, ինչպես և նասարակական նոր պահանջների առաջացումով: Բացանայտ է, որ տեխնիկայի և արվեստի փոխարարելությունները բնուշաց են անցյալի բոլոր դարաշշաններին և իշտը հաջորդող (պարզեցման համար անվանված) «ուները» ձնունդ են առանում ավելի վաղ շրջաններում, երեմն ակնարկված, երեմն մինչև վերջ շշշակված թեմանեւով: Բարոկկոյի ձեւերը ծնվում են ունեսանսի կոստույցների վրա, բայց բարոկկոն կառուցների նոր համակարգեր չի առաջական: Գորականը չի նետեսում ոռմանականին, այլ կապվում է հոռմեսական շնորհների պատերում ներդրված շիլերի (Շիլվոյրա, Զիովաննոնի) և փայտ

<sup>1</sup> Շաբաթ էրեմին առաջին համուրաց (1779) կառուցվեց Սեվերի վրա (Կոլբրուէդա), առաջին մասացի կախովի կամուրջը՝ Միացյալ նահանգներում (1796): Առաջին կառուցվածքների ամենամեծ փորձերը կատարվեցին Անգլիայում, Միացյալ նահանգներում և Ֆրանսիայում: Երկաթ-բետոնի ժամին բնադրով տե՛ս Յ. Մոլին (1822—1906), Տ. Հիստ, Խար., է. պատմ.:

շինուրյունների (Ստրցիկովսկի), այսինքն՝ նաև գերանների համակարգին: Դորականում պատը (ռոմանական թեմա) նետքնետ նսեմանում է՝ բոլոր տարրով, որ կառույցը գերիշխի իր ամբողջ պարզությամբ: Պաղպատի շինարարությունը ժառանգեց այս նույն համակարգը, որ զարգացավ և բարդացավ՝ հասնելով խողովակներով կառուցելու վակսմանի համակարգին, ներկիի երկարքություններուն տարրերին (վակսմանի տիպայնացումը բնդիմանուր օգտագործման հնարավորություն ունի, իսկ ներկիինը՝ սահմանափակված է՝ մի կառուցվածքով): Բնաշրջման բնրացնում տամօդը պատճ է, որ աստիճանաբարար կորցեց ունեցած նշանակությունը, որովհետև շեշտը դրվեց կրելու (Հռոմի փորձը) և ոչ թե ներշին և արտադին տարածությունները բաժանելու վրա (արտադին ուժերից պատսպարվելը ավարտվեց միշին դաշերից հետո. հաջորդ շրջաններում մարդը կի վերապահում է բնուրյանը):

Հարտարապետական նորինվածքների մյուս կարեռ թեման տարածության կազմակերպումն է: Այսպես, գորական կերպավարժման մեջ խաչվող կամարների համակարգը տարածական միավոր է, ուր զարգացումը բնրանում է նորիգոնական դասավորմամբ: Դորականի ուղղաձգությունը իրազգաձվամ է նույն տարրի, այսինքն սյունախուրձերի՝ մինչև հնարավոր սահմանը դեպքությունը ձգվելով և ոչ թե տարածություն-միավորների ուղղանայաց դասավորությունը (հայկական թեմա): Այս վերջին մատեցումը իրազուրյուն է դառնում XVII դարում Եվրոպայում (Գ. Գուարինի): Արվեստի թեմատիկան փոփոխվում է դրաշշշաններին բնօրոշ աշխարհայեցողություններին համապատասխան, ուր նարտարապետությունն ամենից զգայուն և ամրողշական մարմնացումն է: Եթր պակասում է աշխարհայեցողությունը, մարզն զրազվում է իր տունը կամ բաղադր զարդարելով (ան և Փարիզի Հռոմանյան շրջանը):

Վակսմանի կառուցվածքների սիստեմը հիմնված է հանգույց-միավորների և ոչ թե տարածություն-միավորների վրա: Բնատի տարածությունը ոչ թե պատկերված է որպես տեխնիկական հնարավարությունների դաշտ: Այս միտքն այսօր գերիշխում է ոչ միայն նարտարապետության, այլև հատկապես բարձաշինարարության մարզում: Աշխարհայեցողությունը նարտարապետականանում է այն դեպքում, եթե հնարավորություն է բնձեռում տարածությունը երկրաշափական դաշնել և ձեր արտահայտել կառուցվածքի ու կերպարի միաձոյլ ամրողությամբ:

Չեմ երկատումը սկիզբ առաջ տեխնիկացված մտածելակերպի գերիշխանությամբ:

1671-ին Ֆրանսիայում նիմնից նարտարապետության և մյուս արվեստների ակադեմիա, որ կենտրոնացված էր ֆիլիսոփայական ուղղությունների, գիտության տեխնիկայի և հատկապես երկրի դասական ոգու մշակման օջախը: 1747—1748-ին նիմնադրվում են նարտարապետական դպրոցներ: Լուսավո-

բիշների ազդեցուրյամբ կառուցելու արվեստը բաժանված է նարտարապետների և նարտարագիտների միջև: Եթեույրների անշատման ընթացքը շարունակվում է, առաջանում են մասնագիտուրյուններ և մասնագիտներ: Այդպիսի մտածելակերպով օժտված մարդկանց համար նարտարապետի կերպարն անհասկանալի է դառնում և ճիշտավի 1793-ին Ֆրանսիայում վերացվում են արվեստի ակադեմիաները, կազմվում է «Փնտախոսութ», նարտարապետուրյան դպրոց, իսկ կառավարական վարչուրյան համար կատարվելիք ամրազ շինարարությունը հանձնված է «Քաղաքային շենքների Խորհրդին»: Ճարտարապետի գործունեությունը սահմանափակվում է: Տիտղոսը կորցնում է իր ամրազ ուժինը և հասնում այն աստիճանի, որ ունեն մենք ուսուց գրամար վնարելով կարող լր նարտարապետ անվանվել:

1760—1830 յշանում արդյունաբերուրյան նեղաշշումը համբնկավ արվեստի պատմուրյան նոր-դասականին: Փարիզի Ս. Ժրնելիի (նարտ. Ժ. Պավլո, 1755) նախասրանի նեծանների, կամարների միջուկներում զիտեղված է նարեն իրար կապազ պողպատե կառույց: Ճարտարապետական նորինվածնում կառույցի և ձևի աճաւառումը արդեն իրագործվել էր: Այս երկու տվյալներն այլևս զարգացան իրարից անշատ, մինչև որ մեր դարում վերադարձեց այն շաշափելին, ուր արդի նրամայական պահանջից ելնելով միացվեց կառույցը և կերպարը: Մրանք եղան ուցիունալիստների առաջարկած «փունկցիա» և Վլաֆի՛Ա-ի բոլանդակուրյունն նաևկացողուրյունների ելակեռները:

Կամիլլ Բոյտոն (1826—1914), նարտարապետ, հնադատ, որ ազդիլ էր Գ. Սերլատաֆիոյի (1803—1880) ուսմանտիկ պատմահայեցողական զարաֆարներից, նարտարապետական եթեույրում արդեն առաջարկում էր կողովի «փունկցիաների պատկերում», ուր «օգագործելին» պարտադիր հանգստանք է դառնալու: Կ. Բայտոյի առաջարկով նարտարապետուրյունը պետք է «արամարանական և աներածեալ լինի» ու միաձավի տեխնիկայի, նարտարապետուրյան և սոցիալական կազմի տվյալները: Տեխնիկա ասելով վիտրավյան իմաստով հասկացվում էր կառուցումը, բայց և շենքի ներին տարածությունների կազմակերպումը, ինչպես նաև տարբեր նորինվածների տեղադրման նարցերը, իսկ նարտարապետուրյան-հասարակական կարգ եւկրայուրյունում բնդրյալիքում էին տնտեսական և շենքների կերպարների հաշցերը: Հետեաբար, այս հայեցողուրյամբ նարտարապետուրյան դրական բազադրյալները պիտի լինեն անխնիկականը, տնտեսականը, հասարակականը: Եվ նրանց միաձավյլ կերպարումը Բոյտոն անվանում էր օրգանիզմ, նորինվածք:

1 Երբ զարց լունի իր զիմքը, շահագործում է անցւալը: XIX դարում որոշ շնչքերի ժամանք մնամ էր անփոփոխ, իսկ արտաքին կերպարը իրագործվում էր տարբեր ոճերով: Ճարտարապետական կերպարը ունեկանացված էր եւսապատում էր:

Ճիշտ է, երբ ասվում է, թե Խաղիան մասնակից շնորհ ուրվեսափ առաջարկած առաջարկանքները: Նոր շրջանը նախապատրաստող գիլիսափայական աշխարհայեցողությունների պարկօւմը տեղի ունեցավ Կենտրոնական Եվրոպայում և Անգլիայում: Խաղիան զիտուրյան մարզում իր վերջին խոսքն առաջ XVII դարում, ՚Ի Գալիքնոյի հնկա գործով: Այնուհետև, իրաւ հաչողղեցին Մալյագին, Դարլիանին, Վոլտան, որոնք արդեն մասնագետներ էին ու պետք է ասել, որ այս իմաստով զիտական հետազոտուրյունների գործունուրյունը երբեք շրջնառվեց, ընդհատվեց՝ եւելուրների նշանաբանման համարդրված աշխարհայեցողուրյունը: Արվեստն իր մեծ շրջանն ապրեց XVII դարում, Պանվիտելիի, Ֆուգայի, Ֆուլպարայի, ինչպես և Մանյասկոյի, Պիացցետտայի, Շուարդիի, Կանալիտուոյի, Տիեպոլոյի ստեղծագործուրյուններում: Հետո մեծ լուսուրյուն արեց:

Երաժշտական մշակույրի գարգացման օրինաշփուրյուններն այլ էին: Երա զարգացման տվյալ շրջանը շի համբնինում այլ արվեստների նույն դարձանին: Խաղիան վերածնվեց անկախուրյում ձեռք բերելոց, այսինքն՝ 1860-ից հետո: Մաձձինիի ամրող հայեցազուրյունը կենտրոնանում էր «հայրենիք» իդեալի և հավասար վրա, որ իռողուրյուն է դառնում, երբ ճաղովրդի հոգում զարբնում է հայրենիքի բառն զգացողուրյունը, այն կերտելու հավաքը և այդ առամելուրյան մասնակից դառնալու հաղաքացիների պատմի զիտակցուրյունը: Երբ ֆրանսիական բուրժուական հեղափոխուրյունը առաջ հայեց «մարդու իրավունքների» միտքը, ապա Խաղիան իր ՈՒԽԱՐՀԻՄՆԵՍՈՅՈՒ առաջարկեց «մարդու պատականուրյունների» հայրենանիւր զաղափարը: Միսարշիմենտոն ի մի բերեց եւկրի լավագույն ուժերը և ներշնչեց այդ ամբողջ մշակույրի գարգացումը:

Արմատավորվեց այն զաղափարը, թե Եւկրի միասնացման բնրացքը չպետք է սահմանափակվի, միայն ներկա հաղաքական հարցերի լուծումով, այլ պիտի վերագտնվի և վերիմաստավորվի նաև անցյալը: Մոռացաւրյան դատապարտված Զ. Բ. Վիկոն (1668—1744) վերականգնվեց ողջ ուժքուրյամբ: Ամեն մի խուլացի ունեցավ պատմական շրջանների ժառանգորդը լինելու հայրառուրյունը: Ներքնդրկվեց պատմականը և այժմեականը, Եղելուրյունների բնաշրջումը նկատվեց որպես ամրող Եւկրի բնաշրջում: Այս հայեցազուրյունը պիտի զիտակցուրյուն դառնար ու հասներ այժմեականը անցյալի փարձով մեկնարանելուն: Խռովուրյան զիտակցումը մարդու առաջ ծառացած նարցին տրվելիք պատասխանն է, որ միշտ եւկրա է: Ընտրուրյունը կատարվեց էրիկական հայեցազուրյան և անցյալից ստացած փորձառուրյունների հիման վրա: Երբեք արդյունք տեսնում ենք, որ Վիկոնից մինչև Բ. Կրոշ հանպարեր կարեն էր ու պիտի անցներ Հեղելի ուսմունքի միշով:

1902-ին Տորինոյում բացվեց համաշխարհային ցուցանանդես. Խաղիան,

ու մինչև այդ մասնակից չեւ արդի արվեստի շարժումներին, վերջապես ներկա էր: Այն ժամանակ Ելեռապայում զերիշխող շարժումը «Ար Խոսկն» էր, որի հիմնադիր Վան դի Վերլին եղավ: Բայց այդ շարժման ամենից եռուն կենտրոնը Վիեննան էր: Այնուղիւ Այն ստեղծագործում թառմանը, Հոֆմանը, Օլրբիսը, Օտոս Վազմերը, Դևիսին: Վիեննական «Սլեցցեսիոնից» իմաւական մշակույթը վերակենդանացման նոր ուժ ստացավ: Զ. Սամմարուպան Միլանում Կաստիլիանի պալատը կառուցեց, է. Բազիլին (1857—1932) Պալերմոյում զյուլատունարյան տաղավարը, դ' Արանկան (1857—1932)<sup>1</sup> Տուինոյի տաղավարը, նույն գուցանանդեռում է. Մուրետան մի բանի նիւարեցի կահավորաւմներ ներկայացրեց: 1892-ին Կ. Բոյտոն հիմնեց «Ծոտալական գեղագրուրյան և արդյունաբերուրյան նախկինություն» մատուցում լույս տեսակ (1895) «Էմպարյում» արվեստի նանդեսը:

Այս նարուարապետները վերամշակում էին դրոից բերված ավյալները, սակայն փոխանակուրյունը հաստատվում էր արդեն մշակված ու նետեարաց մասնագիւղ ձևութեանը: Դ' Արոնկոն, Բազիլին, Սամմարուպան շմասնակցեցին «Ար Խոսկն» բնդինանուր քեմաների զարգացմանը: Խանց մասնակցուրյունը սահմանափակ երեսույր եղավ: Արվեստի համար նույն սահմանափակ նշանակուրյունն ունեցավ հատկապես մայրամասնում ստեղծագործող նարուարապետների մի այլ խմբի գործունեուրյունը, ինչպես՝ Քախինը, որ կառուցում էր էկեղեց հաւապարակի կիսաոլոր երկու քերեր, Վիտոուրին Վենետիկու փողոցի բազունու պալատը, Գ. Կալիբերինի (1837—1916) արդարադատուրյան պալատը: Այս նարուարապետները, անառեսելով դարի պահանջները, ինքնազն առաջ էին տանում իրենց գործը: Այս կարգի ստեղծագործուրյունների նշանաբանը կարող ենն համարել Հոռիմի Վենետիկի անվան հաւապարակում Սակկոնիի կառուցած Վիտոուրին էմմանուլիի հուշարձանը, որով Գարնիի Փարիզի օպերայի, Պոլտերի Բրուկենի արդարադատուրյան պալատի Էկլեկտիզմը մուտք գործեց մայրամասն: Վիեննան և Փարիզը սնում էին պաշտանական Բալլիան, իսկ ժողովուրդը մնում էր լուս, անմասնակից, նա շատ ավելի ուշ էր ասելու իր խոսքը: Էկլեկտիզմը նոր էր սկսվում Խոալիայում և հաղրարյան շրջանն էր ապրելու ժաշկվածի ժամանակ՝ տարբեր Գիաշենտինիների մասնակցուրյամբ: արժեների շփորուրյունն անխուսափելի էր, որոշ մասնարականներ (դ' Աննունցիո) սնուցում էին այդ ողին: Լուսավորիչների զարաշրջանում սկիզբ տան և XIX դարում իրազործված նարուարապետուրյան և նարուարագիտուրյան բաժանումն իր նաստառումը զառավ Կալիբերիների, Սակկոնիների աշակցուրյամբ և Սուֆլոյի շինարարական կեղծիքը զարգացում զտավ Գիաշենտինիների, Մուրանուրդների, Դևի Ներբիաների կառուցվածքներում, որոնք ձեր և կառույցը չվերապատճ անցյալի միասնուրյանքը: Երկար-բետոնը պետք է կրեր, իսկ աղյուսը, բարը, մարմարը պիտի արտա-

հայտնին ձեր: Կեղծից, որ ուշ ուշացումով ծավալում գտավ Եվրոպայում, իսկ Միացյալ Նահանգներում պողպատև կառուցներ բարերազ Եւսապատեր: և տարբեր ռեներով (ռեվիլա) արտահայտվելու փորձը արդեն ճին էր: Սակայն այս երկու երկրամասերում մշակույրի հանդեպ ունեցած դիրքորոշումները տարբեր են: Ամերիկայում ավանդականը գոյարյուն չունի ու ռեներ ներմուծված են, իսկ Եվրոպայում նոր չէին կարողանաւ սանդել, շահագրծում էին անցյալի արժեթուրը: Կ. Բայտոն մի կողմից նպաստեց արդի արվասի ուրոշ թեմաների պարզաբանմանը, մյուս կողմից մտանող էր, որ ազգային ոճը պահպանվեր, ուստի խտալական շազգային-ի (այս բառը նոր էր օգագործվում) ոճը ուսմանական էր լինելու: Ամբողջ թեմատիկան ընթանում էր արտադիմ գեղագիտական և ձևական մարզում: Հարտարագիտական մեծ հարցերը անտեսվում էին: Անզիայում, Ֆրանսիայում, Միացյալ Նահանգներում, Գերմանիայում իրագործվող հաջող գործերը ոչ մի հետաքրքրության չէին արժանանում: Միակ բազառուրյունը եղավ Ա. Անտոնելիի (1798—1888) Տորինյան կառուցած Ա. Գաուլինցին եկեղեցու գմբերը և, այսպես կոչված, Մոլե Անտոնելիանան, որի բարձրուրյունը 167 մետր է: Ավելի ուշ պիտի վերագրանեն նման հանդգնուրյուն ունեցող անձնավորուրյուններ, ինչպիսիք են Լ. Ներիխին, Դանաւըն, Մորանդին:

Խոալացի սեցցիսինիսաներն արդի արվեստի բնաշրջման առաջին երկշուր մասնակիցները եղան: Ռուգում եմ նաև նշել այն եզակի, յուրահատուկ բողոքի մասին, որ բարձրացավ արդիականը զիտակցող մի հանի ֆուտուրիստ արվեստագետների կողմից, որոնք մի ոստումով կարծես ուզեցին շանել կորցրած ժամանակը: Այս շարժման շուրջ խմբավորված մարդկանց որոշ մտերի, հեռատեսիլ պատկերացումների հանդգնուրյուննը, ուսարամուտ զադափարների դիմ մղած պայմանը (հատկապես վիեննական սեցցիսիննը, որ սակայն, բաղամական իմաստ ուներ), նոր վերածնուրյան տեսիլքը, Եվրոպական շարժումների մասնակից լինելու, բայց ավելի ապագան թելադրելու հպարտուրյունը, նոր հարտարապետուրյան վարդապետուրյունը մի շարք մտերով և հուտորական վարդապետուրյամբ սահմանած լինելու մզումբ պայրեց արդեն պատերազմով մտանոգված Եվրոպայի մտավորականուրյան առաջ:

Յաւուրիզմը հարտարապետուրյան մարզում նոր տեսիլք թերեց, բայց ոչինչ շատեղծեց և մեծ ազդեցուրյուն չունեցավ: Սակայն գալիք ահարեկից եղելուրյունները կարծես արդեն առկա էին մանիթեստներում: Առաջարկվում էր ապագան, որպեստես ոչինչ չէր կարելի անել ներկա իրադարձուրյունների ընթացքը փոխելու համար: Սանու էլիայի բաղաների տեսիլքը մինչև օրս իր հրապաւյըն է պահպանում: անշուշտ ոչ այնքան առաջարկած լուծումների շնորհիվ (շնայած, որ այնտեղ, օրինակ, երկեկուրյան հարցերում այժմեա-

կանուրյուն ունեցող լուծումներ կան), այլ նոր կերտելու, կյանքին մասնակից լինելու գգայնուրյան համար: Մի խօսքով՝ այն մարդկայինը, որ մասամբ պակասում էր եւլրեների շարժումներում:

Նրան, ովքեր ուզում են փոստութիստների գրավոր ելույթներում արվեստի փիլիսոփայուրյան գանել, կառող են հոսախար լինել: Դրվածքը բարյական է՝ կյանքի հանդեպ բռնվիլից զիւլուրոչում: Այս իմաստով և միմիայն այս իմաստով ֆուտուրիստներին հետեւց 1927-ին Միլանի «յորի» խմբի կողմից հիմնադրված «փոտալական ուղցինալիստների շարժում»-ը: Տերանին, Պերովիկոն, Պագանոն (իսկական անունը Բոգանչիկ էր և խոտացի չէ) կազմեցին այս շարժման և ֆաշիզմի դեմ պայքարելու կարիքը: 1927-ից սկսած խոտալական արդի նարարապետուրյան մշակույրը այլևս ուրու կապ հաստաց և վրասպական առաջադիմ ուղղուրյունների հետ:

Եւկրուդ համաշխարհային պատերազմի բնրաց հում դադարեց XIX դարի արվեստի ուղղուրյունների զարգացումը:

«INACASA»-ի կառուցվածքներում և նեռուալիստների նորինվածքներում դեռևս առկա ոճայնուրյունները դժգույն են իրեւ իր վախճանին հասած նոր դասականուրյուն և ֆոլկորիզմ: Պատերազմից հետո ժաղովուրդն իր ձեռքն առավ եւկրի նակատագիրը, ուռչ շրջանում, և արվեստի մարզում ուղղուրյուն ավող անձնավորուրյունները վերշապես մի կողմ բաշխվեցին, ներխուժեց արդի կյանքի բնմատիկան՝ ամբողջ ուժգնուրյամբ ատապալելով անցյալի բուրգերը: Ճարտարապետի և բազարաշխնարարի առաջ դրվեցին եւկիրը շահագրառ վերակառուցման և նոր կառուցելու նարցեր: Պետք էր վերագրնել եւկիրը, ունեցած արժեները, պետք էր կերտել արդիականը: Խորակազմ արշունաբերաւրյունը, բաղաների անընդհատ ընդլայնումը բոլոր ուղղուրյուններով և ամենաշին արված շարժմելու հնարավարուրյունը, նոր հիմնարկների և ձեռնարկուրյունների առաջացումը, ամեն տարի անող, տասնյակ միլիոնների համանող տուրիստների տեղավորումն, տնտեսական, էներգիայի, նյուրերի ամբարձման, մշակման հարցերը գրավեցին նարարապետներին: Պետք էր լուծել, ձեակերտել, կառուցել, խոկ անցյալի փորձառուրյունները աղբատիկ էին, տարբեր հարցերի գիտական և մերոդիկ ուսումնասիրուրյունները կազմակերպված չէին: Տեղյակ պիտի լինել այլ եւկրեներում, հատկապես Ամերիկայում (պատերազմից շնչառված եւկիր) և Սկանդինավյան եւկրեներում կատարված փորձերին: Ուրեմն՝ նամիտողել, տեսնել, ուսումնասիրել, վերամշակել ստացած տվյալները եւկրի ծավալման նոր մեծուրյան համեմատ, կերպարել նոր իրողուրյունը, կանգ շառնել և ինքնահավանութեն շնուրվել «ազգայինի» հանելիուրյամբ: Մի նոր գիտակցուրյուն էր այդ, որ այլևս մատանոց չէր սոսկ ետ մնալու հարցով, այլ պիտի առաջարկեր, ձեակերտեր և ազդեր այլ եւկրեների արվեստների վրա:

Կյանմի նոր բնրացքը ժամանակ չի տալիս ակադեմիական ծույզ և ինֆնագոն մտածեակերպերի զարգացմանը: Եթե նարտարապետը տեր չի կանգնելու, ապա երեսույրների բնրացքը մղելու է ազատութեն նախաձեռնողներին, և այսուղեղ է շահայիտականուրյան հարցը, կառուցելն ու վաճառելը, առանց մտածելու այն նետևանբների մասին, որոնք կարող են մի նոր քառուի առաջ կանգնեցնել: Ապրելու հրամայական պահանջն իր նետ տանում է մարդկանց: Նրա Խորյունը նենց դրանով է արտահայտվում:

Ճարտարապետը, Տաղաքայինարարը դառնում են երեսույրները կազմակերպողներ. ձևակերպաղներ: Այս իրադուրյամբ վերականգնվում է անցյալի նույանիստ նարտարապետի կերպարը և ոչ թե լուսավորչական շրջանում առաջացած միակողմանի, անշատված մասնագիտը: Տեղի է ունենում նամապում և ոչ թե անշատում...

Երեսույրներին իմաստ տվողը ժողովրդի խորախորնուրդ և ինֆնարեաշման ձգուղ պատկերավորումն է՝ անշուշու ոչ որպես հայեցողական դիրքորոշում (նետևանքը ֆոլիսոն է), այլ ձևաստեղծող կամք: Նոր կերպարների նաշուրդականուրյամբ պիտի ներքնդրդեկն երկրի բնապատկերը, մարդու ապրելակերպի և ձգուղմների տենչը, տնտեսական և նարտարակական ռազմի իրադուրյունը: Թեուրագրել երկիրը (մարդաշխարհագրուրյուն), կապիկի անցյալին, տիրանալ այժմեականին՝ ահա այսօրվա նարտարապետի առաջ հարցերը: Խտալացի նարտարապետների մինչ օրս (1964) ներկայացված պատախանները նետելյալներն են՝ զեկալարման կենորոններ, նոր ծափայանուրյուն, ներբնդրդեկիված հայեցողուրյուն, քաղաք-երկիր հասկացուրյուն, ներամփոփի և կազմակերպված ձևերի համարդիված պատկերավորում:

Մի շաբէ խտալացի նարտարապետներ իրենց ստեղծագործական աշխատանքին զուգահեռ տախիս են տեսական, պատմագիտական հիտազոտուրյուններ: Արվեստի ամեն մի արտահայտուրյուն այլևս պիտի մեկնարաննել ժողովուրդներին յուրահատուի պատմուրյամբ և այլ երկների հետ ունեցած փոխարեւուրյուններով: Արվեստի զաղափարը, ազգային նեղ սահմաններից դուրս նառագայրազ և համամարդկային դարձող արտահայտուրյուն է, ավելին՝ ժողովուրդներին մերձեցնելու բարձագոյն միջիքը, և այս իմաստով երիտասարդ նարտարապետները նամփուրդում, ուսումնասիրում, կապվում, ծանրահետ և ծանորացնում են:

Խտալացին մինչև օրս դեռ չի գրել իր երկրի արդի նարտարապետուրյան պատմուրյունը, այլ գրել է ու գրում է այլ Երկրների մասին կամ, ինչպես Բ. Զելին գրում է նարտարապետուրյան ընդհանուր պատմուրյունը: Զելինի գիրքը (1948) մեծ հաջողուրյուն ունեցավ: Նրա ամրող մտածելակերպը ամփոփվում է օրգանական ուղղուրյան և Ռայախ անձնավորուրյան շրջանակում: Այս միակողմանիուրյունը խորը է այսօրվա խտալացի մտավորականին: Այս ի-

մասունք նետահեցիր է և. Թիմեվելոն, որ «Արդի նարտարապետուրյան պատմուրյուն» գրքում (1964) իր մեկնարանուրյունները նիմնում է տնտեսական, հասարակական, փիլիսոփայական և արվեստներից նետեղ ովլյալների վրա: Պատմ է նիշել նաև Սամոնային, Պիչինատոյին, Տափուրիին, Ֆիունինոյին, Այմոնինոյին, Կուարոնիին, որոնք նաևդս ևն զալիս գրմեռով, նորվածերով և դասախոսուրյուններով:

Ռ. Վենտուրիի և Տիերիի շնորհիվ մողովրդական նարտարապետուրյունը մուտք գործեց նախագծմանը նետահեցող բնդիսնուր նարցերի մեջ և ավելի ուշ ազդեց նեռուալիստների վրա: Կ. Ռազզիանայի (Պիզայի համալսարանի պատմուրյան պրոֆեսոր) տեսակետով արվեստի պատմաբանը պետք է բնդրյանի նետագուտուրյունների դաշտը, փետրի ձևակերտման վրա ազդող պատմաները՝ նկարչուրյան, բանաստեղծուրյան, նարտարապետուրյան, երաժշգույրյան, բանաստեղծուրյան, ինչպես և մտքի տարբեր հայեցողուրյուններում: Եթա պատկերացումով այս բալոր տվյալներն առկա են ստեղծագործողի նորում, նետեարար արվեստագեար նոր կերպարներ վերակերտելով, համաշխարհացնում է դրամի և օգնում մարդկանց արժեքները գիտակցելուն, ավելին՝ արվեստի շուրջ նոգեկան միուրյուն է կազմակերպում: Հուլիս Կարլ Արզանի տեսակետով, արվեստը պետք է նկատել որպես մշակույրի, հասարակական կառուցվածքի և պատմական տվյալների «ամրողական» արտահայտուրյուն, նետեարար ուսումնասիրուրյունները պիտի տարվեն այդ բալոր նարցերի ընդգրկումով, բայց որում թե անցյալի, թե ներկայի տվյալները մեկնարաննելով:

Այդպիսով, ուսումնասիրելով արվեստի երեսուրները, Ռազզիանային հասնում է ստեղծագործողի ներհայաց աշխարհում խոսցված անցյալի և ներկայի բայուն նետմերի լուսարանմանը, իսկ Արզանի նետահենուրյունն ուղղված է արտահայտ աշխարհի երեսուրներին:

Անցյալը և ներկան անբաժանելի միասնուրյուն են կազմում և նարտարապետի, ինչպես և գեղագետի նետահեցուրյունները պետք է ընդլայնեն՝ ընդգրկելով երեսուրների անսահմանափակ ընթացքը: Իրականը ամրողուրյունն է, ունանչատելին:

Առաջն աշխատուրյունը իտալական արդի նարտարապետուրյան ընդհանուր պատկերը ներկայացնելու առաջին փորձն է.



Ա. ԲԱԿԱՆԱՆ ՌԱՅԻՌԱՎԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ՄՈԽԱՌԵՆՏԱՎԱԼԻԶՄԻ  
(1927—1942)

Ճարտարապետությունը մէկնարանել լոկ իմացական հայեցողությամբ, նշանակում է դեղարվեստական, պատմական, կառուցողական, բարոյական այդ կրկույթին մոռնեալ զուար վերացական հասկացողությամբ։ Ճարտարապետական գեղեցկությունը մէկնարանել հինգ օրդերներից բխած շննքերի շարադարանքով, ձեմքի մարմնացած համաշափությունների գաղտանիքներով։ նշանակում է ցուցաբերել մտավոր եռանդ, բայց ոչ մի նորաստեղծ մասնակցություն։ Անջատել տնօնիկայի զարգացման ու սոցիալական պայմանների միջև հզար շեշտել տնահասական ու քաղաքական զարգացման անհամաշխափությունը, նշանակում է արվեստագետների զինավոր ուշադրությունը կենտրոնացնել աղյալ ինքնակալ իշխանությունը մնածարելու վրա։ Եզ այս դեպքում ճարտարապետության մէջ առաջանում է ֆորմալիզմ ու հոկտորականություն։ Աման իշխանությունները փորձում են հրապուրել ժողովրդին ներամանդ, պահպանողական ձեռքով, շփոթելով անցյալը և ապագան։ Այս իմաստով արվեստագետի հայացքը հնատագարձ է՝ նա խաղում է սյուների ու կամարների հետ, վերակռչում պատմության խորքում առդրող մէծ ճարտարապետների սղիները, առաջարկում երկաթեռնեն կառույցը երնսպատել, և վազեմի շինարարական մէմբողներից եննելով, կառույցն է սյուներ, կամարներ, թաղեր։ Բայց չո՞ որ մէր զարաշքանի ճարտարապետական հարցերը դիմադրությունների սկզբանի զլուխգործոցները «վերաներկայացնելով» նշանակում է

1 Թիգր Յիստոի (1871—1946)՝ զբու և լրագրող։ Ճարտարապետ Մ. Պիաչենաֆինին ուղղված եր բաց համակոմ համարակալաւ բնողիր «Պեղազոս փետրվարի համարում—1933» զբու էր «Լաւեյլը՝ տառած բառն զար է, որ կամարները, թաղերը և սյուները կազմում են Հռոմի խորհրդանշանը» և թելազրում արդի ճարտարապետներին վերացանալ նրանց զործածությանը, որպէս համար և Հռոմի համարարեկումած որևությունը իր արդարադատությամբ չէր կարող ամենի դաշտառ և դյուրքնենելի խորհրդանշանը ունենալ։ Աշխարհը ընդունեց կամարները և թաղերը, ինչպես և բնողունեց հոռմական իրավագիտության նորմաները։

կեղծիք ցուցաբերելու նախապատճերազմյան նշուռաւական արվեստը՝ որպես այդ անհետի շրջանի այնքան բնորոշ արտահայտություն, իսակիայում ժամանակավորապես հաջթանակ տարավ ի դեմք մի շաբք պաշտօնական ձարաւարապետների<sup>1</sup> Մ. Պիանինութիւնի, Դել Դիբիոյի, Վ. Բալիո-Մորգուրոյի, Ա. Ֆուսկինի, Ֆագոլոյի և այլց զործունեության: Նրանց գեմ պայքար մղեցին նորը կերտելուն զիտակից, լուսավոր ոգու տեր ճարտարապետներ ու արվեստաբաններ, որոնք, երբ պահանջը ներկայացավ, զո՞նցին իրենց կյանքը, որպեսզի գտիք սկրունդը կարողանաւ ժառանգել նրանց բարձր իգեալները<sup>2</sup>:

Հիմնավորել դարաշրջանին բնորոշ մշակույթը պատմական և հասպիտական վերապրումներով և արգարացնել այն որպես անցյալ դարաշրջաններին դուզաւու երկույթ՝ կեսարիզմ է: Նապոլեոնի ժամանակ իշխալը հունա-հռոմեական արվեստոն էր, ֆաշիզմի ժամանակ՝ հռոմեականը և սևնեանանը: Զ. Ջիովաննոնին մեկնարանում է՝ «զասականը ազնվություն է, հավասարակառություն, ներդաշնակություն, խաղաղ զգայնություն» և ամեն անգամ, երբ մարդը ցանկանում էր ընյութական իրողությունից բարձրանալ ոգու ուստաների զուտ արտահայտությանը, վերագանում է դասական արվեստին<sup>3</sup>:

Միակողմանիորնեն մեկնարանելով պատմությունը, զիտականներից սմանը իրենց հոգաբամիտ մասնակցությունը բերեցին պետականացված ֆաշիստական արվեստին: Այս մտածելափերովը առաջացավ իտալական մտավորականության որոշ խավերում, որոնք դանդաղեցրին նոր ճարտարապետության հրատապ խնդիրների զարգացումը և ճանապարհ բացեցին հետադիմական շարժման առաջ: Կենարունական նվազուայում զարգացող առաջավոր արվեստի բնիւցքին հակագրեցին զուտ ազգային հասկացողությունը և, որպես հետեանք, կզզիւցրին իրենց երկիրը արվեստի կարեռագույն թնաշրջումից: Այս ուղղությանը մտանակից եղան զրականության մեջ՝ Յ. Պալինին, երաժշտության մեջ՝ Օ. Ռենդիդին, Ա. Կարլլեւսն, նրանց միացան մի ժամանակ տարչագիտ նկարիչներ՝ Կարրան, Ֆոնին, Սիրոնին: Ըստ Առֆիշիի, զասականությունը կարելի է մեկնարանի որպես ուներ հույսերի հետ կապված հոգմեկան շարժում՝ և միակը, որ պիտի պարտադրի «այն բոլոր մարդկանց, որոնք նույն ազդի հասարակությունն են կազմում»<sup>4</sup>: Այս մտքերն ընդհանուր արձագանք դտան, և 1922-ին կազմվեց արվեստի «նովիչնենթո» շարժումը<sup>5</sup>: Նրանց նպատակը եղավ

1 Յ. Ջիոլի, արվեստի քննադատ, մահացած Գուլենի ճամբարում, զավակը զնդականարգած Հոումու, Ջիորջի Խոր, ճարտարապետության ուսուուղ, զեզականարգած Հոումու, Յ. և Լ. Բանֆի, մահացած Մատհաուզինում, Յ. Բելտրամի, ճարտարապետ, զեզականարգած, Պազան, մահացած Մատհաուզինում:

2 G. Giovannoni, Architettura di pensiero e pensieri sull'Architettura, Roma, 1931.

3 E. Garin, Cultura e vita morale, պրոկ 6, 1939, էջ 137.

4 Մասնակցում էին ճարտարապետներ՝ Ա. Ալյագոս-Նովելլոս, Գ. Մունցիս, Զ. Պոնին, Գորսալուարին, Է. Խումբանին, Յ. Կազիբատին, նկարիչներ՝ Բուշին, Միրոնին, Ֆանին:

«վերակենդանացնել արվեստի աղքային բնույթը» և «հմտել այն «ավելի լայն խավերի զգայնության» վրայ Քննադատում էին օտարերկրյա արվեստի ուղղությունները սրպես անհարազատ, վերացական և պրոլեմատիկ ու դրանք նկատում՝ որպես որոշ արվեստությանների կողմից իրենց «սուրյանկայի վերականգնությունը նկատառում ով» արած «հուսահատ ճիշտ»:

Նրանց վարդապետությամբ՝ խառաջի արվեստագնուղ, կապվելով իր մշակությի նախահիմքերին, վերադառնելու և դասականը որպես աղջի ոչու համընդհանուր արտացոլում և, մշակելով այն, դարձնելու և համանվրության բնույթի կրող ընդհանրացած արվեստը<sup>2</sup>:

Հիմք առնելով հարարապետության բնադավառում առաջացած նոր թեմաները, և 1927-ին Միջառում, մի քանի մարտարապետներ որպես արվեստի նոր ուղղության մասնակիցներ, «հմտեցին «լութի խումբը» (Պ. Ֆիդինի, Գ. Ֆրետան, Ա. Լարիո, Գ. Պոլինի, Կ. Է. Ռավա, Զ. Տերբանի և Ռ. Կաստանյուու, որին մի տարի անց փոխարինեց Ա. Լիբրեան): Այս խմբի նույական կայ հաստատել կենսարկնական Եվրոպայում մշակված արվեստների նոր ուղղությունների, մասնավանդ՝ Վ. Գրովյուսի, Լր Կորրյուլիի, ինչպես և սովետական կոնստրուկտիվիզմի հետ, ընդդիմանալ նոր-դասական ոճի՝ «համամելյութական» բաղաքական բնույթի կրող ձգումանը, փոխարինելով այն արվեստի ավելի լայն հոսկացողությամբ: Զպարտադրել, այլ համագործակցել, շեշտը դնել ոչ մե անցյալի թեմաների վերամշակման, այլ ստեղծագործ, ակտուալ մասնակցության վրա՝ սա էր նրա նպատակը: «Ճոպի խմբի սովոր ուղղությունը կոչվեց սացիոնալիզմ և ակնհայր էր նրանով, որ ներկայացնում էր արդի արտարապետության ոճինավորց, արխարիկ» շքանը: Նրա դարձացումը կյանքի գոյակից եղավ, այն ձևավորելով և իմաստավորելով իրական կոնկրետ ընթացքից բխած ֆունկցիայի և նորաստեղծ ձևերի միջոցով: Դիալեկտիկական այս հայեցողությունը բնորոշ է այդ շարժման կենդանությանը: Ցոթականների համար հարտարապետը պիտի լիներ զուազ, հիմնականը արտահայտող, մարդու ամենօրյա պահանջներին ուղաղիր և կյանքին շարունակ իր ստեղծագործ ժամանակցությունը ցուցաբերող: «Մենք չենք կարծում, որ ստեղծել ենք մի նոր ոճ, բայց մենք համոզված ենք, որ սացիոնալիզմի դրամադրման և շենքի ու դահնանշների կատարյալ կապակցությամբ տեական ընթացքում առաջ է դառնու... ոճը»<sup>3</sup>:

<sup>1</sup> G. Munzio, Alcuni architetti oggi in Lombardia, «Dedalo» հանդեսում լույս տեսած չողածը (1931, էջ 1087—1090):

<sup>2</sup> Նույիք, էջ 1097—1107:

<sup>3</sup> Տիւ «Յոթի իմքի հոգածը» հոգածը՝ «Յարարապետության» «Rassegna Italiana» գիւղամքեր 1926:

Հինշերիի (*Տրեմեծածոյում՝ Ամբիլա ակումբը*), Պագանոյի (*Տորինոյում վարչական շնչնը*) և Տերրանիի (*Կոմոյում՝ նովոկոմումը*) մինչ 1929 թ. իրականացված դորձերը ցույց են տալիս, որ Խոտալիայում առաջացել է արտարապեմական նոր հասկացողականը: Եթե նկատի ունենակը 1929 և 1931 թթ. շարու ամիսներին կտղմակերպված ուսցիունայինս առրտարապեմականը երկու համախական ցուցանանդների ընդհանուր հաջողությունը, բացահայտ կդանա, թե նրանք ինչպես էին կարողացել այդքան կարճ ժամանակամիջոցում ձեռք բերել որոշ հեղինակություն և իրնց աշխարհայացը պարտադրել առանձ անափակ մասնելուներով օժտված ժամանակառնորի սինդիկային» և Ակադեմիային: Այս շարժումը, արձագանք գոնելով ամբողջ երկրում, արագործներ ընդլայնեց և դարձավ ուսցիունալ հարարապեմական իտարական շարժում (*ՄԻԱԾ*):

Սակայն իրնց մզած պայքարում նրանք չկարողացան ցուցարերել պետք եղած բազարական նկունություն, հետևաբար մայրաքարի պաշտոնական միջավայրում ի վիճակի նողան իրնց լրիվ արդարացնել: Նրանք արդեն իրագործել էին տաղանդով, նոր մոտերով լի կառույցներ, բայց անկարող նողան պաշտոնականացնել առարարապեմական աչք նոր շարժումը և ստիլիզած լրեցին Հռոմն ու բաշվեցին Միլան, Կոմո, Տորինո: Այդ կենտրոններից շարունակցին իրնց անողոք, նրեմն ներուսական բնույթի կրող ու մինչև ֆաշիստական ռեժիմի վերջին օրը տեսզ հուսահատ պայքարը:

Այդ շրջանում բոլորին մատահում էր դասական արվեստի մեջ թե՛ման և ուցիրնալիստների հենց այդ մարդում էլ ցանկացան իրնեց տեսակենուր պարզաբանել: Իսկ նոր-դասականներն իրնեց սկզբունքները հիմնավորում էին որպես «հռոմեական ոգուց», «զասական ոգուց», «ցնդից», «ազդից» առաջացած և անցյալից նզած ժառանգության կրողները: Նոր կազմավորվող իմպերիալիզմը բնական է, վերականգնելու էր անցյալում մշակված մարտարապեմական ձևերը, շարունակելով այն, ինչ բնորոշ էր, ըստ Ֆերգուսոնի, *XVI դարին հաջորդող շրջաններին՝* որպես «ռոմեական բնույթի պահպանություն», պահանձնով դասական ոգին:

Այս պարագայում ուսցիունալիստները մեղադրված էին անցյալի անտեսման մեջ, և վրոպական այլ երկրներում կատարվածը նկատվում էր որպես ռուսամուտ: Օգտվելով իրնեց այս կեղծ «ազգային» բարողի աղջեցությունից, նոր-դասականները զարձան կառավարական խոշոր պատվերների տերեր՝ օգտվելով մշուսների անելպատ զրությունից: Առաջիններն իրնեց արդարացնելու համար բանավեն մզեցին տեսության բնագավառում, հատկապես ավանդության հարցերի շուրջ, և այդպիսով առաջացրին համընդհանուր միպատճեր, ուր յուրաքանչյուրի գաղափարական նախահիմքերն այնքան տարբեր էին:

<sup>1</sup> J. Fergusson, History of the modern styles of architecture, London, 1873.  
18

Պերսիկոն 1930-ին գրաւմ էր. «...խալական արվեստի անկումը կապված է արվեստագևոների անհավատ լինելու հետ, որը հավասար է աշխարհում կարևոր գործ կատարելու դիտակցության պակասին»։ Այս կացությունը մարտարապնտիք՝ տնտեսական և տեխնիկական իրողություններ կարլած լինելու հետեւելու էր, ինչպես և ժողովրդի պահանջների անմիջական թարգմանը հանդիսանալու անկարողության արդյունքը։

Ի հաջիվ սոցիալական հարցերի տռաջտդիմական, դեմոկրատական լուծման, զերազավումը էր պետության ամբացման և փառարանման մտահոգությունը։ Այս երկդիմի վիճակից օգտվում էին դրականությամբ և տեսություններով սնված ակադեմիկոսներն ու նրանց հետ ոճեր վերամշակող ճարտարապետները։

Պերսիկոյի նշած բարոյական անկումը հեռացումն էր իրական կյանքից։

Նու նաև մի այլ հանգամանք, որ կարևոր է նորակազմ արդիական ճարտարապետությունը ի վիճակի շեր ջիռիտյան շրջանից ֆաշիստական իմպերիալիզմին անցած Խառլային՝ իր բնույթին այնքան խորթ իրողությունն արտահայտել։ Նա կանգնած էր ևլուստրական քաղաքակրթության անկման դիտակցման, տեխնիկական և սոցիալական բարդ իրողությունների առաջ, կապված էր ուսցիոնալիզմի հետ և արդրանով էլ կրում էր իր մեջ առագայում ծանրաձակվելիք սերմը։ Բայց ժամանակն աննպաստ էր և անհրաժեշտ էին առջնի համեստ, իրագործելի և մարդկային պայմաններ։ Այդ պայմանները ոդեսք է առաջանային պատերազմից հետո, կրած պարտություններից վշրջած մեծամյա երազներից հետո։

Ճարտարապետության քանամյա պատմությունը, ուր առկա էին ուսցիություն և նոր-գետական ուղղությունները, հատկանշական մերի պիշտությունը, մերի պաշտոնական մեշտումներին և մեքենայություններին, կարծես նույսարկվելու պատրաստ, Միլանի «Կաղաքելլա» հանդսի շուրջ խմբված ճարտարապետների, Հռոմի պաշտոնական խմբի դեմ մզված պայքարով։ Այդ ոպայքարին մտավորականությունը մասնակցեց, բայց ոչ միշտ պայքառ կողմենորշմամբ։ Բնորոշ են, օրինակ, Զ. Մուշեցիոյի առաջարկած համաձայնությունների լուծումները կամ Ռոբերտո Պապինիի նոր-բարոկկիզմը<sup>1</sup>, Նոր արվեստի զարգացման սկզբնական փուլներում նախապատվություն արվեց ճարտարապետության էսթետիկ-դեկորատիվ մոտեցումին։ Ավանդականը էկլեկտիկ հասկացությամբ էր ըմբռնվում, հետեւաբար այդ մտավորականները

<sup>1</sup> G. Veronesi, Difficoltà politiche dell'Architettura in Italia 1920-1940, Milano, 1953.

<sup>2</sup> R. Papini, L'Architettura europea ed il concorso di Ginevra, in Architettura ed arti Decorativi, 1927.

ունտեսում էին անցյալում արտահայտված այդ մաքնը, որոնք կարող էին աշխատական արժեքավորում ստանալ, ինչպես էլեկտրագոյնի քաղաքաշինական մաքնը կամ Սանտ' Էլիայի հետանիարային բաղությունի առնելիքներու «Պատմությունը մաքի արդասիք է և նոր կյանք ստեղծելու գործունեության նախագաղթատությունը, այս միաբը լուսարանում է պատմության նշանակությունը, որը կենդանի մասնակցություն է կյանքին։ Պատմությունը միաժամանակ «մասնակցություն է և միաբը, այսինքն՝ իրականություն։ Այս իմաստով նա դիմքնը և արժանիքների պաշտամունք չէ, այլ շարի և սիմպաթիա դեմ պայքար, որի միջոցով աշխատական արժեքը է ստանում պատմության մեջ ներփակ ռացիոնալը։ Կնշանակի, թե շաբաթը է պատմությունը նկատել որպես մշակված ձևների մի պահնատ, այլ՝ շարունակ վերատակվելու կարողությամբ օժանած գորություն։

Խշանս առնենում ենք, պատմության հանդեպ սացիոնալիստների ունեցած շատկացությունը նշանակում է մասնակից դառնալ պատմության ընթացքին, որովհետեւ, ընդունելով սոցիալական իրողությունը, նրանք ուզում էին անինիկայի հետապնդություններին և արվեստի ձեռավորմանը համբուլիաց կազմակերպել ժամանակակից մարդու կյանքը։ Մա նշանակում է ավելի պատմական լինել, քան նոր-դասականները, որոնց համար անցյալը վերամշակվելի ճեղքածությունը ճեղքածություն է։

Այս կապակցությամբ պնդությունը է քննդեմ այն կարևոր դիրք, որ սւնեցավ արվեստի քննադատ էղուարդոն Պերսիկոն<sup>1</sup> (1900—1936)։ Նա «Կարգաբնվային էջերից անաշխատըն պայքարեց արվեստի քննադավառության պաշտոնական կողմենության դեմ, ակնհայտ դարձնելով, որ այդ մտածելակերպի հետևանքը լինելու է քաղաքացիության և մշակություն անկումը։ Պատմական այս նզնաժամերը պիտի նկատելու ու որպես վերացական, այլ մարդու գործունեությունը խափանող և քաղաքացիության ընթացքը արգելակող հանդամանք։ Պետք է նկատի ունենալ, որ «ավանդության անդադար անշնուրը» չնպացանելու համար խալացի առաջարեևմ արվեստագետները ընդարձակեցին իրենց հորիզոնը, կապվելով արվեստաների նվազագական շարժումների հետ, և այդպիսամբ ավելի ազատ հղան ու պատմականություն ժամանակակից։ Բարակական արդի արվեստի հարցը «արդի հաշակի ննդրին պահանջ է», իսկ պատմությունը՝ «ոգեկան մզիչ ուժ»։ Իսկական ավանդությունը մարտարապետության զարգացման համար է ական է։ Պերսիկոն նկատում է, որ ռացիոնալիզմը ինչպես և որևէ ուրիշ ուղղություն, կարող է զեղող անկում գնալ, եթե շարունակի հակաղորդել իր ժամանակին, հարեւ «հոգևոնականին», ապա «միջերկրականին» մեջ պետք է լինի ամբողջական կյանքից բխած, աշխարհի մտքերի հետ միաձույլ։

<sup>1</sup> E. Persico, Profezia dell'Architettura, Milano, 1945. E. Persico, Scritti critici e polemici, Milano, 1947.

Բուրգական ճարտարապետության այդ ձգտումը կատվեց ընդհանուր ճարտարապետության գարզացմանը: Աղջայինը կորցրեց իր միակողմանի, զուտ ձևական բնույթը և դարձավ ոչք սնող ավելի:

Ետանքը մնե ողմուրությամբ փորձեցին հողվածների և զրբերի միջացով ժողովրդականացնել այդ մարերը<sup>1</sup>: Միլանի Ե-րդ Տրիենալեն (1938) նվիրված էր քաղաքաշինության հարցերին: Առաջարկված լուծումներն ընդգրկում էին բնակվելու, արտադրության բաժանման, կոլեկտիվ կյանքի, զրուանցքի, ինչպես և հազարդակցությունների և երթևեկության խնդիրները: Նույն մտադրությամբ ցաւցագրվեցին համապատասխան մնձությամբ և լրիվ կահավորված, դեղագարդված բնակարաններ: Նրանց նպատակն էր ժողովրդի մեջ տառաջ բերել բնակարանային կուլտուրայի և քաղաքաշինական նոր մոտեցումների պիտակցությունը:

Նկատի ունենալով նույն շրջանի եվրոպական այլ երկրների ճարտարապետության համայնապատկերը, տեսնում ենք մի շարք կարևոր սահմանադրություններ, ինչպիսիք են՝ Մայորի Սալյինամբորելի կամսուրը (Շվեյցարիա), Միա Վան գեր Ռոնի Բարձելունայի գերմանական տաղավարը և Բոնուում Ռուդինատ վիթլան, Գ. Ասպլունդի Ստոկհոլմի ցուցահանդեսը, կը կորրյուպիլի Շվեյցարական տունը (Փարիզ), Վիեննայի Կարլ Մարտի բնակելի թաղամասը և Խոստենդպամի բանվորական թաղամասը (Ճարտ. Բրիկման և Վան գեր Ֆլուտ), կը Կարրյուպիլի Ալմէի բնդշանուր պլանը, Ա. Ալատույի Պահմիս (Ֆինլանդիա) առողջարանը:

Այդ շրջանում կարելի է համանման հայացքների արտահայտություններ տեսնել Սովորական Միությունում<sup>2</sup>, որ տնտեսական-արտադրական նորագույն պլանավորումները, անծայրածիր տարածություններ բարեկարգելու առաջարկները տուաջ բերին քաղաքաշինական նոր լուծումներ, որոնք մշակվեցին Գոսպրոմ, ԱՌՈՒ և ՄԱՄՍԻ կաղմակերպություններում: Այդպիս, Տ. Վորոնցովի «ապագայ քաղաքի» նախադռում (1928) տարածական ժավալային մոտեցումը կանխեց իր ժամանակը և այսօր էլ այդ բնբանումը զրավում է շաղաքաշինարարների ուշագրությունը: Միլյուտինի՝ Ստալինգրադի, Մակնիտոգրասկի նախագծերում (1930) մշակվում է արտադրության պրոցեսը բնդգրելող և հողամասի հարթ բնույթը օգտագործող ժամապավենաձեռ քաղաքի տիպը: Պետք է տսել, որ նույն այդ ժամանակ Եվրոպայում այդպիսի մեծ

<sup>1</sup> Տե՛ս Տրիենալեի առիթով լույս ընծայված «Տետրերը»: Խմբագիր ճարտարապետ Զ. Պաշտիան:

<sup>2</sup> G. Ciocca, Il primo stabilimento sovietico di cuscinetti, L'Ingegnere, 1932, V. De Feo, URSS Architettura, 1917-36, Milano, 1963, V. Quilici, Architettura sovietica contemporanea, Cappelli 1965, E. Fariello, L'Urbanistica e l'abitazione in Russia, 1936-

մասշտաբներով նախագծենքու փորձառություն չկար և խնդիրները սահմանափակված էին սիղունդներով և դրինքնելի թառաններով: Բայց ամենակարևորը՝ օբյեկտը պահապամ էին քաղաքական և անտառական սխալները, որոնց հիման վրա կարելի էր հեղաշրջնել քաղաքաշինուական հին մոռեցումները:

Ըստ իտալացի ռացիոնալիստաների, ռացիոնալիզմը լինելու էր վերածնված հաւալիայի նարտարապետությունը՝ աղասի, հանգույն, նոր մարքերով հզի: Հոռոմում (31 մարտ, 1931) կազմակերպված իրենց երկրորդ ցուցահանդեսի առիթով հրատարակած Մանիֆեստում ամսում էր. «Հասաւատում էնք, որ այլու ծերացաւ ճարտարապետները, ծամելով և որոճալով զանազան ոճերը, Բարայիան կերպարանափոխում էն իրենց համար կառուցվող մի թանգարանի» (2-րդ կետ). իսկ 4-րդ կետում՝ «Մեր շարժումը ուղղում է մասնակից լինել հեղափոխությանը...»: Սակայն ֆաշիստների մտահոգություններն այլ էին, ինչպես նշում է Բ. Չելին<sup>1</sup>, «դիկտատուրան դաշնակիցներ էր վինորում», որոնք հանդիս եկան որպես «քաղաքականապես լիրը մասսաներին» ու իրենց շահերից ենելով անորոշ զիրք բռնցին արվեստի մարզում: Նրանց համար երիտարդ ճարտարապետների խումբը ներկայացնում էր վառանգավոր մի տարրը:

Այս երկդիմի զրությունից օգտվելով և համազային բնույթի կրող մի արվեստի առաջացման թեման խորամանելորեն շահագործելով հանդես նկազմ Մարքելլո Պիաչենտինին: Նրա նպատակն էր գերիշխնել երկրի շինարարական դրաժմունավորան մլար: Սպասողական զիրքներում կանգնած էին՝ ակադեմիկոսները, հեջարանները և ոճերի մասնագետները, իսկ սրանց զիմ՝ ռացիոնալիստների խումբը: Մ. Պիաչենտինիի ամբողջ գործունեությունը բնորոշվեց այդ ուղղությունների միջինով առնեղծված մի ճարտարապետությամբ, որ գունակությունն էր առայտ պնդություններու կառավարող շրջանների մնամամիտ հասումարանություններին և որոշ մտավորականներին:

Եռուով առաջին հարվածը կատարվեց: Իտալական ֆաշիստ ճարտարապետների սենյական 1931-ի մայիսի 5-ին բոլոր լրադրերն ուղղված նամակում դատապարտում էր ՄիՍՈ շարժումը՝ «անուն «արքիսատի պաշտպանության»: Հայպանով՝ դատապարտումից չորս օր առաջ, կազմակերպվեց իտալացի Աարտարապետների միությունը (ԲՄՄԻ)<sup>2</sup>: Իրենք իրենց հայտարարում էին դեմ՝ ուղղունալիզմին հակառակորդներ, որովհետեւ նրանց արվեստի ընույթը ինտերնացիոնալ էր, հասկարար զուրկ անհատականությունից և ան-

<sup>1</sup> B. Zevi, Storia dell'architettura moderna, Torino 1955.

<sup>2</sup> B. Zevi, էջ. զիրք, էջ 652, ԲՄՄԻ հայտարապությունը՝ էջ 651. ստորագրութե՛ւ՝ Հ. Առքամատի, Մ. զի Բնացի, Մ. Պանիկանի, Լ. Պետրիկոնի (5 մայիս, 1931):

Համապատասխան իտալական ժողովրդի ապրելակերպին, դեմ նոր-դասական-Ներին, որովհետև հակազդում էր նորին. վերջապես՝ դիմակից իրեն անցյալի մեծաթիւն, հայտարարում էին լինել այժմեական և նոր քաղաքական «կրիման» արտահայտող շարժում դառնաւալ<sup>1</sup>:

1927—31-ի շրջանը հատկանշվում է որպես հակաձառոմիյունների և արվեստի բննագամության բնդմեավոր մի շրջան։ Մարերի արծարժման ընթացքում կազմվեց այժմեական հայեցողությամբ օժաված ճարտարապետների մի ընտանիք։ Խոկ տվյալ դեպքում, արվեստարանների մոտ զդացվում էր մասնագիտացված բննագամության մշակույթի պահապար։ Ռ. Զիոլիին, Զ. Կ. Արգանը և Կ. Լ. Ռազգիկանանին ապատամիք կրթությամբ դաստիարակված կրոչչականներ էին, իսկ կրոչչական փիլիսոփայության համար արվեստը ներըմբռանողություն է և բացահայտվում է որպես լիրիկա և էքսպրեսիա, այլ կերպ ասած՝ որպես բովանդակություն և ձեւ, որոնք արվեստի հությունը ընդորոշող բաղադրիչներն ենեն Հիմնականն այստեղ արվեստի զույթորոշոցն է և ոչ այն իրադրածությունը միշտցները։ ավելին՝ արվեստի արժեքավորումը չի կարող վերաբերել մի անձի, կամ որևէ շրջանի, այլ այն պետք է ընդգրկի բոլոր դարաշրջանները։ Բացահայտ է ուրիշն, որ այս փիլիսոփայությունը պայծառության չափուց ճարտարապետությունների շուրջ բացված վեճերում, ինչպիսին էին նոր ճարտարապետական լնգվի բնույթի և իրեն հատուկ միշտցների գործածությունը։

Կարևոր է նշել նաև այն հանգամանքը, որ Բալախան մինչ այդ, և ամբողջ բանամյակի շրջանում, չունեցավ արդի ճարտարապետության պատմություն։ Փաստն այն է, որ ճարտարապետները մնանական նպաստեցին քննադատության զարգացմանը և չնայած այլ մասնագիտների ցուցաբերած մասնակցությանը, այդ բնագավառում իշխում էին ճարտարապետները։ Դա սոսկ մասնագիտություն չէ, ոչ էլ տարրեր ուղղությունների համար ընթացող արվեստ։ Այս մեր դարի իզմերը միայն շատ կողմնակիորեն կարող են ընդորշել արդի ճարտարապետության պատմությունը, որովհետեւ ճարտարապետի անձնավորությունը մնում է անկախ, որպես այդ բնագավառի բացարձակ տերը։ Քսանամյակի ամենակարեառուն անձնավորությունները հանդիսացան Տերրանին, Պագանոն և Պերուկոն, Վերջինու, ինչպես ասացինք, յուրահատուկ անձնավորությունն էր շատ ճամփորդած, ապա Ֆիւաթի դործարանում բանվոր, թունդ հակաֆաշիստ և ներին հակումի դրդմամբ էր մոտենում ճարտարապետությանը, 1930-36 թթ. զրած Հոդվածներում նա անողոր վերաբերմունք ուներ ճարտարապետության բնիւթյունը ամեն մի երևույթի նկատմամբ։ Կազ-

<sup>1</sup> M. Piacentini, La mostra di architetti nelle sale dell'ENAPI, La Tribuna, Roma, 22-VI-1932. P. M. Bardi, Altri nuovi architetti, L'Ambrosiano, Milano, 16-VI-1932. R. Papini, Architetti italiani moderni, Emporium, VII-1932.

էր ուրանականում արտասահմանի հետ և շարունակ մեկնաբանում արդի հար-  
տարապետության գլխավոր անձանց գործերը, արդի արվեստի սաղմություն-  
ները: Պերսիկոյին պետք է հիշատակեն նաև նրա պրաստիկ աշխատանքների  
համար, ինչպիսիք էին օգտագործի ցուցահանդեսը (1934) և նիցողուի մաս-  
նակցությամբ Միլանում կառուցած Պարէնրի երկու խանութների ներքին սար-  
բավորումները:

Այդ ցրջանում Միլանի պոլիտեխնիկական ինստիտուտի մի շարք շրջանա-  
վարու հարտարապետներ՝ Բանֆին, Բելլիոյովոն, Պերեսուտին, Բոտասոնին,  
Մինուլետտին, Գարդելլան, Ռուզերոյ և Ալբինին խմբվեցին ուսցինալիսաների  
շուրջը:

Երիտասարդ հարտարապետների տարրեր խմբեր գործունյա մասնակցու-  
թյուն ցուցաբերեցին նրկրի շինարարության առարկելում:

1936-ին ուսցիունակիությունների խումբը՝ Միկելուչի, Բարոնի, Բնրարդի,  
Գամբերինի, Գուարենինի և Լուգաննա, Հազբանակ շահնշան Ֆիրենցիի կա-  
յարանի նախադիմի մրցանակարաշխությունում: Հատկանշական է այն հան-  
դամանքը, որ այդ նոր կառուցվածքը տեղադրված է Սանտա Մարիա Նովելլա-  
յի հրապարակում և այնպիսի մի քաղաքում, ուր դասականի ցայտուն ներ-  
կայությունը մզում է ժողովրդին լինել պահպանողական և վերապահն նոր ուղ-  
ղությունների հանգման: Ֆիրենցին մեկ անգամ ևս ուսցուցեց իր հակումը  
արդի հարտարապետության հանդես, 1930—32-ին կառուցելով Պիեր Լուիջի  
ներմիի նախադամ սահմանը:

1934-ին Զ. Տերրանին<sup>1</sup> (1904—1943) Կոմո քաղաքում ավարտեց մոդու-  
լային համաշխատություններով սահմանված և ընդհանուր ծավալի տարածական  
շափակորումը նրկաթետոնն մի ցանցով պարմանավորած ժողովրդի տունը:  
Կառուցիք ամեն մի քառանկյունում պահպանված է սահմանափակ մակերեսը,  
ուր սյուները, հեծանները, պատուհանները և պատշգամբները ստեկա են իրենց  
ոպարզությամբ և անհրաժեշտությամբ: Այս շենքում ընդհանուր ծավալը չի  
զարգանում իր կառուցիք անկախ, ինչպես լը Կորրյուսի վիլան Սավուայում:  
Հարկերի հաշորդականությունը պարզ կարդացվում է: Ներքին և արտաքին  
տարածություններ՝ իրար մեջ հոսելու դիեմքի հասկացողությունը (ինչպէս  
Միտ Վան դեր Ռուի առաջին գործերում) ընդհանուր շարադրանքում փոխա-  
րինվում է տարածությունների միակերպ հարաբերակցությամբ: Այս մուսե-  
ցումը կարելի է տևանել զերծին հարկի լուսաների, և ակատի հակասական մշա-  
կումների և որոշ համաժամերում՝ պատերի հաստություններից: Լըկորբուզ-  
յան զաւականների հասկացողություններից հետո, Տերրանին կազմակեր-

<sup>1</sup> P. Lingeri, G. Terragni-Quaderni della Facoltà di Architettura, Milano, 1945.  
M. Labo, G. Terragni, Il Balcone-Milano, 1947, „L'Architettura“, Omaggio a Terra-  
gni, 1968.

սուսմ է մակերևունները, հարկերի հաջորդականությունը և ժավալները որպես պարզ, հիմնական կառուցիչ տարրերը բնորոշող հատվածներ:

Մինչև 1936-ը տևող այս շրջանում «յոթի խումբը» հիմնվում էր արդեն կուտակած փորձի վրա և լրիվ արդարացնում իր ձևոնարկումները: Պետք է նկատի ունենալ, որ այդ շարժումը, ազգատվելով որոշ Լրիշայություններից, իր նոր իրարժի ասաց ուժանափակմից դեպի «Հռոմեականի» ու «միջնակերպականի» հակամարտ դիրքերում: Ալրդի հարստարապեսության այս կողմնակիցների գործունեալիցիունը մեկուսացած էր երկրի ներսում: Եվ նման նկատի առնենք, որ Դիրմանիայում նացիստները արգելեցին նոր արվեստը, որ Ֆրանսիան պաշտոնապես դարձել էր պահպանողական (Կորրյազին նախադատում էր արտասահմանի համար), նրանք ներկայացնում էին, այլևս, համաելլուպական բնույթի կրող հարստարապետների միակ գործունյա խումբը: Այս համբավը պահպանողականների շրջանում մտահոգություններ առաջացրեց և երբ 1932-ին որոշվեց կառուցել «Հռոմի համալսարանական կենտրոնը», Մ. Պիաչնուինինինի իր շուրջը համախմբեց տարրեր ուղղությունների հետևող ձարստարապետների: Այդ կենտրոնի ընդհանուր նախադիմք, ինչպես և զինավոր մուտքի սրբայինները և ունկուրատի շենքը կառարկեցին սիմետրիկ և դրամական մուշցումով: Զ. Պագանոն (1896—1945) մանրամասնորեն վերամշակեց ընդհանուր պլանը և ունկուրատը: Նախադման մի մասը հանձնարարվեց նորդասականներին՝ Ա. Ցուկինիին և Ռապիսարդիին, իսկ լավագույն նախադմերը ստորագրեցին ուսցիունավիստները<sup>1</sup>: Զ. Պագանո (Ֆիզիկայի ինստիտուտը), Կապուտինի (բուսաբանության ինստիտուտը), Միկելուչի (հանքարանության ինստիտուտը) և Զ. Պանարի (մաթեմատիկայի ինստիտուտը): Նախագծի արտահաջական գնուն պարզ է և զուսպ: Պագանոյի մասնագիտական լրջությունը և զինական խառնությունը սանձաւարեցին պիաչնախանների հսկութական նորությունությունը: Հռոմի համալսարանական կենտրոնն իր ամբողջությամբ կարելի է համարել քանակյակի շրջանում իրավորժած լավագույն գործ<sup>2</sup>:

«Ճարտարապետության էությունը իր իմաստով խորհրդանշական կրինի, երբ զո՞ւնակությունը արվի կառուցման ֆունկցիոնալ կայունությանը և տեսեական պայմաններին, որոնց հավասարակշռված և համադրված ամբողջականությունը կկազմի մի օրգանիզմ»: «Ճարտարապետական ամեն մի գործ, որ իրագործվում է այս համընդհանրությամբ, աշշմարիտ է» և «էսթետիկական գոճացնողը»: Պիեր Լուիջի ներմիի այս խոսքերը բացառիկ տաղանդով օժտված ճարտարապետի խոր համոզունքն են, որը բացահայտվել է նրա

<sup>1</sup> L. Insolera, Roma moderna, Torino, 1963.

<sup>2</sup> P. L. Nervi, Costruire correttamente, Milano, 1965. P. L. Nervi, Arte o scienza del costruire, Roma, 1954. J. Joedike, P. L. Nervi, Bauten und Projekte, Stuttgart, 1957.

որբերում: Զեերի էսթետիկական, օրդանական ամբողջությունը, և վերջապես, երկաթբեռունի նրա բացահայտած հնարավորություններն իրենց ներդրումը բերեցին նոր հարաբերապետության բնաշրջան և հաստատման դրույմ: 1930—32 թի. Ֆիրննցեր ստագիտնք, 1935-ին հախազժած և 1936—41 թի. իրազործած Օրբեանլլոյի հանդարը կառուցման արվեստի և գեղեցիկության միաձույլ արժեք էն:

Բոլորովին այլ խառնվածքի տեր հարտարապետ Ջիո Պոնտին<sup>1</sup> սկզբում նորատակ ուներ արդի ապրենակերպին հակամեն կենցաղում չերդնել և վրապական բազարակրթությունից բխող ոճականացված ձևավորումներ: Նրա մոտ նոր-դասականի հասկացողությունն այդ շրջանում ներկայացնում էր երկրի սահմաններից դուրս, վերատաք ընթացքն արդեն ավարտած, անցյալում վայերացված վիճնենական նորոր բազարակրթությունից ժառանգած ձեր: Նրա թիմատիկայի մյուս բնեուում զանովում էր ժողովրդական տառնը: Դյուզացու ապրենակերպից առաջացած ներքին դասավորումը, նրա պատրաստած կառուցքը կամ շարած պատի յուստավվերային մակերեսներով շաղախոր՝ այս բոլոր թիմաները էին, որոնց վերամշակումով կարելի էր ավելի սերտորեն կտապվել դարերի ընթացքում հաւաքցու կողմից ստուդիամ կենցաղի կուտուրային: Ջիո Պոնտիի ազգեցությունը տարածվեց արտադրության, կահավորման, արքավորման բուօր բնագավառներում:

1927-ին հիմնված «Պոմուս» արվեստի ամսաթիրթը դարձավ ընդհանուրի հաշվերդ մշակող, մարդու ամենօրյա էսթետիկայի զյանթությունը զարդացնող կենտրոն: Այն ընթերցողներին ծանօթացքնեց Սկանդինավյան երկրների կենցաղին, կազմակերպեց Միլանի «Տրիենալ» մարտարապետական ցուցահանդեսները, խրախուսից սացիոնալ շարժումը: 1936-ին կառուցվեց Մոնտեկատինի ընկերության առաջին շենքը, որը ուղինեալ հատկությամբ արտահանված, պարզեցված նոր-դասական մոտեցում էր:

Զգաելով պարզեցման, Հոռմի մարտարապետների խումբը, որը ազգվել էր գերմանացի Դ. Բոմի, Ֆարենկամպֆի և Հոլցմայստերի գործերից, Ա. Ֆոսկինին կուտարուշենալու մուսեցումով իրադորժեց Ռինաշիմենստու փողոցի նախագիծը, Մ. Չիաշինտինին՝ ոռմանականի ուսցիոնալ կիրառումով, Հոռմի Կրիստո Ռէ Էկելցին, Դև Շերբին լինկ պատերում բացված պատռաները զարգարեց վիլլա-առուրելլյան սյունիկերով, իսկ հատված ֆրանտոններով՝ Ֆորո Իտալիկոն և, վերջապես, Բալլիո-Մորոպուրպոն ստուդիոց խիստ և ոնչաշող Ավ-գուստյան հրապարակը: Այդ մարտարապետները պարզեցման ճանապարհին կորցրին իրենց կրակը և երկակայտանը, որը կառուցումների մակարդակի իշեցման պատճառ դարձավ:

<sup>1</sup> Gio Ponti, La casa all'italiana, Milano, 1933.

Յաշիզմը որոշ մտավորականների, քննադատների և պիտչենտինական խմբի միջոցով վճռական դրբ բռնեց արվեստի նոր հայունությունների դեմ:

Հոռմից ոչ շատ հեռաւ, դեպի հին Օստիա տանող ձանապարհին երկայնքով, 1936-ին որոշվեց կառուցել համաշխարհային ցուցահանդես՝ էլիթի՝ 42: Սա ասրբներվելու էր Փարփղի (1937) և Նյու-Ցորքի (1939) նույնատիպ ցուցահանդեսներից նրանով, որ այդանող կառուցվող պիտագոր շենքերը, ըստ Հոռմի ընդհանուր պլանի, մնայուն բնույթի էին կրելու: Այդ խոշոր նախագիծը իրաւուրծելու նպատակով կազմվեց անկախ մի մարդին: Վիտորիո Չինին նշանակվեց նախագահ, իսկ Զ. է. Օպպոն ու Ռ. Բոնոմին որպես վորխախտականներ: 1937 թ. հունվար ամսին ընդհանուր քաղաքաշինական հատակագիծը կազմելու պատվերը արվեց հաւելյալ ճարտարապետներին՝ Զ. Պազանոյին, Մ. Պիտչենտինին իր կարգը ընտրված էր նույն սկզբունքով, ինչ Հոռմի համալսարանի կենտրոնը նախագծող ճարտարապետների կազմը: Մակար ժամանակները լրիվ փոխվել էին և Պազանոն, որ կարծում էր, թե կարող է նորից աշխատակցել Պիտչենտինի հետ, շուտով հուսախար եղավ: Վերջինս վայելում էր Չինիի և Օպպոյի հոգած բամբար բարեկամությունը և այդ նշանակում էր նոր-դասականների հարցաւնակը ու բանացն հանդեպ կողմից ցուցարերած հովանակության առաջարկությունը: Պիտչենտինին կործի անցավ: Իր խմբի հետ պատրաստեց ընդհանուր հատակագիծ, իսկ պիտագոր շենքերի նախագծման համար հարցարկվեցին մրցանակարաշխություններ: Մասնակցողներին պատվիրվեց, որ ճարտարապետությունը լինելու էր խուլական և իրագործվելու էր երկրի շինանյութերով՝ բարով, ազգուազ և մարուարով:

Պազանոն լրից Հոռմը և վերագրձավ Միլան, «Կազարելլայի» էլերից սկսեց իր անողոր պայքարը Հոռմի խմբի դեմ:

Բ. Զեմին, ՎՕՊԸԱ-ի սուազ քերած հարցերի ընդհանուր էսթյումը սխալ մեկնարաններվ, հանգեց այն եզրակացության, թե Սովորական Միության ստարտեր դավանաների, այսպես ասած, տեղական ձևերին՝ նշանաբանումն ու դարբացումը՝ համառուսական նոր արվեստի այլազան տարրերակներ լինի: Այս մոտեցումը ցույց է տալիս հեղինակի՝ Սովորական Միությունը կազմող ազգերի մշակույթների պատմության անտեղյակությունը: Ոհտց է առել նաև, որ իրարից այնքան տարբեր մշակույթների համարդիած ամբողջությունից շիշարող առաջանալ համբուղհանուր և նոր ճարտարապետություն:

<sup>1</sup> S. Giedion, Spazio, tempo e architettura, Milano, 1954.

<sup>2</sup> S. Rey, L'Architettura moderna nei paesi Scandinavi, Bari, 1965.

<sup>3</sup> B. Zevi, Storia dell'architettura moderna, Torino, 1955, p. 182-183.

Դարաշրջանեց կարող է բնութագրվել ձևավորումների նմանությամբ, բայց նրանց միջն գոյություն ունեցող տարրերությունները հատկանիշում են ժողովուրդներին: Այս վերջապես, ի՞նչ կազ կա խալական, խսպանական և ավտորոշերմանական բարոկկոների միջն նույն ճարտարապետական տարրերը, նույն կրոնը, բայց այնքան տարրեր հասկացություններ:

ՈՉՊԻԼ-ի առաջարկած «բռվանդակության» իմաստը հանդելու էր ազգային արժեքների մշակման հարցին, որը երբեք «գավառական» բնույթ շէր կառող կրկել:

Այդ շրջանում տեղի ունեցած շփոթությունը առաջացավ մշակված ձեր ու դարերից եկող, վերամշակման հնարավորությունը պահպանող, թարմ, ժողովրդական նախաձեռների միախառնությություց: Սակայն դա այդ շարժման անհաջողությունը, անտեսելով նախաձեռն համարություն տրվեց մշակմած ձերն: Հետեւանը կարող է միայն ձևապաշտություն լինել: Ուստի ակադեմիկոսները նորից բացին ուների դիրքը, որպեսզի ընտրություն կատարեն եղիպատականի, հունականի, ոճնասանսի կամ բարոկկոյի միջև:

Իտալիայում ազգայնականը շփոթեցին ողպայինի հետ, ինչպես ավելի ուշ շրջանում՝ փոլիցորը ժողովրդական արվեստի հետ:

Ավելի համեստ նպատակներով, բայց նվազապահ արվեստի բռլոր շարժումներին ուշադիր՝ Ականդիքնավյան երկրները, ենելով դաստական ոռմանտիզմից, իրենց ուշադրությունը անհսկցին նոր ձեռների մշակման վրա: Այդ նոր վերաբերմունքը առաջ է կազ անտեսական ու հասարակական օբյեմաններից, որպես ժողովրդի կենցաղը բարելավելու միջոց: Խացիոնալիզմը ընդունվեց ոչ յէ ձեռներին յուրահատուկ հարցերի մշակում, այլ որպես հասարակական բնույթի կրող ու մեծ արժեք ունեցող տարրը<sup>1</sup>:

Մյուս կողմից, սկանդինավյան ճարտարապետների ուշադրությունը ուղղվեց գեղի ժողովրդական արվեստը՝ փայտերի մշակումը, տների կազմավորությունը: Այդ փոքր ժողովրդներին հաջողվեց այն, ինչ դեռ շէր իրագործվել մեծ աղջերի մոտ՝ դանել ազգային և նոր արվեստի միաձուլլ արտահայտությունը:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, Եվեդիայի, Դանիայի և Ֆինլանդիայի արվեստը որոշ ազգեցություն ունեցավ ավելի բարձր մշակույթի տեր իտալիայի ճարտարապետության, քաղաքաշինության ու ընդհանրապես քնակարանների ներքին կահավորման մարզում:

Երևնական թվականներին Ականդիքնավյան երկրներն ու Սովետական Միությունը, հատկապես Հայաստանը<sup>2</sup>, ուցիոնալիզմը յուրացնելուց հետո, ի-

1. J. Joe like, Geschichte der moderne Architektur, Stuttgart, 1958, p. 195—196.

2. «Տարեգիրք» Հոկտեմբեր—Նոյեմբեր, 1932, ահա Մ. Մազմանյանի «Ճարտարապետություն» շողմանը:

բնեց ուշագրաւթյունը կենտրոնացրին ժողովրդական հարսարապետության վրա ու ճանապարհ հարթեցին ազգայինի մի նոր հասկացության

\* \* \*

Տռականայի հարդարելող արդյունաբերական փոքր բնակավայրի քաղաքաշինական ընդհանուր ցանցին կապված, բնությանը ներդաշնակ և ինքն իր մէջ ամփոփված երկրաշափական ձեռ կանգնած է անրատ. Զ. Միկելուչչի և կեղծիցին (1958): Մուտքի ուղղությամբ, երկարաձեխ, ուժանիստ հատակագծի անկյուններից բարձրանում են երկաթենտոնն ոյուներ, որոնք սրանում են մինչև թմբուկի վերանը, չորս-չորս հավաքվում առաստաղի երկու հանգույցների շուրջ ու կազմում ծածկը: Պատերը՝ հյուսված տեղական քարով ու բնտանի սյունիկներով, մի ամբողջ ցանց են կազմում, ուր տեղադրված ապակիները մարդում են լույսը, առաջացնելով ներքին, չերմ լուսավորություն: Այդ պատճերը կրող տարրերի միջև դիտեազգած բաժանող մարմիններ չեն, այլ ամբողջության հետ շաղկապված, լույսից և սովորից կազմված մի հյուսվածք: Երկրաշափական ձեռ ու շինանյութը իրար չեն չեղոքացնում, այլ միւսանալանդ իմաստավորում են իրար՝ Ֆիրենցի ՀԻ դարի երգնագեղ մարմարների ինտարիաներով երեսպատված Ս. Մինյատոյի կամ Ֆիեզոլեի Բաղիայի հակատներին: Երկաթը նույնի ցանցը և կեղծիցին կազմում է շրջակայուղ գործարանների նման կերպար ունեցող կառույցների համակարգին: Նեղինակը նշում է, որ քաղաքաների կազմում զերիշխող տարրը պատճերն են և ճարտարապետը նորակառույց և կեղծիցին, իդեալականորեն կապում է շրջապատին՝ քաղաքի համեմատ աների կոպիտ բարերից կազմված հակատներին և ավելի շրեղ, երրատաշ բարերի մակերեսների վրայից սահմանված, շնչառում տների տարրեր կշառանքով տեղադրված լուսամուտները, մերթ խուռակով գործարանների պահեստների բարձր պատճերի երկայնքին, մերթ նոսքանալով երկաթենտոնն ցանցների հյուսվածքների մեջ: Այսպիսով, և կեղծիցին միանում է ընակնելի թաղամասներին, բնությանը, դառնում մտներմիկ, մարդամուտ, պատճենականորեն ներկատ:

Առաջին հարկի լուսամուտների գումագեղ ապակիներով և երկարացված պատճեններից թափանցող լույսը ավելի առատ է, ավելի ճոխ: Երկրորդ հարկում բնառնեց ցանցը նորանում է, ավելանում լույսի ուժգնությունը, իսկ ամենագերին հատվածում, թմբուկի բարձրությամբ, ժայթթում է՝ կազմելով մի լույսի պատճեն, ծածկը հեռանում է, աննյութականանում:

1 „L'Architettura“, 1959, № 45, էջ 231.

Հարատարապետական ներքին տարածություններում լույսի աստիճանական այս անցումը նման է ոռմանական հկեղեցիների պատերում բացված, դժույր վեց տասնութեաների շարադրանքին:

Ինչպես նշեցինք, բազմանիստ հատակագիծն իր հրկելնատրոն, երկարածիք ձևավորումով արտաքինում է ներքին տարածության՝ դեպի շրջապատը ընդույնվելու և տարածությանը տիրապետելու ձգումից: Այս հզացմանը հակադրվում է հրկրորդ՝ երկու կենարուների շուրջ համախմբվող այտների շարքը: Ամբողջությունն ինքն իր մեջ հավասարակշռված մի հորինվածք է: Եկեղեցական արտաքինում վավերականությունը զայլիս է հնաց այդ երկվությունից՝ շարժականը և հավասարակշռվածը, բարոկկոն և դասականը: Ներքին և արտաքին տարածությունների փոխհարաբերությունները հատկանշում են անցյալի արտաքինութափական մոտեցումները և կապվում այժմ հականի հետ: Սակայն Զ. Միկելուչին շի սահմանափակվում մեկով կամ մյուսով, այլ երկու թեմաները օդատպործում է սրբուն իր ստեղծած հորինվածքի հարազրական տվյալները: Հատակագիծի ձևից և լույսի դեպի վեց անհեռու ընթացքից առաջացած շարժումը արգելակվում է ընդհանուր կառուցյին աված փակ, ուստի ամբողջական ձևավորումով: Հավասարակշռված շարադրանքը հայթահանությունը է դեպի շրջապատը ձգուած մեխն և հակասվող ուժերի ձգողականությունը տառածանում է ներքին տարածության դեպի զուրս ընդլայնելու առավորությունը:

Անցյալի հետ կապվելու այդպիսի մոտեցումը մի կողմ է թողնում ձևականը, առնչվում է ավելի ընդհանրացված թեմաներին, հակադրական հայնցողությամբ վերապրում նրանց և վերակերտում նոր ձևը:

Անցյալի մշակույթի և այժմյան կյանքի թեմաները հավասարաբար կենդանի և առկա են իսկական ստեղծագործողի ներաշխարհում, իսկ նրանց տրվելիք իմաստը կարող է լինել միայն անհատական մոտեցումով մարմնավորված առաջարկների հետեւնք: Հնանեարոր իստլական արդի հարաւարապետության պատճությունը շարադրելիս անցնելու ենք մի առաջարկից մյուսը, մի անձնավորությունից մյուսը, որոնց ամբողջությունը պատկերացնելու է իտալացի հարաւարապետների՝ արդի հարաւարապետության մեջ ունեցած մասնակցությունը:

Հոռմի Առաքելյան պատճեցը (III դար) սկիզբ է առնում Պոպոլո հրապարակից, բարձրանում Վիլլա Բորգեզնի երկայնքով, հանում Վիա Վիտոռորիս Վենետոյի բարձունքը, առա շարունակվում Կորսո, Բալինայով մինչև Պորտա Պիատ Ֆիատ Ֆլամինիո հրապարակի ու Պորտա Պիայի հակա պատճեշուում բացված մուտքերը կառուցվել են Միքելանջելոյի նախագծով: Առոքելյան պատճեցը, մեղքելով Հռոմի կենարունի մի մասը, կրում է պատմական ու գեղարվետական խոշոր ու նշանակալից մի անցյալ Հնտեարար, շրջապատում իրադրմելիք ամեն մի նոր կառուցվածք պարտադիր կերպով պետք է հաշվի

առնելի այդ կարևորագույն ավագները։ Ենեղով այս հանգամանքից և ի նկատմ առնելով Հեղինակների լրջությունը, ուղղում ենք երկու կառուցվածքներ ներկայացնել թե իրենց ուրույն նարաւարապետական նշանակությամբ, թե անցյալի հետ կապվելու առաջարկած անձնական լուծումների նկատառությունը։

Պորտալ Գիազից ոչ շատ հեռու, Ֆիումե Հրապարակի, Սալարիա ու Անդիել փողոցների միջև, իր գուապ ձեռավորումով ու աղնիվ կերպով կանգնած է ճարտարապետներ՝ Ֆ. Ալբինի և Ֆ. Հելգեի նախագծած «Հա Ռինաշննու» (1963) համամականառատունը<sup>1</sup>։

Կապաւագուն գույնով պողպատի արտաքին կառուցքը վանդակի նման պատում է շների կարմրավուն ծավալը։ Արտաքին պատը՝ մերիշ դուրս ցցված, մերիշ հարթ, անցնում է Հեծանների և այուների ստեղից, ցուցաբերելով բաժանող թաղանթի և ոչ թե կրող պատի կերպարը։ Կրող ցանցը միանում է հարկերի առաստաղներին և մարմինին ու ծավալային նշանակություն ստանում։

Յոթ հարկանի այս շների առաջին հարկում տեղադրված են վանառատան ցուցափեղիները, իսկ վեր բարձրացող մյուս վեց հարկերը կազմված են դրեմի խուզ պատերից։ Նրանց եզրից անցնում էն ներքին ջեռուցման ու միջնորդացին պայմաններն ապահովող խողովակները։ Կարմրավուն զբանիտից ու մարմարի հատիկներից պատրաստված հավաքավի պատերը, ընթանալով օգափոխության խողովակների փոփոխվող շափերի և հարթաւթյունների վրայով, ստանում են լուսատվերային խաղերով հարուստ, գեղատեսիլ մակերեսներ։ Ալյապիկով, խողովակների ցանցը շների արտաքին պատերի նրկայնքին տեղադրելը նման է օրգանական մարմինը սնուզ երակներին և նախագծաղները այդ տվյալը դարձրեն են ճարտարապետական թեմա։

Համամականառատունը որպես խուզ ծավալ նախագծելը նորություն չէ։ Բիենորֆը արգել իրագործել էր Բակեմայի և Վան Դեն Բրեոկի՝ Ռուտերգամում կառուցած խանութների թարգամասում, իսկ Մարտել Բրոյերի կողմից՝ զետ 1955-ին։ Բիենորֆի ճարտարապետական մուեցումը թողնում է այն տպավորությունը, կարծես թե այդ հսկա և խուզ ծավալը ներսում տեղադրված ապրանքների ունկամքը լինի, ու շներին կից կանգնած ֆարոյի մետաղյա արձանը ամենի է շնչառում այդ հանգամանքը։ Բրոյերն իր այս նախագծու հեռացավ վաճառառատների նրկայնքով զնացող ապակու և բնետնե դուիների մննդելսոնյան շարադրանքից (Շոկնի վաճառառները, 1926 թ. և հայունի Կոլումբոս հառուց)։

Համամականառատների ձևակերպումն այն ժամանակ գնու ներկայացնում էր մանր բուրժուային ապշեցնող ու սեփականատիրոջ ֆինանսական կա-

<sup>1</sup> „L'Architettura“, № 75, 1962, „Casabella Continuità“, № 246, 1962.

բողոքաթյունը ցուցաբերող սքանչելիքների հակա տուփի: Այդ հասկացողությունը գույքին էր XIX դարի վերիպղայն (Հաֆայետ, Լուիս, Բամարջե) «պոմպիկ» ան-շաշակությունների, կեզծ հարստությունների պալատներից: ուր զինավոր սրանի մշշտեզում անպայման տեղ էր զրավելու հանդիսավոր, ուկնոջօծված ռանդղատունը:

Որոշ առումով Բրոյերը հեղաշրջեց այդ թեման, բայց ճարտարապետականութեանունն չհաղթահարեց, այլ մեաց վաճառատուն ցուցադրելու պահանջների սահմաններում: Յ. Ալբինիի և Յ. Հելզեի նախադում այդ նույն նախադրյալը բարդացավ և աղնվացավ:

Ինպես արդեն ասացինք, կա Ռինաշենտեն գետանհարկի լուսավոր ցուցակնեղերով անմիջականորեն կապվում է մայթերի երկայնքին ընթացաղ ժարդկանց հոսանքին ու մասնակից դառնում առօրյա կյանքին: Կարմրավուն թագանթով վերջին ծավալը իր խոր ձական շրջել է դեպի Առերելլան պատեշը, հետո պատավում է Սալարիայի երկայնքով ու զեռ շնասած Անինն փողոցը՝ ամբողջ բարձրությամբ ձգված պատուհաններով լուսավորվում և նեղ փողոցի անկյունով նորից շրջվում: Անինների երկայնքին կա Ռինաշենտենի հակատի վրա լուսամուռներ ևն բացվում, շաբագրանքը մանրանում է, դառնում ավելի մտերիմ և փողոցի մթեռլորտին ներդաշնակի Բակի ճակատում պատր ընդհանավում է և տնօղի տալիս շարժական աստիճանները լուսավորող հակատային չէ, այլ ծավալային: Ծակատներն իրենց շրջաբերական կազմում են շրջապատում դոյլություն ունեցող շենքերին, փողոցներին և փոխարարելություններ հաստատում այդ բազմակերպար տվյալների հետ: Առաջնում է հարտարապետական հորինվածքի բազմանկար շաբագրանք: Հետեւ մարար, նարտարապետական ձեռակերպումը բազարաշինական իմաստ է ստանում: Ալբինիի և Միկելուչիի մոտ թեմաների հակասական ընույթը հազթարված է դասական և զուսպ ձեռակերպմամբ, որտեղ կա Ռինաշենտենի արտաքին պողպատի ցանցը հենց այդ նշանակությունն ունի: Այն արտաքինում տեղադրված գարգարանքային կառույց չէ, այլ բազմալիզու շաբագրանքն ամփոփող տարր: Առերելլան պատնեշը, Առերելլան շրջանի շենքերը, փողոցները, հրապարակը և կանաչ տարածությունները քաղաքում ունեցած իրենց հանգուցային կարեռությամբ՝ կա Ռինաշենտենի առկայությամբ ստանում են նարտարապետական նոր իմաստավորում: Սա է, այժմնական լինելով հանգերձ, Ալբինիի գասականությունը:

Ամեն մի կառուցվածք ունի իր շրջամասը (environement), որի մեծությունը պիտի բնորոշել ոչ թե քաղաքաշինական ինչ-որ համոզմունքներով, այլ շենքի կարևորությունից բխող ավալներով։ Ենքին նախադժումը պետք է սկսել շրջապատից և ոչ թե հակառակը, որովհետեւ ամեն մի շնորհ կննարոն է, իսկ շնորհը ամբողջականությունը ազդում է քաղաքի տարածության վրա, որը տարբեր արժեքների բնակներ ունի։

Տարբարապետին ազգես չեն կարող բավարարել միայն շենքի նախազման ավալները, նրա մտահացումները անվելու և ձեռվորքի հենքով շատ ավելի ընդարձակ դդայնությունից։ Նախադժումներում օգտագործելու են բարդ և ընդույնված շափանիշներ, որոնք անկանութեան և նրանց առկայությունը պետք է զգալ։ Օրինակ՝ Ռուսինի «Ներդաշնակ» ավանը և Թուրքին «Ֆամիլիատերիոն», Դոդենի «Ֆամիլիատերիոն» և Կարեն «Իկարիան»։ Այս կենտրոններն իրենց զպրոցներով, հիմնդանոցներով, աշխատավայրերով և համայնքի հարմարություններով, մարդու կյանքի ամրություններով ինքնարարավ բնիւական նախատեսք՝ մարդու կյանքի ամրությունը ներդաշնակուն կազմակերպելու էր։ Բնակիչների թիվը լինելու էր 1200—1600-ից ոչ ավելի, որովհետեւ այդ սահմաններում կենարունները կարստ էին և աշխատակցության և ներդաշնակության վայրեր լինել, որոնք պետք է զարգանային ոչ թե արդեն գոյաւթյուն ունեցողների հաշվին, այլ պիտի կազմվելին նոր խմբավորումներ։<sup>1</sup>

Այս և ընդհանրապես «բդեալական» ու «երևակայական» լուծումները, որոնք ավելի ուշ միայն բնօմնավոր եղան, սահմանափակվեցին զատա տեսական հարցերի արծարծումով։

XIX դարի իդեալական քաղաք-միավորների կազմը սահմանափակ էր, որովհետեւ անտեսված էին անցյալի և շրջապատի հետ հաստատվելիք կասպերը։ Քանից կազմը նմանվեց բջիջների, և զարգացումը ընթանալու էր հենց այդ բջիջների բազմացման կանոններով։ Խուալիայում այդ տեսակները վերջնականութեան հազթահարվեցին նեռակալիստների կատարած վերձներից հետո։

Կարելի է համոզվել, որ ամեն մի նախադժվելիք հողամաս իր հետ ընթառում է արդեն գոյաւթյուն ունեցող արժեքներ, և ամեն մի արժեք այժմեան և պատմական իրողություն է, որի հանդեպ նախադժումը անուշագիր չի կարող չինել։ Գետը է նաև գիտենալ, որ պատմական իրողություն ասելով շենք ուղղամատության անպայման տեղում գոյաւթյուն ունեցող հուշարձանը։ Հայն իմաստով՝ խոսքը պատմականի դիտակցության մասին է։

Ենքին վրա ազդող ուժերը գործում են որպես առջնմերաշափեր և նրանց ընթացքը շարժվում է որոշակի ուղղություններով՝ զեսի անցյալը, զեսի ժողո-

<sup>1</sup> M. Zocca, Sommario di storia urbanistica delle città italiane, Napoli, 1961.

վրբոյի մշակույթը, ապրելակենքողը և միաժամանակ կատվում քաղաքում գոյացությունը ունեցող ավալաներին, ինչպիսիք են արդի իրողությունը պատկերող երթևեկության ցանցը, թաղամասի կազմը և որոշ փոխարական ավալաներ (Երևանի քաղաքի գործուն կննութրունները փոխում են իրենց տեղը): Հանեաբար, ամեն մի նոր կառուցվածք կամ թաղամաս հանդուցային նշանակություն է սարանում (օրինակ՝ Հռոմի և Ավառութիւնի երարք Խաղալիա» (1961), ճարա, և Զարյան և է. Մաինարդի, «Սերովիկում» համալսարանային համալիրը էթիո-ռում (1963), ճարա, և. Զարյան և ջ. Սակորինի):

Այս հարցերին կարելի է մոտենալ, ենթավ տարբեր հայեցողություններից. ա) ճարտարապետական հորինվածքը պարտադրելով իր շրջապատին, բ) ճարտարապետական հորինվածքը ենթարկելով իր շրջապատին, գ) այդ երկու ավալները իրար լծորդելով հորինել քաղաքա-ճարտարապետական (սեբատետրա) պարունակիչ (contentor)՝ կերպարներ:

\* \* \*

1962-ին Հռոմում, նույն Առորիլյան պատնեշից ոչ հեռու, ճարտարապետներ վինչենցո, Ֆառատո և Լուչիո Պասսարիլիները մի խումբ ճարտարապետների հետ կառուցնեցին «քաղամասուագործելի» մի շենք: Շենքի ամբողջ ծավալը բաժանվում է երեք մասի: Ավելի ներս ընկած հակառակությունը առաջին հարկում անդադրված են խանութեր, առան մուտքեր, կանաչապատ տարածություններ. լրիվ ապակենպատված հաշորդ շորս հարկանի ծավալում տեղադրված են աշխատասենյակներ, արհեստանոցներ և վերջապես, շատ ազատ ծավալային լուծումներով շարադրված վերջին շորս հարկերում տեղադրված են մեկ և երկհարկանի ընակարաններ:

Ամբողջ շենքի ճարտարապետական կերպարը կազմված է վերը նշված բաժանումների համաձայն՝ իրար վրա դասավորված և տարբեր բնույթ ունեցող ծավալներից:

Առաջին հարկը մայթի դեպի ներս ընդլայնվող մակերևուների միջոցով մասնակից է դարձնել փողոցում ծավալվող առօրյա անցուղարձին: Շենքի մեջտեղի ծավալը կազմված է 12 մ. բարձրություն ունեցող արտաքին մակերեսից՝ զուրս և կող բաց շաղանակագույն առակենապատ խորանարդով, վերներ ընակելի հարկերը տրված են մերի ներս ընկած, մերի զուրս ցցված, պլաստիկորեն շատ ուժիղ տերրասների, խուլ ծավալների և բացվածքների շարադրանքով:

Ելեկով ներքին ծրագրերից, շրջապատի հետ ունեցած փոխհարաբերություններից, ցանկանալով տարբեր ծավալների միջոցով ընդգծել շենքի այլազան բնույթը, հեղինակները իրենց ծրագրերը արտահայտել են ճարտարապետական ձևակերտման բազմալինությունը հորինվածքի միջոցով:

<sup>3</sup> „L'Architettura“, № 121, 1963, սկզբ Յան Լուబիչ-Նյչը՝ Կայսուց էր Տել Ավի-Յաֆա տակարակուն կենտրոնը:

Այսօր այս երմույթը բնորոշ է ոչ միայն ճարտարապետական որոշ մուտքագումաններին, այլև հատկապես երաժշտությանը, նկարչությանը և դրականությանը: Հերման Բրոխի խոսքներով՝ ասած՝ «արվեստի բոլոր ստեղծագործությունների խորքում առկա է տիրազերական ամբողջությունը պատկերացնելու տեսնը» և մարդ դրան համառում է ոչ թե «ձևերի ծանոթությամբ», այլ «ձևերի միջոցով» ձեռք բերված ծանոթությունների միջոցով: Ուստի ձեզ նպատակ չէ, այլ միշտ Ալյովիստի, ինքն իր մեջ ամբողջական լինելու իմաստը հեղաշրջվում է և շաբադրաները դառնում բազմաձայն կամ բազմակզու, այնպնս, ինչպես Պիկասոսի արվեստը, ուր «տիեզերական ամբողջությունը» ներկայացված է տարրեր կերպարանքներով և նույն թեմայի տարրերակներով, որոնցից ոչ մեկը համընդհանուր իրողություն չէ, այլ արտաքերում է երմույթների մասնատված արձականքը:

Բազմազտագործների շնորհերի տիպարը այժմնական է, բայց անպայման այդ շնորհի ներքին ծրագիրը չէ, որ թելագրում է ծավալային ամրությունը: Մնաց կարծում ննիք, որ ճարտարապետական ընդհանուր շաբադրանը միշտ կախում ունի ստեղծագործողի աշխարհաւոյնցությունից:

Ռենեսանսի ազնվական ընտանիքների այնքան ասիս ու բազմաթիվույթ առթելակերպի կազմակերպումը բավական բարդ էր և պայտաների կազմում արտահայտվում էր հարկերի, ստամի՝ օրդենների, լուսամուսների և պատերի տարրեր մշակումների շաբադրանքով, որոնց կշռական հաշորդականությունը համընկենում էր ներսում ընթացող կյանքի շրջաբերության հետ: Ընտանիքի ապրունակերպը, ինչպես և ճարտարապետական ձևը արվեստ էր: Կյանքի այլազանությունը ամփոփված էր ճարտարապետական ծավալի մեջ՝ որպես կատարյալ և գեղատեսիկ նզելությունների «երեսութարանություն», իսկ ձեռ՝ որպես «ժամանությունների» միշտ: Ռենեսանսի մարդու համար ձեռն իր լինելիությունը կերտելու բարձրագույն իդեալն էր:

Առողջապահության պատճենի երկայնքով կառուցված և մեր կողմից քննարկված երկու շնորհերի Ֆ. Ալբինիի և Ռենեսանսների ճարտարապետական ձևակերտությը քաղաքաշինուական թեմատիկայով բազմակզու լինելով՝ հանդերձ զավաճած է դասական ոգու խստությամբ, իսկ ճարտարապետների Պաստարելլիների «քաղաքականությունը» շնորհը, նույն ավլյաններից ենելով, դառնում է՝ «քաղաքի հորինվածքն» արտահայտուղ աշխաների ընդունիչը<sup>1</sup>, որը նշանակում է ոչ մասնակից, այսինքն շնորհը անշատվում է քաղաքի ցանցից, անմիջական շրջապատից և ստանում համընդհանուր արժեքավորում: Դառնում է այժմեական կյանքին մասնակից, բայց ինքն իրենով ապրող և անցյալից անշատված, և անկախ առարկա: Պաստարելլիների շնորհի մեկնարանումն

<sup>1</sup> «L'Architettura» աշխատակից Բ. Զեվի-ի հաղորդը և Ռ. Գլուխիի դրությունը 1965, № 122, էջ 493 և 495—522.

ամբողջացնելու նպատակով և, հատկապես, ձարսարապետական նորակերտ ձևերի հնա անցյալի կայլը մնկնաբանելու մի այլ մոտեցում պարզելու մտադրությամբ, ուղղում ենք խոսել որոշ շինանյութերի կարեռորդության մասին:

Նմեն վերադառնածը անցյալին, ապա պարզ կլինի, թէ ինչու ՀԻ դարում մշակված շինանյութերի միջոցով հաջողվնց պատահի կրկու հատկանիշը վերացնել և թէ ինչպես եղավ, որ դա համընկավ տեխնիկայի զարգացման հետ: Զեի հատակություն, մակերեսների թափանցիկություն, տարածությունների ներթափանցում՝ սրանք տվյալներ են, որոնք ճարտարապետական նոր հորինվածքների հատկանիշները գարձաւէ: Եվ մեծ նշանակություն ստացան, օրինակ, 1851-ին Յ. Պակստոնի կառուցած պողպատն, թիթեղիքա և ապակյա և կրիստալ պալատը՝ կամ 1867-ին Մոնիեի առաջին երկաթբետոնի փորք կառույցը: Հետեւարար շինանյութերի գյուղար կամ նրանց ավելի լայն գործունեությունը, կառարելագործումը՝ պատահհական երկությունը, են պատճության մեջ, այլ համընկնում են փոփոխվող ապրելակերպի և աշխարհայնացողության հետ:

Պարզ մի շինանյութ, ինչպիսին է ապակին, այսօրվա ճարտարապետական թեմատիկայում ստացել է բավական բարդ նշանակություն և այն հանդամանքը, որ այդ նյութի մեծ ծավալով օգտագործումը սկիզբ է առել երկու պարարգավանների իրազորդումներով՝ նշանակալից չ: Յ. Պակստոնի կառուցվածքները չերմարատներ էին և ցուցադրման հակա շններ, որոնք երկու հիմնական հատկանիշներ ունեին. մեկը՝ ներսում արհեստականորեն կլիմայական անհամարժեցած միջավայր ստեղծելու, մյուսը՝ ապակու թափանցիկությամբ ներսի տարածությունը արտաքինի հետ կապելու առողջությունը: Առաջ մեծ սրահներում ցուցադրված առարկան այլևս չուներ պատ, կամ որմնախորշ որպես հենակետ. հենքը ապակին և նրա ետքը ընդլայնվող բնությունն էր: Ինչպես զիտանքը, այդ երկու հատկանիշները այսօր լայն ծավալում են զտել և մասն են այն ավելի լայն հատկացողության, որը կոչվում է սկենառարտնական ռեալիզմը: (Բ. Նոխտրա): Վերագանգած ձգտումը դեսպի բնությունը՝ փոխում է շնչըում տեղադրված սննյակի իմաստը: Սա իր շրջապատի նկատմամբ այլևս կզզիացած մի խորանարդ չէ, այլ դեսպի տարածությունը բացվող մի խորան, որը բնակվող անհատը իր դեմ ծավալվող բնապատկերի մտան չ: Այստեղից հետեւածում է ապակենպատման նշանակությունը, որը լոկ պատահհականություն չէ, այլ պատճության խորքից ընթացող, շարունակ ընդլայնվող պատռհանների զարգացում:

Պատռհանը միշնադարյան հասկացողություն էր, երբ պատը կառուցվածքներում զերազանցապես իշխող տարր էր, իսկ լուսամթամբները՝ դեպի բնությունը վերագանալու ռենհանույան ձգտումի պահանջ: Այս պահանջը սկիզբ է առնում նկարչության մեջ՝ Զորիդոնների միջոցով: Ինչպես տեսանք,

շենքերի ապակենպատումը սկիբը է առնում ՀԻՀ դարում, իսկ ձարսաբազե-  
տության մեջ ՀՀ դարում («Ֆագուլիներեւ», 1911, «Բառաշաբաթ», Դևուան,  
1925—26):

Քափանցիկության հատկությանը համապար, ապակին ունի հակառակ  
հատկանիշը՝ արտացըլումը: Այս հատկանիշը հատուկ է հայելուն, ուստի դըր-  
ոից դիտված ապակեպատ շենքի ճակատները բոլորովին այլ պատկեր մն  
ստանում՝ մակերեսների վրա շրջապատը կրկնապատկվում է, լույսի խաղերի  
հետմանը շարունակ փափոխվում է, մերթ վառվում, մերթ հանդշում: Եւրջը  
ժամանակ կլանքը կենդանանում է կրկնակի արտացըլումով՝ հարստանում,  
շարունակ այլափոխվում և կապվում շրջապատի հետ, որպես ենթարկվող  
տարր Հետևաբար շենքի շրջապատի կապը «ունկնդրամային» բնույթ է կրում:  
Ժարտարապեսի այդպիսի դիրքորոշումը՝ դեմ որպես ստեղծագործողի մաս-  
եակցություն, կրավորակուն է:

Ուրեմն՝ Պատարելիների Ալուրելյան պատճեշի երկայնքին կառուցած  
«բազմադորժածնելի» շենքի բազմակերպար հորինվածքի առաջին շերտը կապ է  
մայթի հետ, երկրորդը՝ իր ապակենպատով (որը պատճենի նույն բարձրությունն  
ունի) անտարբերություն է պատմական իրողության հանդեպ, և, վերջապես,  
վերսի ծավալը շատ աղատ և նոյն պլաստիկ ձևակերտում է:

Անցյալի անտեսումը, անշատչա, նախադժուների կողմից ցուցաբերած վե-  
րաբերությունը է և եթե ընդհանրացնենք՝ նշանակում է շրջապատից, այսինքն՝  
արտաքին իրականությունից անկախ լինելը: Հետևաբար սարվեստի դրույթ  
դառնում է վերացական, ինչպես արդին առաջին առաջինք, ինքնանպատակ, անկախ  
առարկա և կորցնում իր քաղաքաշինական նշանակությունը:

\* \* \*

Աշարտարապետության և նկարչության միջև պլաստիկան միշտնելյալ է»  
և իր էությամբ ստարածության մեջ առնշում է հարտարապետությանը, իսկ  
բարձրացանդակով մոտենում է նկարչական երեակայական աշխարհինը<sup>1</sup>: Ըն-  
դարձակելով Վ. Շոֆմանի այս միտքը, կարելի է պարզել դեպի անաղարա-  
ծենքին վերադառնալու արդի արդենատի ձգտումը, որը նշանակում է վերապես  
ծովովովի արտահայտվելու անմիշականությունը և մոտենալ պարզ ձեւերի  
կենսաբանական կազմին:

Այս ձգտումը բնորոշ եղավ հարյուր արված՝ արդի արվեստի քնաշրջման  
ընթացքում, իմպրեսիոնիստներից և էքսպրեսիոնիստներից սկսած մինչև կու-  
բիզմ, ֆուտորիզմ: Եթե մինչ այդ արվեստը նման էր մարդու համար անհա-  
սանելի լինելիության իդեալին, այնուհետև դարձավ մարդու, առարկաների

<sup>1</sup> W. Hofmann, La scultura del XX secolo, Bari, 1962.

և եղելությունների ճանաչման ուղիւ։ Չեզ սոսկ դեղագիտական բնույթ չկրկց։ Արվեստի շարանակ պարզեցման ընթացքը նմանվեց նյութի հիմնական բաղադրիչը փնտրելու գիտական ձգտություն և արտարապետությունը հասավ՝ զծերին (Մոնղոլիան), մակերևներին (Իէ Ստիլ) և ծավալներին (Բառուառու)։ Լր կորրյուզիկի պորտիկմը (անգղակականթյունը) ի վերջո չսթեալզմ էր, իսկ Դուռսովի երկրաշափական զուտ ձևերի նշանաբանությունը (սիմբոլիզմ)՝ անցյալի թափանձալի կարուտ (ճարտարապետության մջան լը Դյու, Բուլի)։ Մակայն ինչպես առումից այն կողմ բացվեց մի այլ անհուն ափեղերը, արդպես էլ արդի ճարտարապետության առաջ բացվեց միշտ զարգացող և ընդլայնվող աշխարհ։ Ավելորդ է նոր պարթևնեռներ ապասել կամ անցյալի բաղմանըներով ուղղու։ Կարմորը նոր աշխարհն արտաշայտեն է, որը անցյալը միշտ առկա է և նրա հանդեպ ունենալիք մեր վերաբերմունքը դործոն է լինելու Ուրեմն որևոր է ունել դիրքորոշումից իւսույն շտալ և շնանգն ուղղորդաժային միջոցառումների։

Արդի ճարտարապետության բնաշրջումը բնորոշելու համար կարելի է նկատի առնել ոլլաստիկ կերպարներում կատարված պարզեցման ընթացքը։ այն, որ մշակված ձևը վերածվեց մարմնացած տարածական նզելության, և կենդանի կերպարը, կամ առարկան ձևակերպվեց հնարյած ձևական դյուաների միջոցով։ Արվեստագիտը այս դյուաները կերպարանափոխելով հնթարկեց անհատականացման ընթացքին և հայտավ արտահայտելի անաղարա նախաձեկն՝ իր կազմում ներփակ հիմնական կերպարներով։ մեկը՝ որպես ոչ տարբերված ինքնամփոփ կերպար, մյուսը՝ որպես ներքին կազմը ցուցաբերող կառույց և դեպի տարածությունը նյուզավորված ձև։ Այս միտքը պարզելու, պատկերացնելու համար կարելի է մի անքե վերցնել, երբ այն կանաչ է, և տեսնել նրա ներքին կազմը (կմախարը) ու նրա հետ հյուսված մաշկը որպես տերևի ամրողական ու ինքնամփոփ ձև, իսկ թառամած վիճակում նկատել ատարածության մեջ նյուզավորված կառույցը։ Նույնը կարելի է նշել, նկատի առնելով քարի կամ մետաղների ներքին կազմը՝ մեկը առնելով որպես ամրոշական ծավալ, իսկ մյուսը՝ ներքին շերտավորումների և մասնիկների կազմ։

Բնության նման՝ նախաձեր արվեստագիտի կողմից բաժանվեց կառույցի և ինքնամփոփ ձևի մեջ։ Առաջին մոտեցմամբ առնդժագործնեցին Բրանկուլի և ավելի ուշ Արագ և Մուսի, իսկ երկրորդ մոտեցմամբ՝ Գոնձալես արվեստագիտները։ Հետեւար, հասկանալի է դառնում արդի քանդակագործների ցուցաբերած հնտարաբրությունը լորացած մյուղերի, արմատների, կամ որոշ ճարտարապետների (լ. ներվի) հնտարաբրությունը հանգել բջիջների ներքին կաղմը։

Պարզ է, որ արդի արվեստի այս մոտեցումը հնուու է հունականի և վերածնեղի հասկացողությանից։ Պաստկան հասկացողությամբ ձևը անխախտելի

է, այն վերլուծման ննիտարկելու պահանջը արդի զիտության զարգացման հետեւնքը եղավ՝ Ք. Պալմինորից հետոց կարող ենք ստեղայն նկատել, որ ինչպես կենտրոնական և բազմակենտրոն հնաւանկարչությունը, այնպես էլ էվլիլիդյան և ոիմանյան նրկարաշափություններն իրար չեն ժմառում, այլ մեկը դրանցից դառնում է ավելի բնդարձակ տարածության մեկնարանության ավելի սահմանափակ հասկացողություն։ «Տարածությունը ունի Ծիծանի մետրականությունը, որը նշանակում է, թե մի կենախ ամենից փոքր շրջապատում կարելի է էվլիլիդյան նրկարաշափությունը կիրառելի դարձնել։ Այնշատայնյան այս մեկնարանությունը նման է արզի արվեստի ընդլայնված Հորիզոննից հետևած տարածածակրագան աշխարհայնցողությանը։ Արվեստագիտը, ցանկանալով խորանուի լինել նյութի կազմավորման դադանիքների մեջ, քանդում է ձեր, իմաստավորում նյութի և մեկնարանում նրա կազմավորման ընթացքը, փրանտում տարրեր կերպարների խորքում նախած նախաճածը և փորձում վերակազմել ընության ուժերին ենթակա և նրանց աղղեցություններից հետևած նյութի տարրեր ճեղավորումները, թափանցում էական ճշմարտության խորքը և փորձում վերակառուցել նոր ճեղը։

Նյութի կազմավորման օրենքները նման են կառուցողական համակարգերին, հետևաբար կարելի է նրանց ընդհանրացնել և դիտել այն որպես տարածությունը կազմակերպելու մոտեցում։

Ուստի, արդի արվեստի հետարբերությունը կենտրոնացած երկու ավյալների շուրջը՝ նյութի կերպարի և նրա աճին ուղղությունը ավող ներքին ուժերի շառավիղներին, որոնց ամբողջությունը դառնում է նյութը տարածության մեջ դարգացնելու հետապոր համակարգը։

Բազմաշափ տարածությունը, առարկաների ներքին կազմը և շարժականությունը արդի նարատարապետության ներք տվյալներն են։

Պ. Ֆրանկակատելիի խոսքերով՝ տարածությունը մարդու զգայություններին և հասարակական արժեքների հետ կապված՝ մի «կառուցվածք» է։ Հեղինակն իր այս միտքը հիմնավորելու համար օրինակ է բերում, թե ինչպես Զինաստանում տարածության հասկացողությունը կապված է «ժամանակների և եղանակների հետ», ուստի և նրանց փոփոխական բնույթի, որը պարբերաբար պվերակազմվում է։ Վերականգնելով ուրկների և երկրի միասնությունը<sup>1</sup>։

Եվրոպական աշխարհայացքը, կորցնելով միշնադարի կրոնական մեկնարանությունը, հիմնվեց Զ. Բրունոյի՝ տիեզերքի անսահմանության զարգափարի և այժմ վ. Համբարձումյանի՝ շարունակ վերակազմվող աշխարհների զարգափարների վրա։ Զինական «պարբերաբար» հաշորդվող եղանակների նակատագրական ընթացքի կրավորական հասկացողությանը եվրոպացին

<sup>1</sup> P. Francastel, L'arte e la civiltà moderna, Milano, 1959.

Հակագրում է տարածության մեջ շարունակ ընդլայնվելու ներգործական դիրքորոշումը: Հետևաբար, ձեր ժավազմելուց բնորոշ է դեպի տարածությունը ձգությունուն առնեցին: Տարածության հանդիպ բացվող ձեզ նշանաբանվում է ոչ միայն մարմին ստացած հատվածներով, այլ հատկապես այդ բազմակողման բազմաթիվ տարրերի միջև նղած դատարկ շերտերի արժնքավորությունների միջացով: Քանդակը ձևավորվում է լույսի և սավերի խաղերով, իմաստավորությունը են մարմին ունեցող մասնը և նրանց միջև նղած դատարկությունը: Իրար մեջ հյուսված երկու տարրերի ժամանակին և դատարկության կերպով կառուցված մարմին այսպես է կազմում:

Այսօր, երբ ձարարապնատական ձեմի ամբողջական կազմից անջատում ու արտաձգում ենք հիմնական բազմադրիչները, ներքինից արտարերում են նրա էություն մեջ պարփակված կազմը, կոտրում ենք կեղծը և կլանք տալիս ներքին տարրերին: Կորիզը, այսինքն՝ նախաձեզ, լինելով կենսաբանական հատկություններով օժանակած մարմին, իր մեջ պարունակում է ժառանգականունեցանելի բարդ և խորհրդավոր տվյալներ, որոնք զարգանում են աշխարհագրական, հասարակական և մշակութային որոշ պայմանների միջավայրությունը: Այդպիս, երկարածիդ հատակագծով և մուտքին հանդիպակաց խորակով: Միջնորդականի շուրջ տայրածվող ժողովրդական տան նախատիպի զարդացման ընթացքում զլինավոր տառանցքին երկայնքին տեղադրվեցին տան միակ սրահի ներքին բաժանումները՝ սյունազարդ նախաճայտք, մուտք և մնակարոն (թիրինա): Կրթատեսի բնակելի տունը կազմված էր նույնագնա մի սրահից, բայց նրա մակերեսը ավելի մոտ էր քառակուսուն: Հետագա զարգացումը ընթացական ներքին բաժանումների կարգով, այլ ժամանակակից որոշ բազմացումների համակարգով, դասավարկելով զլինավոր բժիշկի շուրջը, կամ երկու հարկերի վրա: Այս ձեռվէ կազմվեցին միկենյան, ինչպես և ուրարտական պալատների բարդ օրդանիովները:

Փակ տարածությունը ավելի փոքր, ինչպես և ժամանակակից որոշակացությամբ ու ամբողջական կազմով անելու ձգությունը ընթացական օրենքների զարգացման հիման վրա: Տարածության մեջ ձևավագությունը երկու այս մստեցումները կարելի է պատկերացնել որպես նույն կենտրոնից մեկնող, բայց հակառակ ուղղություններով ընթացող և տարածությունը պայմանավորող կառուցվածքների հիմնական կերպարներ:

Նախաձեզ զարգացման համար մի այլ կարենոր տվյալ է լույսը: Միջնորդականի երկարածիդ բնակելի տունը բացվում է երկար առանցքով տեղադրված մուտքի ուղղությամբ, իսկ կրթական տան մեջ մուտքը բացվում է բառակուսի մի անկյան ուղղությամբ, որ հետագայում բացվեց ամբողջ նակատի երկայնքին՝ սրակեալ բնապատճերին հանդիպակաց բնակելի խորց: Հայ շինականի տունը բացվում էր դեպի երկինք՝ ուղղահայաց դիրքորոշմաբ:

Այս ժավալների հետագա զարգացումը կատարվեց լուսի ուղղությամբ, իսկ Հակատների բացվածքների զիրբորշամբ՝ ըստ ավալ մողղվողի ոգու զրա զերիշխառ ուղղաձիգ կամ Հորինդոնական ուղղություններով:

Այսօր, անշուշտ, նախաճաների վերամշակման հարցը բննենիս, զմքար է տանը, թե որ դեպքում սանդաղործողը իր բնարարիցուն է կատարելի Մի բան հաստատ է, սակայն, որ մեր նկարազրած երեք տների նախատիպերը օգտագործվում են բոլոր երկրներում, բայց մշակումների տարրերը համագողությունները կախում ունեն երկրի մշակույթից և հարաբերական զգայնությունից: Մեր միտքը պարզելու համար բիբլիական համեյալ օրինակը նապուի Սևկոնդիլիանո թաղամասի կառուցապատման մրցանակարաշխությանը՝ հարաբարապետներ Պ. Պորտոգեզիի, Ա. Բիբրափիի և Վ. Զիլիուտափի նախագծում (1865) հիմք է ընդունվել որպես բնակելի բջիջ՝ տարրական ծավալը: Բջիջները կազմված են ոչորս քառանկյուն ծավալներից, ինչպես բացառում են հեղինակները<sup>1</sup>, սրանց չափը շարունակ ընդլայնվում է, որպեսզի ամեան ընթացքը երկրաշափական լնդվով՝ արաւանայտված լինի: Ըստ այդ հեղինակների, շրջապատի հետ հաստատվելիք կապը պառաջնալու է ծավալների՝ տարրերը բազկացությունների շնորհիվ և նրանց՝ հետ ու առաջ զասավորումներով (առա անցյալի թեմոն):

Միավոր և փոխադարձ տարրերի հարակցությունների և փոխանցումների տարրեր հարգաբանների միջոցով նախագողները շարժվում են, կարծես, է. Դուրսայի բամբավորումներից թվաբանական տեսության զծովն նորությունը, ինչպես կտևսնենք հաջորդ օրինակում, շնորհի ժամանակի անման ոկզրումներն է, որը ընթանում է կենսաբանական օրենքների նման:

Ծարտարապետական ձևը մարդու սրտում առկա տիեզերքի տեսիլը է: Այսօրվա մեր հասկացողությունը հիմնված է ժամանակի և ծավալի փոխահարաբերությունների վրա, իսկ մարդու ներաշխարհը լուսում է: Եվ ստեղ այժմ եական ստեղծագործությունները ինչքան էլ հետաքրքրական են, թողնում են ժամանակավոր լինենքու ապավորություն: Հարանակ պահանջվում են նոր մարքը, նոր ձևեր, նոր առաջարկներ:

Խոսում ենք ճարտարապետական Հորինվածքների բնարենքական, զեղագիտական, զարդարական հասկանիշների շուրջ, բայց դրանք ձևի մակերեսը շոշափող հատկանիշներ են: Բուն զաղանիբը նստած է տների նախաձեւերի խորքում կամ շրջապատի վրա գերիշխող Պարթենոնի վսեմ կերպարի մեջ: Երեք երրորդական ուժերը զեր հաշտ էին մարդկանց հետ, ճարտարապետին ժանոթ էին այդ զաղանիբները:

Տորինո «Պիտագորա» աշտարակների (1966) նախադողներ Ս. Յ. Սովանոն և Պ. Լուցցիի<sup>2</sup> նկա են այն համոզմունքից, որ բնակելի տան ֆունկցիոնալ

<sup>1</sup> „L'Architettura“, № 121, 1965.

<sup>2</sup> „L'Architettura“, № 131, 1965, p. 286—291.

ծրագրերի ընտրությունը կարելի է դասավորներ բնական օրգանիզմների աճ-ման ընթացքի համանությամբ:

Ցույնկցիոնալ ծրագրերի դասավորումը ընթանալու է բնական օրգանիզմի նման, ամենից կարև հեռավորության, այսինքն՝ ուղղաձիգ հաղորդակցությունների երկայնքով, և հաջորդաբար կազմվող ծավալները ուղղվելու են դեպի օդավետ, արևելող և ազատ տարածությունը: Ծարտարադիտական հորինվածքը ստեղծվելու է կենսաբանական միջավայրում անհելու օրենքների հիման վրա: Ստեղծագործվող կերպարը կազմվելու և մարմին է առնելու ձևի ու կառուցյի հետ մեկտեղ, տարածության մեջ անող մի հսկա բույսի նման: Այս ընթացքը կատարվելու է բնության կանոնների հիման վրա, ըստ որում՝ նվազագույն միջոցներով բարձրագույն արտադրողականության հասնելու միտումով, Այդպիսով, բացվում է ձանապարհ դեպի արդյունաբերական շինարարությունը: Ծարտարադիտի նորուագործին համակերպ՝ գործարանային արտադրությունը կարող է լավագույն միջոց հանդիսանալ ձեզ, կառուցքը, բովանդակությունը և կառուցելու համակարգը իրար համեմբաշխելու դորժում:

Տորինոյի երկու ճարտարապետների առաջարկած այս մոտեցումը կարելի է դիտնել որպես ճարտարապետական հորինվածքների (բնական օրգանիզմների ձևակերտման) նորդարվիճան մոտեցում:

Հատկանալի է, որ այս առաջարկը առդում է ոչ միայն ճարտարապետության, այլ հատկապես քաղաքաշինության վրա: Բնակելի թաղամասների շարադրաներում նորուագործության վարչական շնչերի դասավորումները, լինեն շարքավորված, խմբելու միջուկը, մինչույնն է՝ ծավալները իրար հանդիպ անտարբեր են մնալու, որովհետև նրանցում չի առաջանալու տարածության մեջ դարդանալու ծավալների հաղորդակցություն: Այս հատկանիշները բնորոշվում են ազատ, բայց ներքին կազմավորումների և շինարարական ընդհանուր համակարգի հարակցությամբ, խմբավորված ծառերի և ոչ թե երկրաշափական զուտ ծավալների դասավորությամբ, որն ավելի զեղաղադրական մոտեցում է, քան օրգանական:

Ինչպես հայտնի է, ափամերին նախագծումը հիմնված է նախապես մուածված կառուցվածքների կերպարների վրա, ուր մշակված ծավալը բաժանվում է նորուագույն տարրերի և անցնում գործարանային արտադրության: Հետազոտում շնչերը չի կառուցվելու, այլ անզում հավաքվելու են նրա կազմը վերականգնող տարրերը: Այդպիսով, ճարտարապետական ձեզ չի ստեղծվելու, այլ հետեւաք է լինելու շինարարական ինչ-որ ընթացքի: Տորինոյի ճարտարապետների առաջարկը՝ միացնել ստեղծագործական աղատությունը և դորժարանային արտադրությունը, հիմնվում է շատ ավելի կենսական և ապագա ունեցող մի հշմարտության վրա, այն է՝ ճարտարապետական նորակերտ օրգանիզմների հիմքում ընկած հնարավորությունների ներդաշնակ զար-

դացումը պիտի ընթանա բնական կանոնների հիման վրա։ Ըստ որում՝ կարելի է այս նպատակին հատնել աւրատրատի շուրջը համախմբելով աւրատրատգետներին, շինարարներին և արդյունաբերության մտանազնուներին։

Վերը նշված ֆունկցիոնալ պահեցների ուղղութայց զատավորումը չի կարելի արդարացնել խոացման պատճառքություններով, որովհետ հսկայաբերձ կառուցվածքների երևոյթը կարգած է բազարների խառնաշփոթ աճման հետ, ուր բազարն այն սահմանափակ նրեւոյթ չէ ու միշտ ավելի է կազմում տեղանքի, հետեւարար՝ երկրի հետ Տնտեսական, արդյունաբերական և տպասարկումների դրժունությունը բաշխված է երկրի ամբողջ տարածության վրա։ Երկիրը պատված է երթևեկությունների, հազորգակցությունների խոր ցանցով, ուր ամեն մի հանդուց ներկայացնում է մարդու գործունության իրացման կետեր, որոնք բնելուների նման ունեն իրենց ազդեցունուների և հակառակեցությունների շառավիրուս։

Բնենուների ծավալային կերպավորումը սահմանված է նրանց անման վրա ազդող ուժերի առընթերաշափերի միջոցով։ Աղդող ուժերի հետեւերներից մեկը աշտարակածն առերև են, որոնց առկայությունը հին բազարներում մարմնացնում են քաղաքի կազմի արագ զարգացումը, հեղաշրջումները։ Մյուս կողմից, պետք է նկատել, որ այդ հակառակ բազարներն անցյալի բաղարակիթությունների հավասարակշռված կազմն են, ուր հակայարներձ կառուցվածքը կարող է արարածայնություն առաջացնել։

Չեք որպես հեղափոխիչ երևոյթի կարող է խորթ լինել, որովհետև եթե այն արդարացվում է ապագա զարգացումների հեռատեսիլ առկայությամբ, առայ պետք չէ մոռանալ, որ անցյալի հետ կազը կամաց-կամաց վիրահատություն է իր իրավունքները։

Այս հանգամանքը նկատի ունենալով, առանձննը Միլանում իրազործված «Էլեկտրա» աշտարակը և «Պիրելլի» երկնարքները։

Միլանի Գումարից ոչ շատ հեռու, վելասկայի հրապարակում բարձրանում է 27 հարկանի, հրապարակի անունով կոշված աշտարակը։ Ներքին տեղաշխատումը հետեւյալն է՝ նկուղային հարկերում գարստներ և արհեստանոցներ, առաջին հարկում խանութներ, մինչև 11-րդ հարկը աշխատասենյակներ, ասպա յոթ հարկ բնակարաններ իրենց աշխատասենյակներով ու վերջին երկու հարկերում՝ երկնարկանի բնակարաններ։

Քառանկյունի հատակագծով, սնկի նմանությամբ կառուցված այս շենքը 19-րդ հարկից հետո ալաձիգ իր ընթացքը ընդհատում է և հակա զիլին նման ամբողջ ծավալով ընդլայնվում։ Սավալը վերագտնում է հավասարակշռող շափը, վերապրում Մֆորցաների դոլյանի ֆիլարետյան աշտարակի կազմում պարփակված պատմական նշանաբուժությունը։

Երկնաքերը դրսից կապված է Երկաթրետունն ջղուտ սյուներով: Հարկերի առանց հեծանների ծածկերը միակազմ են սյունների հետ, վերելակների հորը աշխատում է որպես հիմքերում խարսխութ ուղղահայաց, հսկա աղաւա հենակ (մարտ. Դ. Ալբիուս Դանուլով):

Տակատներում, ջերից կազմված խիստ բաժանումների միջև լուսամուտների շարադրանքը ազատ է: Պանելների և բացվածքների հաղորդականությունը նկարչական է և նման Միլանի հին տների ճակատների շարադրանքներին: Անցյալի աների հետ վերադառնված այս կապը հաստատված ներգաշնակություն է:

Առաջին երկաթրետունն կառուցված աշտարակներից Միև վահեգիր Ռուի Զիկագոյի ուղարմանտորի քնակարաններուն են (1969) և Միլանի ԲԲՊԸ (Բելգիոյուր, Բանֆի, Գլուխաստանի, Ռուսիուր) ճարտարապետների ոչելակա» աշտարակը (1957): Միևն իր վերը նշված շենքում պահպանեց պողպատելառուցված դասավորված համակարգը, փակ, բայց իր մեջ հոսուն մի համակարգ: Առաջին մոտեցումով՝ շենքի ընդհանուր ծավալը կառուցված է շափերի համեմատությունների վրա ու հավատարիմ իր համոզման՝ «նվազեցվածը դեռ շատ է»: Միևը երկաթրետունն բաց կառուցը վերածել է հիմնականին: Իսկ ԲԲՊԸ խմբի համար կրող համակարգը միաձույլ է: Հետեւարար, արտաքինապեսական ձևը չի դարպանում կրող համակարգի երկայնքով, այլ կառուցի հետ հօրինվում է որպես առանձնահատկություններով ամբողջացած անիսախա միասնություն:

Մենք կարծում ենք, որ «Վելասկա» աշտարակի ճարտարապետական հորինվածքը քանդակացին է, իսկ ճակատների բաց և իսուզ մակերեսների շարադրանքը՝ նկարչական: Կառուցի հասկացողությունը բխում է, կարծես, գոթականից (Դուոմոն հեռու չէ): Ճակատներն իրենց լուսաստվերային դղայնությամբ և քաղաքի աների ճակատներից դեպի վեր սլացող ծավալը ընդլայնվում է, զգաստանում, փնտրում իր շափը և կապվում քաղաքի տանիքների հետ:

Նման դաշտունի տափակ շեղըի «Պիրելլի» երկնաքերը (1960) սլանում է դեպի երկինք, մարմնացնելով տեխնիկական, ֆունկցիոնալ շինարարական մի իրադություն: Հեղինակները փնտրում են ճշմարիտ ձևը, որը առաջանալու է «ոչ թն պատմական դրդումներից», այլ «կառուցների ուսումնասիրություններից, նոր գյուտերից, ճշգրտության և հիմնականի պահանջից, արտահայտչականությունից», «պատրանքայնությունից»:

Եվրոպայում, մի կողմ թողած տարրեր ամերիկանիզմները, որոնք հետաքրքրություն շնորհուածենում, ճարտարապետը փնտրում է ինքնուրույն ձև, ինչպես օրինակ՝ ճարտարապետ Հենրիխի «Ֆենիկս» երկնաքերը (Մայնի Ֆրանկֆուրտ), կազմված է իրարից քիչ շեղված, ոչ հավասար բարձրություններով երեք հսկա բյուրեղյա ծավալներից: Իրար միացված այդ երեք հսկաները կարծես մի երազ են ապրում:

Ապա դաշիս է «Վելասկո» աշխարհական, որը Միլանում կառուցված աշխարհականը մեջ մինչ օրս մնում է ամենից ավելի միլանցին և ինչպես Ա. Սամոնան է ասում՝ սլանում է գեղի վեր, «Ետք թագավորացնելով Միլանի աները»: Զ. Պոնախն, որ «Պիրելին» երկնարերի գլխավոր հեղինակն է, իր կառուցվածքը արգարացնում է որպես արդի մարզու գործունեության, աշխատանքի կազմակերպության և միլանցու «ազգու ու կորովի իրողության անեղա արտահայտություն»:

Չուր ձևակերպության անսակենտից, Պոնախն, շընդունելով անցյալի ժառանգությունը, հիմնվում է անձնական փորձի վրա:

Անցյալի մշակույթի և առկա միջավայրի անբաժանելի ամբողջությանը իրակեկ ճարտարապետը հին բազաքանում շատ մեծ նրբամտությամբ և խնամքով պետք է տեղազրի նոր կառուցվածքը: Անշուշտ դա չի նշանակում, թե ձեակերտող միտքը ենթակա է լինելու սոսկ շրջապատ ներազեցությանը: Կերպարը ստեղծագործողի ոգու խորքից է բխունու, իսկ ճարտարապետական ինչ մշակումներով է ներդաշնակվելու հիմնությունը շրջապատին, դա կախում ունի ոչ միայն կերպարի զգալիությունից, այլև կորուպից: Ճարտարապետները Զ. Միկելուչիի Պիտարյանի Մակարանը (1950), Ֆիրենցի խուս չողության արկղը (1958), ճարտարապետ Ֆ. Ալբինիի սր. Լորենցո Ակնդեցու թանգարանը (1957) այս թեմայով ներկայացված տարբեր առաջարկներ են:

Միկելուչիի վերը նշված երկու շնորհրում գոյություն ունի մի հակառակություն՝ արտարինով նրանք համեստարեն կառվում են պատմական միջավայրին, իսկ ներքինում, ուր ճարտարապետն իրեն ավելի ազատ է զուրմ, ստեղծել է կառուցյաների բոլորովին նոր և ազատ ձեեր: Ճարտարապետական հորինվածքի ոյս երկարառությունը նշան չէ սոսկ ստեղծագործողի տարածեարձության, այլ մասամբ բնորոշ է արդի ճարտարապետության նշնամամին: Այս իմաստով նշանակալից են Պ. Լ. Ներվիի խոսքերը. «Եթե մարդկային հասարակությունը երկաթքետուն բարդ կառուցի նման կարդանար համերաշխատության հասնել և նրա գործունեությունները բաժանված լինենին բառ ամեն մի անդամի կարողություններին, շատ բարոյական և նյութական հարցեր կդանեին իրենց ամբողջական լուծումը»:

Սակայն երկաթքետուն կառուցը, ինչպես որևէ այլ կառուցը, բավարար չէ ճարտարապետական ամբողջական ձեեր իր մեջ ամփոփելու համար:

Խշղեն հայտնի է, ճարտարապետական հորինվածքում ձեի և կառուցի բաժանումը սկիզբ առաջ ունենանաի ժամանակ: Այս բաժանումը այսօր դեռ շարունակվում է և շինարարության միշտ ավելի ընդլայնվող արդյունարերացումը բարդացնում է հարցը: Անշուշտ, արգլունաբերական արտադրություն-

<sup>1</sup> „Edilizia Moderna“, 1960, № 71, էջ 35.

Ների մարդում շի կարելի իրուել անցյալի կապերի մասին և որպես օրինատկ պհաքը է նկատի ունենալ տիտային նախագծերի կերպարները, որոնք չեղող են:

Եթե կառույցը դուռ թվաբանական և տնտեսական հաշիվներից ելնի, կերպարը կիրացնի հատկանշող մարմարականությունը և կվերածվի կրող պարզ վանդակի (կմախը): Այս պարագայում արտարարապետը տվյալ շնորհի բոլոր ֆունկցիաները լուծելուց հետո առնենափակվելու է դուռ երկրաշատիական ձեզերի մի խորանարդի մեջ: Շնորհը վերածվելու է բայց կազմակերպված մի ամբողջության, որը, անշուշտ, հասարակական կարգերի հանդեպ ցուցաբերված կիրթ վերաբերունք է, բայց ստոնդատործություն չէ: Այդ խորանարդը, ինչպես՝ նյու-Յորքի Օնթի-ի շնորհը, կամ Կարակասի բնակելի զանդանները առատ են մշակութային բոլոր տվյալներից, ուստի և անցյալի կապերից, նրանք կարելի են մի երկրորդ մյուսը անդափոխել:

Եթե կառույցը օրգանական մարմինների կամ բույսերի կազմից հետեւ, ինչպես՝ ներվիի սրոշ գործերում, այն ժամանակ ստոնդաված կառույցը ինքնարար է: Այս մոտեցումով նախադած շնորհը ապակեպատ վանդակի մեջ է առնված, ինչպես՝ Հոսմի սպորտի պալատը, Տորինոյի աշխատանքի պալատը (Պ. Լ. Ներմի): Պատր կորցնում է իր նշանակությունը և կառույցը հավասարակշռելու դերը: ապակին իր շնորհը բնույթով այլևս կարող է միջամտել:

Ճարտարապետին բարվարար է ձեր ներքինում գործող ուժերի ներփառակցված զգայնություն ունենալը. Նրանց նյութականացված արտահայտումը կարող է ճարտարապետը կատարել: Նմանական՝ անձնական ստոնդագործության ազատուությունը կախում ունի ճարտարապետի ներքին տեսիլքի ուժգնությունից, մնացածը տվյալների ավելի կամ պակաս տրամարանված կազմակերպություն է: Նախագծուումը բոլոր ավյալների խոր գիտակցություն է: Այդ տվյալների հիմնական հարցերից մեկը հենց անցյալի կապն է: Հետեւարար, ճարտարապետը լայն մշակույթի տեր մարդ է, նա մասնագետ չէ սոսկ, այլ անհատականություն:

Ստոնդատործովի անհատականության ուժով պատմական միջավայրում իրագործվելիք ձեռք ստոնդատործելու ընթացքում վերացման է ննիմարկում անցյալում արդեն առարկայացված կերպարներ: Վերացման այդ ընթացքը սրոշ ճարտարապետների մոտ անսանելի է դառնում, որի մեջ կարելի է համոզվել ճարտ. Ի. Գարդելլայի Զեղագեռում կառույցած եկեղեցու (1959) օրինակով: Ի. Գարդելլային շի հասարքքում «ձեր որպես կառույց և կամ հակառակը», այլ «ձեր կառույցինությունը» (Ձ. Կ. Արգան): Զեղադե եկեղեցու հատակադիմում դասական է: Հեղինակը պահանջ չի զգացել նորը հնարել, որովհետեւ դարեր շարտների անփոփոխ մնացած և ժողովրդի կողմից որպես հավատքի տառ կերպար ընդունված հատակագիծը իր մեջ պահպանում է զգացումների

պորությունը: Հարցը այն է, թե ավանդական կերպարների վերացման ընթացքում որ պես է կանգ առնել:

Նոր գաղտականները անցյալը վերածել էին ոմերի և աշխանականն արատաշյուռը էին իրենց առնջածած գեղագիտական լնգվի միջոցավ: Նոր սեսիաների համար հետավանդ ձեռքբը հարժարնցվեցին նորակառույց շնորհրի մակերևաններին:

Ի. Գարզելլայի համար հարտարապետական շարադրանքը ոմիջավայրի կացության ձևակերպված արտահայտությունն է (Ձ. Կ. Արդան), ուստի այն ոճականը, որ կարելի է տեսնել Զատատերեներում (Վենետիկ, 1958) կառուցած տան մեջ, շրջապատից է հետեւած: Ի. Գարզելլայի միայն անցյալի փոխանական կություններով չի բնթանում, այլ աղատ զարգանալով, կրում է պատմական ավալների վերացման հնիթարկած բնթացքի հետքերը, թողնելով, որ ոճեի մտահղացումը տեսանելի լինի (Ձ. Կ. Արդան):

Երր առում ենք անցյալ և խոսում մշակույթի ու միջավայրի մասին, պարզ է դառնում այն հանգամանքը, որ նորակերտ ձեզ ձևակերտված իրականություն է լինելու, հնակում է, որ արդի արվեստը չի հիմնվում ձեռքի քնա՞նակ խագերի վրա և երբ կենցանի արվեստ չ' անում է կյանքից և փորձից հետեւալով: Ուստի կարևորը զեղարվեստագիտի դիրքորոշումն է, և պես է սառչում անությունը մոտենալ այս հարցերին: Այսօր էլ գոյաթյուն ունի ձևականությունը և այն ինչ ասկեց անցյալի արվեստի վերամշակման մասին, կարելի է վերապրել հետեւային:

Երերաշափական մտկերնեների և ծագալների մշակման մեջ կարևոր է պարզությունը, և պիտի զոհել կառուցի խրթին մշակումը կամ ձևական որոշ հանձնիւթյուններ, որպեսզի նարտարապետական շարադրանքը շահի:

Այս մարդում Ի. Գարզելլայի գործերը զուտով, աղջկական, հագաւարակշամպան լինելու օրինակներ են, ինչպես կարելի է տեսնել նրա «Թոքախամազորների հիմանդրանցում» (Ալեսանդրիա, 1936—38), որնակելի տանը մէջ (1952), Խվենայի և Միլանի Սլիվետտիի (1959) համար կառուցած «հետազոտությունների հենարոնում» և այլ գործերում:

Եթե աեխմիկան առաջանում է շնորհարական հարցերին լուծում տալու համար, մարտարապետական հորինվածքն իր հետ բերում է կառուցի կերպարը: Անշուշտ, ձեփ հասկացողությունը, հարտարապետությունը անկախ, մշակումը է նկարչության և քանդակագործության մեջ, ինչպես տեսնիկայի հարցերը գնում են իրենց մեջ ներփակ ինդիրների պարզաբանման ընթացքով:

Պլաստիկ ձևավորումը, որպես տարածական հղելություն, ձեփ և կառուցի ամբողջական երկույթ է Հիովերուոլոխիդական կազմված կը կորրյուդիի «Ֆիլիպա» տաղավարը (Բրյուսեն, 1958), ինչպես և Մարտ Բիլի

«Անհայտ բանարարելով» հուշարձանը, ոչ միայն պլաստիկ ձևերի փորձեր են, այլ նշանաբանում են պլաստիկան ճարտարապետության մեջ՝ Այս նոր ընթացքը հաջողության հասավ, երբ Ռ. Մայարը (1902—1940) միաձնւլց երկաթբրնձունե իսկական շրբանը և սյունը (այստեղից սկսվում է երկաթբրնձունե իսկական շրբանը), իսկ Լու Կորբյուլիի Դոմինոն (1914), փայտե կամ մետաղե համակարգից դուրս չեկավ:

Պլաստիկ հարտարապետության դարդացման հետևանքով, նորակառուց շները ստացավ քաղաքաշինական նոր նշանակություն և այս հանդամանքը կարելի է տեսնել Խառնիություն արտարապետ Զ. Միկելուշիի կառուցած «Առտոստրադա Դել Սուլես» (1964) կեկզեցու հորինվածքում, որը ձևակերտված է որպես այդ հակա մանապարհին կից և այն շարունակող կերպար: Այս օրինակում կարեն մանապարհի ասֆալտի մապավենը որոշ մի կետում թեքվում է իր ուղղությաններից, բարձրանում, որորվում, համեմելով ամենից բարձր կետում տեղադրված խաչին, որպես մանապարհ խաչի ժապավենի ընթացքից առաջացած ներքնի տարածությունը ժամկետած է հիպերռոլորիդ պարարուիդներով:

Հարտարապետությունը շարադրելու նման մոտեցմանը ձևը կերտվում է սուզդություն տվյալ հիմնարկան մտքի՝ տարածության մեջ կատարած աստիճանական դարդացումով, որպես շրջապատի տվյալներից առաջացած պլաստիկ հղություն:

Հարտարապետներին յուրահատուկ զիտական հսկողությունը բավարար է ձևը կերտելու համար: Տրամարանությունը նախապես հաստատված արվյալների նկատմամբ զարգացում է, իսկ խնայողությունը (տնտեսական ավյալ) ընթանում է նվազագույն միջոցներով բարձրագույն արտադրողականությունը հասնելու կանոնավ (բնական կանոն):

Գործարանային արտադրություններում փնտրված էսթետիկ ձևավարար բիում է արտադրված առարկաները մարդկայնացնելու պահանջից: Կառույցը, տորոյալում օգտագործվող բոլոր առարկաները, ճարտարապետության և արդյունաբերության միջանկյալ գործունեությունն են, ուստի այդ առարկաները զուտ արվեստ չեն կարող լինել և այն անսակեար, ըստ որի ֆունկցիային հետեւելու է ձեզ՝ շատ մտկերեսային է:

Թվարանական աշխարհայեցողությունը, ինչպես ասում է է. Կոլերոսը, շաստվածների լնդուն է», իր մեջ պարունակած սրանաստեղծականը՝ երբեք բանաստեղծություն չէ այնպես, ինչպես շափը համաշտփություն չէ, չնայած որ համաշտփությունը իր մեջ արգեն ընդգրկում է շափ:

Այս մտքերից հետևում է, որ հարտարապետությունը ոչ միայն համադրություն է, այլ հատկապես աշխարհայեցողություն: Ուստի ստեղծված ամեն մի կերպար իր մեջ կրում է կերպարը և կառուցվածքը:

Այն միտքը, ըստ որի առևտնիկան պիտի տևանել կանգնած նոր ձեւը ստեղծման առաջավոր դիրքում, ապա՝ ուղնալ հետեւցնել, թե արդիական ձեւը կառուցման նոր եղանակներից հետեւ ներվելու՝ նշանակում է Հարցի հիմնականը անտեսնել: Այս միտքը առելլ նույնին է, թե առնենք՝ նրա մարդու առաջին անգամ հողի մեջ ամբացրեց ուղղաձիգ դիրքով երկու գերաններ, որոնց վրա դեռհեղեց հօրիզոնական մի այլ զերան և ստեղծեց արիդիախիկ կառուցման համակարգը, դրանից հետեւ Պարմենոնը: Մենք կարող ենք պարզապես ասել, որ Պարմենոնը տիրիլիտիկ համակարգով կառուցված տաճարը է և ոչ թի համակարգից հետեւած հարտարապետություն:

Ամեն անդամ, երբ հարտարապետը միջամտում է զուա արդյունաբարական կառուցմածքների նախագծմանը՝ այլափոխում է շենքի կառույցի երպարը: Օրինակ՝ Պատովայի ոմետազյա պրոֆիլների սպահատը (հարտարապետներ Ա. Մանչիարոտտի և Բ. Մորասսուստի) կամ Տորինոյի «Պիրելի» գործարանը (հարտարապետ Զ. Վալտովինստ):

Անշուշա, այս բոլորը չեն նշանակում, թի հարտարապետը պիտի անտեսի կառուցելու տարրեր համակարգերը, այլ ընդհակառակը առաջացած միտքը այդ համակարգերի միջոցով պիտի մարմին ստանա և կապվի (բնության որևելների գործածությամբ): Հողին նորակառույց շենքում բնական և պատճենական ուժերը հավասարակշռվում են կրող ցանցի հյուսվածքներում, իսկ շափմիավորների ընդհանրացմամբ՝ կապվում շրջապատին:

Կրեմոնայի Ինժ. վարչության շենքում (հարտարապետ Ֆ. Ալբինի, 1954), տարածության մեջ բարձրացող նուրբ կառույցը համապար ժամաների է բաժանված, նրանց մակերեսներում կանոնակիր կերպով անդադրված են բաց և հարթ հատվածները: Ենքնի շաբադրանքում այս տարրերի կշռական հաջորդականությունը կրկնում է բազարի Մկրտարանի և Կաթողիկեի (XII դար) ճարտարապետության մեջ առկա հին մի ճշմարտությունը: Կարծիք նորակառույց և հնականը շենքերի միջև ծավալվող տարածության մեջ իդեալ մի ցանց է ձգված, կերտված հնի և նորի միջև նույն համացողությամբ և նույն դպայնությամբ:

Հարտարապետ Ա. Մամոնայի Մեսսինայում կառուցած «Պալացցատայի» ԽՍՊՍ վարչական շենքում (1959), Հաջորդաբար Վենետիկում իրագործած մի այլ շենքում տարրերի բնտրություն չի կատարելում: Համակարգը կազմու ամեն մի տարր հանգնելու գալիք իր բնույթը պահպանելով: Ստացված կերպարը գուտ զգայական վայելը չէ, այլ կառույցին մասնակից ներմիություն: Ենքնի ամեն մի տարրը գործառնության մեջ է ու պետք է վավերացնի ամբողջությանը տված իր մասնակցությունը:

զանգվածներ, որոնք իրենց հերթին բաժանվելու հն տարրեր ափակերի: Այդ զանգվածները պարունակելու հն որոշակի հաստատություններ, ինչպիսիք են, զբանական կամ տնտեսական կամ ժամանեցի կենտրոնները: Չունենալով շատ մասնակի բնույթի, հանդես են զայռու բաղարի սահմաններում հաղորդակցություններից առաջցած հանգույցներին առընթեր:

Վերցնենք, օրինակ, ճարտ. Մ. Ֆիորենտինոյի (1962) նախազիմբ' Հոռոմ: Գրենեսատինա և Պորտոնաշչիո շրջաններով անցնող սպասարկող առանցքին (asse attrezzato) առընթեր այդ կենտրոնն ունի հանելայի կազմը: Երկու և երեք հարկանի 18—20—24 մ լայնություն ունեցող և ծայրամասերում իրար խաչված ցածր ծավալները տեղադրված են երեսակայական մի բառանկյունու հակագիր մասերում, իսկ մյուս երկու կտորմերում անդադրված են տուրիբինաձև հորինվածքով բազմահարկ, 21 մ լայնությամբ երկարածիղ ծավալներ: Ազատ մնացած երկու հատվածներում նախատեսված են նուահարկ, մոտ 50.50 մակերեսով հարթակներ, Արագրնեաց սպասարկող մանափառարշար, ինչպես և զանգվածը շրջապատող մյուս անուագարները կապված են տարրեր հարկերի բարձրությամբ շնչները սպասարկող հանգույցներին կնտերին: Արոշ հարկերում նախատեսված են մոտ 1000 մերեսաների տարողությամբ կանգնատեղեր: Երկարածիղ ծավալները ներդին բաժանումներով հարելի է հատկացնել զրասենակների, տարրեր ափակի բնակարանների (մեկ և երկհարկանի) հյուրանոցների, իսկ բառակուսի մեծ ծավալները՝ կինոթատրոններ, ծամեկած շուկայի (supermarket), սրճարաններ և այլն: Չորս ուղղությունների երկայնքով, վերը նկարագրված երկու երկարածիղ (շամբ և բաղմահարկ) շնչների խաչման հանգույցներում անդադրված է ուղղահայաց երթևեկությունը, որն իր հերթին կուպված է ներկացնելու կանոնատեսներին, և արաւրին մուտքերի միջոցով՝ հանապարհներին: Կենսարունի տուրիբինաձև զանգվածը անդադրված է բաղարի այդ շրջանում գործող ուժերից կազմված ենթակառուցների կնտում: Կենտրոնի ընդհանուր հորինվածքը հիմնված է երկու ավլաների վրա: 1) անփոփոխ տարրեր, որոնք ձևավորելու են տարածությունը (ծավալային լուծում) և հատկանշելու են ծավալներում կատարվելիք գործողությունները (ֆունկցիոնալ լուծում), 2) փոփոխվող տարրեր՝ ծավալների բաղմակողմանի օգտագործում՝ դրասենյակ, վարչական կենտրոններ, բնակարաններ և այլն:

Նորակառուց վարչա-տնտեսական կենտրոնները տեղադրվելու են սպասարկման առանցքներին կից, որպեսողի բաղարի երթևեկության ամրող ցանցի մի մասը կազմեն: Միակնարուն, բաղարները այնու անբավարար են լինելու, և ամեն մի նոր կենտրոն բաղարը բնորոշելու է որպես բաղմակենտրոն հորինվածք, ուր խմբավորելու է բոլոր գործունեությունների ղեկավարումը:

<sup>1</sup> „Casabella-Continuità“, № 261, 1962.

Արվարձանները կորցնելու հն մինչև օրս ունեցած ախտը պատկերը, գաղաքական հն բնակվածու, արդյունաբերության, առևտության խառնախնթոր, վատասոզք շրջաններ լինելուց: Արվարձանները չեն լինելու բաղադրի շուրջ աեղադրված և կենտրոնավ սնվող արբանյակներ, այլ բաղադրը երկրին միաձնուող շործոն ավանենք:

Տորբեր անզանքների միջև կազմակերպումը և հաստատվելիք կապերը դարպանագույն են երկրաշափական ցանցերի հիման վրա (նկատի առ Մերձավոր Արևելքի հին բաղաքների բառանկյունի ցանցերի նշանակությունը), բայց չ-Կրիստոնյաց եղագացման բենուներից և կայ հաստատող նուանկյունաձև անապարհների ցանցով<sup>1</sup>:

Անգին կինչի<sup>2</sup> առաջարկած ապակենարոն մայրաբաղարի ուրվանկարը հիմնված է կիսված սոմբերով, այսինքն՝ նուանկյունիներով, կազմված երթեղության ցանցոց: Հատման որոշ կետերի շուրջ խմբավորվում են ամենախիտ հանդուցները, մինչդեռ նուանկյունիների ներսում կառուցապատումը ավելի նոսր է տեղաբաշխվում: Ազատ տարածությունների գոտիներն ու հատվածները կազմում են ավելի երկար կողերով մի ցանց: Կ. կինչի առաջարկած ուրվագողներով կարելի է մի ընդհանրության բերել մայրաբաղարի հին ու նոր շրջանները, հողամասի բոլոր կետերում նուանկյունի ցանցի միջոցով մատչելի դարձնել երթեղությունը, իսկ սոմբերի ավելի լայն և իրար հասող զուղընթաց անապարհների համակարգով ապահովել արագընթաց երթնեկությունը: Եթե այս ուրվանկարը ընդլայնենք ամբողջ երկրի տարածությամբ, կունենանք բաղար-երկիրը իրագործելու հիմնական տարրերից մեկը՝ կենտրոնները կապող համակարգ, ուր բաղարը դառնալու է ամբողջ երկրի կազմին արտահայտող կենտրոններից մեկը:

<sup>1</sup> G. Rigotti, *Urbanistica. Composizione*, № UTET, Torino, 1952, p. 460.

<sup>2</sup> K. Lynch, *The Pattern of Metropolis*, Melvin M. Webber, *Order in Diversity: Community without Promiscuity*, 1963.

## IX. ՆԵՐԸՆԴԻԲԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՅԻ ԹՅՈՒՆ

Անհատականը և հանրայինը, քաղաքաշինական հորինվածքում բնակելի բդիչը և փողոցը փոխագարձորներացն ըստցնելով միմյանց, կազմում են շաղկապված, միաձույլ ամբողջություն:

Բջիջների ներքին շարադրանքը, ինչպես և ծավալային կազմվածքը բնորոշ են ժողովրդի ապրելակերպին: Տարածությունը նշանաբանում է աշխարհայիշողությունը, իսկ ստեղծված համախմբվածությունները հատուկ են հանրային կյանքին: Հետևաբար, այսօրվա մեր հասարակական կառուցվածքի գահանեցը արտացոլնելով, բնակելի թաղամասերում փողոցը, ազատ տարածությունները, ինչպես և տներում՝ միջանցքը, սրահը կորցնում են իրենց սպասարկելու ստորագաս դերը, և ստանում քաղաքայնացման հիմնական նշանակությունները:

Բջիջ-փողոցը, որպես ունաւատկանի և հանրայինի կենդանի հորինվածք, թաղամասի կառուցվածքի ենթակառույց համակարգների միջոցով կապվում է քաղաքի ամբողջ օրգանիզմին: Նույն օրգանիզմում քաղմանարկ տունը (4—5 հարկանի) առաջանալու է տուն-փողոց հյուսվածքից, ուստի ազատ տարածությունները, հետիւնն փողոցները կարող են տեսականություններով լինել թշունամենք հարկում, թէ՝ այլ հարկերի բարձրությամբ: Բազմահարկ տների ավելի քարորդ խոտացմամբ հավասարակշռվելու և իրար են կապվելու ավելի խիս և ավելի նոսր կառուցաւապատճամ թաղամասերը: Ցարտարապետաքաղաքինական համակարգը կազմակերպվում է մարդու ապրելակերպին հատուկ անցյալի և այժմեականի ավյալների հիման վրա, իսկ որպես օրգանիզմ տրամադրություն է ծավալատարածական միավորների միջոցով: Նման ժողովական գնապատմ ձևակերտման և դիտական հիմունքներն անհրաժեշտ են, ուստի արդի հարտարապետից պահանջվում է դիտական, ինչպես և պատմական ավյալների լայնածավալ խմացություն:

Տարածքի պատմական և գեղագիտական վերագանցած ավյալներն ամփոփում են նշգրիտ ուսմունքներով և ստիպում վերանայել դորժունեաթյունների և միջավայրի միջև հաստատված հարաբերությունների կապը: Սահեցված

Նոր զիասակցությունը տեղայնության հանդեպ ունենալիք իմացություն է, հետևաբար շրջապատմիջավայր նշանակությունը համարվում է բաղաքայինացման ընթացքի հիմնական ռվյալներից մեկը: Բայց առ շի սահմանափակվում միայն կոչեկախիքի հարցերով, այլ առնչվում է տեղապրական կազմում դուրսիուն սևեցող կառուցվածքների համակարգին, ինչպես և ձեւաբանության հարցերին:

Նշած հարցերը պարզելու նպատակով ցանկալի է վերհիշել Ս. Բիզոսիի և Ա. Ռեննայի՝ նապոլիի շրջանի համար արած հետաքրքիր աշխատանքը:

Հեղինակները նպատակադրով են հետազոտել նապոլիտանական մայրաքարային շրջանի թագանթների կազմավորման առանձնահատկություններն ու քաղաքայինացմանը նպաստող անդրադարձման աստիճանները, ինչպես և թագանթների յուրատիպ մկունությունից հետեած, շրջապատում տեղի ունենալիք ապագա փոխարկութների հետավորությունները: Կատարած ուսումնասիրություններից հեղինակները հանգել են հետեալ եղանակացության՝ շրջակայրի մակենալութագրությունից (orografia) սահացված տվյալների սպառությամբ կարելի է բնորոշել տեղադրական կազմի տարրեր բարձրությունների հարաբերակցությունները, դոնել համեմատություններից հետեած մասշտաբները և ծավալներից ու հարթություններից կազմված բնության առանձնահատկությունը: Հետազոտողների առաջին եղանակացութները կազմեցին քաղաքի և շրջապատի մակենալ, իսկ բնապատկերից սահացված դեղագիտական տպագրությամբ կազմեցին երկրարդ մակենալ: Առաջինը դիտական մուտքում էր, իսկ երկրորդը՝ արվեստի: Այդ երկուսը իրար բաղդառակելով, նախագծողները հորինեցին այդ շրջանի վերջնական կերպավորումը:

Տեղանքի բնական տվյալների մաս առ մաս ընտրությունը կատարվելու է տեղագրական կազմը ուսումնասութերելու զիտական բլրուղությամբ, սակայն այդ ունակ պայմանների հետազոտությունը չի սահմանափակվելու ընտրված հողամասով, որովհետև մասնակին սերտարնեն կապված է շրջապատին և այն ավելի ընդհանրացված պատճերմամբ է բնորոշվելու: Այդպես և ամեն մի շենք ունենալու է իր շրջապատը (environment), փոխադարձ ազդեցությունների և անման զաշար, ամեն մի մասամասի նախագծումը հետևելու է բաղաքի կազմի ավելի լայն ընկալումից:

Չեակերտված տվյալները ենթակա են բաղադրիչ գործող ուժերի աղդեցությանը, հետեաբար ձեզ մարմնավորվելու է այս տվյալներից հետեած կերպնակալումներով:

Ընդհանուր առմամբ բնապատկերը կարելի է ընկալել տեսողականորեն կամ զգայնականորեն: Առաջինը տեսողության առաջդրությունից ստացված

ըմբռոնողությանն է, իսկ հրկրորդը՝ պայմանականի տարրեր սովալորություններից առաջգում զիերացյալ պատկերավորում։ Բնապատճերի ոնայ կերպարը, սահման, չի սահմանափակվելու միմիայն անդադրական հանույթներով, այլ առաջանալու է զիտական հիմնավորումների և արվեստագնախ ներհայեցողական պատկերավորումի միաձույլ կերպընկալմամբ։

Այսպիսի հայեցազողությունից (մարդու և բնության) առաջանում է բնության նոր բնկալում, որը կոչվում է՝ մարդաշխառհագրություն։ Մարդը վիերագունում է բնության հանգնայ ունեցած ներդրուժական կեցվածքը, վերահաստատում ձևի և մտքի կազմը։

Քաղաքաշինության առումով բնակավայրերի ձևակերտումը ստեղծվելու Շարքու կերտած միջավայրից (շենքերի տիպեր, հրապարակներ, փողոցներ, գեղագիտական արժեքներ) և բնական կարգի առարկական տվյալներից (երկրամասի կերպարը), այսինքն՝ ձեւաբանական և տեղանքի մակերևութարանական բաղադրիչներից։ Նման հայեցազողությունից հետևում է տարածության նոր մեկնարաննություն, որը որոշ պարզություն է բնում հետևյալ շարցում՝ «Ենգալոպալիս-ները քաղաքային աստղափյուռներ են և, օրինակ, Միացյալ Նահանգներում արդին ընդդրկում են հակա տարածություններ՝ Բաստոնից մինչև Վաշինգտոն, ինչնարքնում ունենալով նյու-Յորքը, այսինքն մի տարածություն, որը բնակվում են մոտ 40 միլիոն մարդ։ Ռամակ Հարցը հետեւյան է՝ անսարհման այդ տարածությունները արդյոք կարող են ընորոշվել որպես քաղաքաշինական բնապատկերներ, թե՝ նկատվելու են որպես աստղափյուռների տիպի օրգանիզմներ։

Կարենը հարցը (4. կին<sup>1</sup> և Զ. Կեպես<sup>2</sup>) պլանավորվելիք տարրեր Շտարածություններն են և, ըստ Ֆրիդմանի, նրանք բաժանվում են հետեւյալ կերպ։

— «Ելշիար» ազգական տարածություն՝ բնապատկերային մարտական գործունեության դաշտ,

— «Տնահասական տարածություն»՝ ուր գործում են արդյունաբերության և անտեսական բոլոր ուժերը,

— «Հասարակական տարածություն»՝ մարդկանց խմբավորումների և միշտավայրի հետ ունեցած փոխհարաբերությունների դաշտ (էկոլոգիային հետարրբուղ գործունեություններ),

— «Հնակալման տարրությամբ տարածություն»՝ բնորոշվում է ֆիզիկական իրողության և այս իրողությունը բնկալելու, ձևակերտելու կարողությամբ։ Այս տարածությունը քաղաքների ձեսակերտումը պարփակող շրջանն է։

<sup>1</sup> K. Lynch, The Image of the City. MIT, 1960.

<sup>2</sup> G. Kepes, «L'MIT nel 1960-ից կուտայած դասախոսությունները տանօջական զարդարանքներ» (visual design) հարցերի շարքը։

Վերը նշված դրույթներից կարևորագույնը քաղաքների ձևակերտումն է: Երբ հարտարապետը համաշխարհային մասշտարավը ընկալում է տարրեր խընդիրներ, բնաշչքումներ և դիտությունների ու արվեստի մարզերում շարունակ մշակող նոր գաղափարներ, այն ժամանակ նաև կարող է ձևանաժողով լինել արդի քաղաքների ձևակերտուման՝ տարածակերտ մարտարապետությանը:

Պետք է ասել նաև, որ մի հոգամասի սահմաններում գիտված երևույթների միջազգային փորձ ձևոր բների դեռևս անբավարար է: Քաղաքայնացումը ավելի լայն բնույթի է կրում և, ինչպես անցյալում՝ այսօր էլ մարտարապետները կապված են և պատասխան են տալու քաղաքայնության խնդիրներին:

Քաղաքը շի կառուցվելու մի խումբ հղորների համար, այլ մարդու համար, հետևաբար այս իրողությանը գիտակից քաղաքայնարար-մարտարապետը անը է զառնելու ձևակերտման արդի միջազներին՝ վերագանձարկվ հին իմաստով զմբանված զդրնկարմանը (անզիւացիների՝ ԸՆԻՇ-ը):

Իրավիայի հարտարապետուական ֆակուլտետներում, պրոֆեսորների ու ուսանողների գործակցությունը, մշակում են քաղաք-երկիր հասկացողության հարցերը, նոր քաղաքների ձևակերտման խնդիրները: 1961—1962 թթ. անդի ունեցած ներքին մրցանակարարաշխություններում մշակվեցին Հռոմի շրջաններից մենքի վարչա-տնտեսական կենտրոնը:

Լավագույն առաջարկը պատկանում էր Զ. Նիգրոյի, Ֆր. Բահբարեղի, Զ. Բելառտաշչիայի, Գ. Կալուչիի և Ֆի Միկելի խմբին: Ներկայացրած նախադժեռից հետեւում է կարեռ մի ավալ՝ քաղաքայնարարները ուսուց հարցերին մոտենում են ավելի ներգիտակցված պատմիքնացումներով: Պետք է ասել, որ այս մոտենումը միայն Խոալիայի մարտարապետներին չէ, որ հասուի է, այլև ֆրանսիական զպրոցին (գեղնեցիկ մակետներ, բայց ոչ միշտ հիմնավորված) և ույլ երկրների մարտարապետներին: Երկրորդ հանգամաները հակայակազմ և բարդ կառուցվածք ունեցող շենքերի առաջարկներն են: Պետք է նշել, որ պարտակիչներում կալեկտիվի հարցը վաս է լուծվում, քանի որ անհատը ենթակա է մեծ ձևուարկությունների շահներին, ապա զգույշ պիտի լինել ուղղաձիգ քաղաքներից (Ֆ. Լ. Բայյա), բրդաճեկ բարդ կազմերից (Ժ. Լուիի), բրդաճեկ կազմերից (Ժ. Լուիի-Նիկոյ) կամ մանհեմենյան ոռմանտիզմից:

Զ. Սամոնան, Ազրափակելով մրցանակարաշխության շուրջ արտահայտուած մտքերը, ասում է. «Քաղաքաբաշխնական կերպարանափոխությունը եղնելու է քաղաքի և շրջապատի միջն կատարվող դանդաղ պայքարից. քաղաքայնացման ընդարձակման սահմանները վերագոտնվելու մեջ քաղաք-շրջապատի տարածությունում, հիմնվելով տուն-աշխատավայր և աշխատավայր-տուն այսօրյա տեղաշարժներից, հեռավորություն-ժամանակ մասշտարավը Այս մասշտարի հիման վրա կարելի է սրոշել առրենք գոտիների ենթակառության կազմը»:

և ներանց ապագա զարգացման սահմանը: Քաղաքաշինության շափանիշներից մեկը՝ մարդ-գործունենության սահմանամբն է:

Այսքանից հետեւում է, որ կառուցապատման հարցը քաղաքաշինական և հարաբերապետական մինչև օրս ընդունված «արթակից պետք է ընդլայնել զեղության ընդհանրականը» և հասնել այն բանին, որ նախադժերում մարդը և իր շրջապատ-միջավայրը արտահայտվեն որպես տարածա-ծավաքական միավոր: Լիսուսին Ֆիրենցիան համար մասնակի ընտրությունների հիման վրա առաջարկում է տարածության երկակի ընույթի մոտեցում: «Բնական շրջապատ» և «մերակերպության շրջապատ», «ընդհանրացված տարածություն» և «սահմանափակ տարածություն»՝ նույն երևույթի ռեալ և ներշայեցողական պատկերացումներ: Հետևաբար մարդուն պիտի ընդգրկել իր համար ստեղծված շրջապատ-միջավայրի մեջ և նախագծված տարածա-ծավալային միավորը տրամադրյան որպես բջիջ-թագամաս, բջիջ-քաղաք, բջիջ-երկիր: Կահմանափակ ժամանակը գարունակ զարգացման համարավորություն ունեցող մակրոկազմ շարժականությամբ իրադրությամբ մարդ-միջավայրի ներընդգրություն:

Որպես օրինակ վերցնենք 1963-ին նապոլիի հարաբերապետական ֆակուլտետում անդի ունեցած մրցանակուրաշխությանը: Թւանազնները առաջարկել էին նոր հաստատությունները թաղամասում տեղադրել այնպես, որ ստեղծմի տեղայնության սահմաններից դուրս նշանակություն ունեցող բան-մաօպագործելի հարմարություններով օճախած կենարուն: Պաղաք-պարտեզների և արբանյակների հասկացողություններից հեռու՝ նախագծողները երեք բջիջների միջոցով ձևակերտել են կազմակերպել էին ամրող թագամասը, առաջինը սահմանափակվում է ավանի ներսում ունենալիք նշանակությամբ, երգորորը ավելի ընդդրամակ առումով կապվում է տեղանքի հետ, բլրամեկ պարունակիչների միջոցով, իսկ երրորդը՝ ամենահետաքրքիրը, առաջարկվում է ազատ ժամերի և օրերի կազմակերպումը, այսինքն՝ խաղերից, զվարճություններից և տարբեր ժամանցներից բացի նախատեսված են ավելի ապավորիչ գրադունքները, ընդգրկելով կինոթատրոնը, գրադարանը, տարբեր արհեստաներով զբաղվելու հարմարությունները, նկարչական, քանդակագործական արհեստանոցները, դասախոսության արաները և այլն:

Ազատ ժամանցի կենարուններ ստեղծելը քաղաքաշինական կարևորագույն հարցերից է, որովհետեւ միշտ ավելի լայն տարածում դանող մեքենայացումից հետեւում է կենցաղի պայմանների բարեկավում, որն տարածահայտվում է աշխատանքային ժամանցների պակասությունները, նկարչական, քանդակագործական արհեստանոցները, դասախոսության արաները և այլն:

1 Միլանոյի 13-րդ Տրիենալեն ամբողջութեա նվիրված էր այս հարցին (1964):  
L'Architettura\*, № 109, 1964: „Casa bella—Continuità“. № 290, 1964.

Այս կարևոր հարցը ավելի մտահոգող է դառնում, ուստի և քաղաքներում ողբեր է ասեղծներ պարագունքների ամբողջական կենտրոնները:

Ազատ ժամանցը, անշուշտ, չի ընկալվելու որպես լոկ պարագության ժամանքը, այլ նկատի ունի ականիվ հանգիստը, որովհետեւ պարագությունը կարող է մարդուն դնովի բարոյական բայցայս տանել, ուստի աշխատաժամեմերը և ազատ ժամանակը պետք է օգտագործել որպես մենքը մյուսի շաբանակություն:

Քաղաքների կազմում առնզգագելիք այս կենտրոնները նույն նշանակությունն են ունենալու, ինչ ունեն մշակույթի կենտրոնները՝ ոչ ցիրուցան, այլ խմբավորված, անզարաշխված որպես կենսական բռնանուաններ:

Քուանտաները ապագա զարգացման հնարավորություններով օժտված մոնագեների հասկացություն է: Ազատու ավանդներում ընակավայրերը, աշխատավայրերը, երրորդական սպասութեան ցանցերը կենտրոնալայու են որոշ տեղերում և իրար են կապվելու արագընթաց երթեւկության ուղիներով. մերձնացացված վորոնարարերությունները տեղի են ունենալու կառուցվելիք ժամաների տարրեր մակարդակներում, ուր նախառակած են լինելու անբրանեների և իրար կապող կամուրջ-փողոցների ցանցը: Բնակելի, աշխատելու և ազատ ժամանցի վայրերը այնա չեն նկատվելու որպես իրարից անջատ գոտիներ, այլ նարտարապետացադարձինական միասնությամբ կերտված որպանիզմներ, երկրի ամրադր լայնությամբ տարածված՝ ներընդգրկված քաղաքաշնացման իրողություն:

## Հ. ՆԱՐ ՆԱՎԱԱԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Մարդու բազմազան գործունեությունները կմնարոնանում և խմբավորմամբ են աշխարհագրական, տնօտեասկան, արդյունարերական նույնանման պայմաններին համապատասխան: Խելքավորումներից ստեղծված կառուցապատված շրջանը նեթարկվում է քաղաքաշինական նույն օրենսդրությանը, որը իր հերթին զնկավարում է այդ սահմաններում զտնվող ընդարձակ առաջնորդությունը: Կանխապես սահմանում ունեցող շրջանի ընդհանուր պլանավորման պայմանները նպատակահարմար է, որ կազմավորման, ինչպես և իրագործման ընթացքում տարրերը լինեն:

Այս նպատակին համար պիտի է ընդլայնվի տարրեր մասնագետների ուսումնեամիությունների գոշտը՝ ամրող երկիրը սահմանված տարածություններից գուրա ընդգրկելու համար: Այս հանդամաները ճարտարապետիներին մղում է ամամփորդության, ոչ միայն հաստատնելու պատճենություններց տառանգած քաղաքային կերպարների արմենքը, այլ վերագտնելու արդի կյանքի էվլույսիայից առաջացած պատկերը: Ճարտարապետը համար իր նախագծելը մշակում է՝ ենելով իրականության սահմանափակ պատկերացամփակ և բազքնեիական փակ հասկացությամբ: Հետեարար իր իսկ երկիրը վերականգնելու նպատակով կատարված թափառումներում նա ակտնատես է լինելու ժողովրդի վնասական վայրին, նրա իրական պահանջներին, և նոր հայոցությամբ է մեկնարաննելու բնապատճերի կազմը: Մասնակի համայնքներում կատարվող գործողությունների միջն նախագծողը կատ է հաստատնելու և ձգտելու է ամրող շրջանի քաղաքաշինական դարգացմանը: 1965-ին, Սավոնայի քաղաքապետության պատվերով ՍՈՐԻԱ (Տորինո) կազմված ընդհանուր նախադիմք ընդգրկում էր իր շրջանի վեց համայնքները: Շազկապող և գործոն հիմնական տարրը Սավոնայի հին նավամատույցն էր, հետեարար կազմված նախագծում առաջարկվեց այդ կենարոնը դարձնել ամրող շրջանի արդյունարերությունը բնորոշող առաջնային նեթակառույցը: Այլ օրինակներում հարցը ավելի բարդ է: Ֆունկցիոնալ նկատառումները երբեմն բավարար չեն, պլանավորումներում նկատի են առնվելու գարգացման ենթակա կամ

անահտական նոր ձևակարգիներ հիմնադրելու հանդամանքը: Տեղանքի ընտրությունը մինչդեռ կատարվում է արտադրական տարրեր կենտրոնների միջև դոյլություն ունեցող տարրածություն-առանձիւթաշափի հիման վրա: Այս շափանիշը, ըստ Վերերի, կարելի է նկատել որպես արդյունաբերության արտադրիչ (transporter-inputer) կամ, ըստ ֆոն Տունենի՝ որպես գորխադրման արժեք: Տեսահսկան փոքր կենարուների տեղադրման հարցում հնարյակի է Դեկ Վեսկովոյի գդային ծրագրեր առաջարկը, որ կարելի է օգտագործել արդյունաբերական ցանցի և բաշխման ազելի մեծ ցանցի կազմակերպման մարդում: Եթե մտածենք, որ որոշ արդյունաբերական գործունեություններ կրեմն կարող են համաշխարհային նշանակություն առանալ, հասկանալի է դառնում, թե ինչ մեծ նշանակություն է ստացել տարրածության հասկացությունը: Այս հասկացությունը նախագծողի մաս-տարրային մտածողության մեջ ծնունդ է նոր ըմբռնում և հատկապես նոր դպավություն: Տարրեր կենտրոններ իրար հյուսող ցանցը և շարունակ դարդացման հնարյակորությամբ օժտված շարժականությունը բաղադրաշինաբարին տրված հակասական տվյալներ են, որոնք հեղաշրջում են ոչ միայն անցյալի ապրելակերպից առաջացած քաղաքների կազմը, այլև սպասարկման ամբողջ համակարգը: Հետևարար, քաղաքաշինարարը պիտի զիտականություններին նախագծումը, կազմակերպվելիք ամեն մի կենտրոն կապի ավելի ընդարձակ շրջապատի հետ, և այս գեղարքում արժարմագնություր խնդիրները բազմաթիվ նշանակություն կստանան: Սահմանափակվել միայն թագավասի նորմագծմամբ, աւտոմատիզմի նշվությունը հարու և արաւարապմատի կողմից մակերեսային մոռեցում կլինի: 1962-ին հաւաքան նոր կանոնադրության (Հոգված 167) հիման վրա կառուցվող շենքները և թաղամասերը տեղանքի ընդհանուր հասակագծերի մասն են կազմելու: Եվ այդպիսով վերը կարվի դուռ շահագիտական և համակենարուն մոռեցումներին: Հասուրակական հասկացողությունը նախագծողին մղելու է նույն թեմայի ամբողջական համաշխարհությանը, այլայն նոր համահամար բաշխմանը:

1965-ին, Հռոմի Պինտրալատա թագամասի նախագծուղ Հեղինակենքը (ձարա. ջ. Նիգրո, Ա. Բրունի, Պ. Կոնելո, Ս. Ալբերտուչչի, Պ. Լուցի, Կ. Նուչչի) կառուցվելիք թաղամասը, որպես միանացած ամբողջություն, մշակվել էր Հռոմի ամսանակարգիմաժ պլանի: Դա քաղաքի ցանցում գոյություն ունեցող ազտառ հողամասի կառուցապատճեմ չէր, այլ նորասեղծ ավանը որպես ինքնաբազմ կազմ պահպանելու, քաղաքին ունեան երակներով կարելու միտում: Կարպ քաղաքի միջև կատարվում էր ուսմակարգով պլանիք (մշակված քաղաքային վարչության կողմից, 1965-ի սկզբներ), ուր նշված էին սկզբունքային դրույթները և ծավալների մեծությունը: Սակայն, որքան էլ հնարարթիք լինեն այդ ծրագրերում մշակված սկզբունքները, նախագծողին իրավունք է տրվում առաջարկներ անելու: Հռո-

մի «համակարգող պլանի» հիմնական նպատակը հետևյալն է՝ նպաստել բազարի և նոր կառուցվող ավանների բնակիչների մերձեցմանը: Մերձեցումները իրականացվում են երթևեկության, սպասարկումների, արդյունաբերության և մշակութային հաստատությունների հիման վրա, ինչպես և ազատ ժամերի օգտագործմամբ: Հետեւարար, ձեակերտվելիք թաղամասը ժամաների նոր շարադրանք չէ, այլ կյանքի իրողությունից առաջացած կենդանի հորինվածք:

Իտալական սահմանադրությունը նախատեսում է գավառների վարչական, օրենսդրական ներքին ինքնավարություն և պարտադրում մշակել ամեն այ գավառի տնտեսա-հասարակական կազմի քաղաքաշինական պլանավորում: Այն ընթանալու է համայնքների, ինչպես և գավառների պլանավորման ուղիղը, իսկ համայնքների սահմաններում ընդգրկված երկրամասերը բաժանվելու են յուրատիպ ու նման հասկանիշներ ունեցող խմբերի, հնդախմբերի, հետեւարար՝ շրջանների, ևնթաշրջանների:

Համայնքների՝ մինչև այսօր պահպանված սահմանները կորցնում են իրենց վաղնմի նշանակությունը, վերափոխվում է քաղաքաշինական օրենսդրությունը: Այդ իմաստով սուազադեմ քաղաքաշինաբանների, Խնմի-ի կողմից պայքար է մղվում հետացած կանոնադրությունները այժմեականացնելու նպատակով: Խնմի-ի մեծածավալ իր գործունեալիքում՝ մրցանակաբաշխություններով, ունիրբանիստիկա» հանդիսի հրատարակությամբ, տարածում և ժողովրդականացնում է քաղաքաշինական նոր մոտեցումները: 1941-ին Խնմի-ի կազմոց «Քաղաքաշինական օրենսդիրը»: Նույն տարին Ստրեգայում կազմակերպվեց քաղաքաշինաբանների համագումարը և բացահայտվեցին ու բնորոշվեցին քաղաք-տարածք սկզբունքները: Պանտր է անտեսել ժողովրդականություն վայելող և իր մարզում շատ գործոն և նույնիս նույնարա» կազմակերպությունը, ուր հոգ է տարվում պատմական արժեք ունեցող շինությունների, արվեստի գործերի և բնապատճենների պահպանմանը: Ետպատճեազման համեմատարար կարճ ժամանակաշրջանում, Բատայիայում համալսարանների, ճարտարապետների և վերը նշված կազմակերպությունների շնորհիվ ստեղծվեց քաղաքաշինական նոր մշակույթ, որ թեև առաջարկները դեռ մեծ մասամբ մնում են թղթին, բայց կարճի է ասել, որ դրանք հասուն մտքեր են, երկրին ընորոշյուրահատուկ մոռեցումները: Ընդհանուր առմամբ, չկա քաղաքաշինական որևէ հարց, որ չհետաքրքրի բոլորին, հարցի կղզիացումը անհմաստ է և իր դրական նկատառումներով, և որպես աշխարհայնցողություն: Պիտի կարողանալ հասնել նոր գիտակցության, էթիկական նոր հայեցողության, այսինքն՝ հիմնական հարցերի ներընդգրկված մոտեցման:

Երբ զրում ճնք, որ երկիրը փոխում է իր կերպարը, դա պետք է հասկանալ ոչ միայն որպես հաստատությունների, ձևանարկությունների բնդարձակում, այլ այն կապերը, որոնք առաջանում են նորաստեղծ կենտրոնների և շրջա-

կայքի փոխարարերություններից, աշխատավայր-բնակավայրը ձռնանակածի երթևեկությունից, ավելին՝ շրջանի, համայնքի, գավառի, երկրի և երկրի սահմաններից դուրս այլ երկրների հետ հաղորդակողոյ ենթակառություններից։ Երևեկայական այս ցանցը ի մի է հյուսիսու շինարարական տարրերի արդյունաբերացված արտադրությունը (մողուների օգտագործում), արդյունաբերությունների, ինչպես և բնակավայրերի, վարչա-տնտեսական կենտրոնների միջև նզած հեռավորությունները, էներգիայի, երթևեկության, տնտեսական այստեմները։

Մարդու առեղծած կենտրոնների ազդեցության աահմաններն այլնս ողջ երկրագումնը շրջափակող նշանակություն ունին, և այս հանգամանքին դիտակից է նարտարապետը։ Ծարտարապետական շարադրանքի շափանիշը փոխվում է։ Օրինակ՝ ինչո՞ւ նախագծել Երևանը նույնիսկ ամենափոքր շափով շգգալով, որ Երևանը ոչ միայն հանրապետության, այլև ամբողջ աշխարհում ցըգած հայերի մայրաքաղաքն է։ Կարևոր այս իրողությունը պիտի արտահայտել որպես քաղաքաստեղծման հիմնական դրդապատճառ և դրանունիշը։

Անցյալում համ քարը թելագրում էր կամարներ, պատեր, գմբեթներ կառուցելու հետավորությունը. միավոր այդ շափը արտացոլում է կառուցվածքի ներգաշնակությունը, շինարարական սիստեմի հետավորությունները։ Երկաթթեսունը մինչդեռ ինքնուրույն ձև շռւնի, բայց օժտված է նոր ձևեր ներշնչելու հսկա հետավորություններով։ Եթե անցյալում ճարտարապետական հորինվածքը մշակվում էր մինչև կառուցվածքներում ներփակ հետավորությունների գարգացման սպառումը (թնմաների մշակում), ապա այսօր, օգտագործելով բնույնը, ճարտարապետը շարունակ նոր թեմաներ է առաջարկում։ Ռւստի կառուցից միավոր շափը պիտի փնտրել և սահմանել այս հարցերի դիտակցությամբ։

Նախագծումը ընթանալու է տրված թեմայի և նրան առնչվող ավագայների համագրամք։ Եենքը կզգիացած երևությ չէ, այլ շրջակայքային կազմ։ Նախագծողի առաջ դրված հարցերի այտիքի ընկալումը համապատասխան է Երկրի-Հասարակական-տնտեսական կազմի բնաշրջմանը։

Ինչպես նշեցինք, համայնքների վաղեմի սահմանները այնու նշանակություն չունեն և արդեն նկատելի է այդ համայնքների աստիճանական զարգացումը և իսմբավորությը իրենց բնորոշ լուրահատկություններով։ Զ. Սամոնեան առաջարկում է պահանավորություններում առաջնորդվել համայնքին յուրահատուկ և համայնքներից կազմված խմբերի հատկանիշներով։ Այդպիսի մոտեցումը տրամաբանութեն պարտադրում է նախապատրաստել տարրեր գործունեությունների ապագա գարգացում և նման հատկանիշներ ունեցող համայնքների խմբավորում։ Ենելով համայնքները միավորելու ձգտումից, կատարված մաս-

նաևի նախարգեքը պետք է համակուրզվեն և հիմք դառնան ավելի բայն տարրածություններ ընդորեկող «նախագերի» նախագիծ (piano dei piani) կամ «ամփոփիչ» նախագերի (piano comprensoriale) համար:

1964-ին Խաւիայում առաջին անգամ շինարարության մինիստրությունը պատվիրում է կազմել մի գալասով տնտեսական պատկերը և միացնել այն ամբողջ երկրի գործունեությունները համակարգող ընդհանուր ծրագրին:

Համայնքների միացմամբ ավելի մեծ երկրամասերի պլանավորման համար ընտրելիք ճիշտ տարածությունը ընորոշվելու է իրար համեմատելով դավանի շատ մեծ ու համայնքի շատ փոքր տարածությունները: Գործունեությունների ընդլայնման այդ աահմանումը իտալական արդի քաղաքաշինության կարևորագույն տրվածքներից է և ամփոփում է վարչական, տնտեսական, ֆինանսական, հարաբակական, տեխնիկական ամբողջ քաղաքականությունը: Հետեւը պարագաները, պահանավորումը լինելու է միջնամայնքային և ազգային ծրագրման համապատասխան: Ալեհրաժեշտ է մասնագետների համարդակցությունը և ուսումնասիրման ու կազմակերպման աշխատանքներում համախմբված նախագծում: Ինքնակամ նարարապետների գալական կերպարն անհնատ է և տեղի տալիս տարրեր մասնագետների ու նարարապետների համախմբված նախագծմանը:

Քաղաքաշինական օրենսդրությունը Խաւիայում փոխվում է (ահե՛ս ինչո՞ւ 1962-ին արած առաջարկը), փոխվելու է նաև նրա աահմանափակ, միայն համայնքներին կտրված ընույթը՝ ընդորեկելով հարցերի շարժականությունը և ժողովրդի ապրելակերպի բարելավումը նվազ սրանք դառնալու են բնագարաշինարարին ներշնչող, երկրի ապագա զարգացումը ձևակերտող հնարավորությունները: Ավելի ընդարձակ տարածություններ նախագետելու դդայնությունը քաղաքաշինարարի գիտակցության մեջ հնակեատ է լինելու կատարվելիք բոլոր առաջարկների համար: Նախատեսված ամեն մի յուրահատուկ տրվյալ իր լուծումն է գտնելու ավելի լայն կերպով մշակված, երկրամասին շաղկապված առաջարկներում: Քաղաքաշինարարը պետք է վերափոխվի, կողմնոշումիք՝ ելնելով տվյալների և ծավալվող հարցերի ամբողջական զգայնությունից, այն, ինչ խաւիացի քաղաքաշինարարները անվանում են նոր ծավալայնություն: Դա է լինելու նախագծման նոր շափանիշը:

## XI. ՔԱՂԱՔՆԵՐԻ ԶԵԿԱԿԵՐՏՄԱՆ ՀԱՐՑԻ ՇԱԽՉ

Նորակառույց կենտրոնների շարունակ բազմացումը, քաղաքների անընդհատ ընդլայնումը արագացողում և մարդկային հասարակության փոփոխավող, շարունակ աճող ընթացքը: Տարածություն-ժամանակ հասկացողությունը արտահայտվում է նոր տարածությունների նվաճման և մարդու դործունեսությունների հորատելության մեջ: Այս երևույթն արմատախիլ է անում քաղաքները սահմանափակող դաշտավայր-բնակավայր մինչև օրս վավերականություն ունեցող երկրագաղբերը: Եարժանությունը մինչև այդ ապրած միջավայրի նեղ սահմանները համաշրջանային ընդարձակությամբ կազմակերպելու հիմքում պատճառ է դառնում: Եթե քաղաքը նկատվում է որպես կեցության բարձրագույն արտահայտությունը և հետարկությունը, ապա կառուցելու դիմավոր մտահոգությունը կամ սահմանական է այդ կեցության բարձրագույն արտահայտությունը տարածել քաղաքի շրջանի ողջ մեծությունը: Ուզենալ քաղաքների զարգացումը սահմանարել միշտ սորտ պատճեններ կառուցելով կամ բաժանել թաղամասները դասակարգային տարբերություններով, եշանակում է համադրվել այժմյան կյանքի բրադրությունների խմական բնույթին: Ամեն մի ստեղծագործող միտք նպաստում է սոցիալական կյանքի բարելավմանը: Նոր կենտրոնների տեղադրումը կազմակերպվելու է ազդեցություններից կազմված զաշտերի հաշորդականությամբ, որպեսզի հնարավորություն տրվի երկրի որևէ մասում մարդու համար ստեղծել բարենպատճ պայմաններ: Քաղաքաշինությունը քաղաքակրթություն է, և այս իմաստով արդեն մեծ խնդիրներ են ժառանաւում ժամանակակից ճարտարապետի և ոլլանավորողների առջև:

Հիշենք պատճությունը:

Եթե անցյալում, օրինակ, տաճարը կերպընկարված էր շինականի տան նախատիպով, առաջ նրա հետագա դարգացումն ընթացավ տրված թեմայի տարտծական-երկրաշափական հասկացության, աշխարհայեցողության զարգացմամբ: Նման եղանակով կառուցեցին պալատները, կաթողիկենները, միջնադարյան և վերածննդի դարաշրջանների հրապարակները: Իսկ ժողովուրդը շարունակում էր բնագարար ծավալնել-կազմավորել իր բնակավայրը և սա

ժողովրդի կողմից քաղաքաշինաբարներին թօղած ժառանգությունները: Դա ինքնին մի սկզբունք էր, որը ներդրուվում էր ճարտարապետական հորինվածքը և կազմում՝ շնչերից և աղասա տարածություններից մի միանալիքուն: Հետագայում պարզեց, սակայն, որ անընդհատ ընդլայնվող մեծածավալ, բջջակազմ քաղաքաշինական հորինվածքին թերևս կարող է զո՞ւ զնալ ժամանակը ազնի համեստ, քայլ գեղատեսիլ ճարտարապետական շարադրանքը: Զեակերտված առարկան իր շուրջը տարածությունն է կազմակերպում, գիտողի և առարկայի միջև փոխհարաբերություններ առաջացնում:

Ժառանգությունների ներընդգրկումը, քաղաքաշինացումը, անշուշտ խոշոր նպատակներ են: Բայց հիմնականը մշակույթին է և այն դարձանում է ոչ միայն քաղաքներում, այլ երկրի տարբեր վայրերում տեղադրված դիմության և լույսի կննություններում: Ճարտարապետական կառուցվածքները, քաղաքների հակա հորինվածքներում, մշակույթի լուսավոր կենտրոններ են: Ստեղծվելիք բնակավայրի շարադրանքում ճարտարապետությունը ստեղծում է շարժականություն (միջա փափոխվող) և մարդ-միավայր (կայտն) հակամական քաղաքորին ներդաշնակություն: Չուռ ճարտարապետական հորինվածքը ներդրավում է արտարին տարածությունը այն շափով, որքան հասնում նն իր իսկ ձեր ազդեցության ճառագայթման սահմաննեցը: Երբ Ֆիշեր ֆոն Էրլախը, բարձրանալով վիճննայի պատանեչների վրա, ճգլող դաշտավայրում տեղադրեց իր նախադասած սուրբ Կարլոսի եկեղեցին, երեխ չէր մտածում այն հրապարակի մասին, որ ազելի ուշ փովելու էր նույն այդ եկեղեցու առջև Ավելի ուշ հրապարակը պարփակվեց ու Կարլոսի ճարտարապետական հորինվածքը աղդեցության սահմաններում Հուշարձանն իր էռթյամբ ներդաշնակել էր ներդին և արտարին տարածությունները և հանդիսացն ամբողջ շրջապատի ճամփորումը թելադրող ուժ: Տարածության այս երկու հասկացությունների փոխներգործմամբ՝ ճարտարապետական հորինվածքը ստացել է լիարձներ կյանքը: Որոշ հրապարակների կառուցապատռումը երբեմն դարձր է տեսում: Վեճնախիկի ու Մարկոսի հրապարակն ամբողջացվեց հազար տարվա ժամանակամիջուցում: Վիճննայի նույն հրապարակի համար Օլբրիխութ նախազած նաշշմարկութի մուսուքը շիրագործվեց, հետևաբար, երեք գար անց, դեռ չի կարելի տակ, որ այդ աղաս տարածությունը լրիվ կառուցապատռված լինի: Թեման հաճախ սպարունակում է ամբողջացման հնարավորություն, քայլ իրազրծման ժամկետները երբեմն մնում են անհայտ: Ելնելով վաղեմի ինչ-որ կերպարներից, ճարտարապետական անցած ծրագրումների այսօրվա պարտադրումը կարող է ծանր հնարանքներ ունենալ: Մեր կարծիքով, Երևանի Լենինի հրապարակը փակող թանգարանի շնչերը մի այլ քաղմահարկ ժամանակ լրացնելը դաստիան լինելու հավակնություն ունի: Խորդականությունը իրարի է հայ ողուն, որովհետեւ ժողովրդի ողին խորապես դաստիան է, ապացույց՝ անցյալում ստեղ-

ծած հարստարապետությունը։ Նոր-դաստկանությունը տարածվեց այնպիսի երկրներում, ուր դաստկանը օտարաբառում էր։ Անինքուազը մինչ օրս ոռու ժողովրդի հոգում մի կը կը է։ Դերմանական ժողովությունները հարավային և հարավ-արևելյան շրջաններում ավելի հոգաբանություններուն ընդունեցին ուշ-բարոկկոն, քան ԼԻՀ դարում վերաբշակված ոճականությունները։ Բարոկկոյի բարդակալում հորինվածքն ավելի հարազատ էր գոթական լուսատվերային, շարժուկուն ձևակերպմանը։ Ուստի ժողովությունը, նրա գոտնում է իր զարգացման ընթացքում, հարստարապետը մի քայլ հետ է կանոններու և ուշադիր ու առանց պարտադրյալու գնդապիտական իր տեսիլքը, փորձելու է ժողովրդի ոգու թաքուն իմւաստը ձևակերտելը։

Խշողներ տնօտանք, ներքին և արտաքին տարածությունների ներթափանցումը բնորոշում է բաղդարաշինությունը։ Եթե անցյալում, սակայն, հակազդը յարմաները ստացել էին հավասարակշռված արտահայտություն, ապա այսօր նույն այդ արժեքներն անհանդիսա ողու արտահայտությունն են։ Այդ պատճառով հարստարատեսական ձեխն որոշ քաղաքաշինարարներ վերաբրում են երկրորդաշների նշանակություն՝ քաղաքական կազմին հեթակա կարգարար։

Հնանարար, ինքն իր մեջ ամփոփված ձեխն հաղորդելու մեջ բազմապատկեման, համարդաման հնարավորություններով օժանած միավոր ձեւեր Ամբողջ հորինվածքով նշանաբանված ձեխն փոխարինում է միավոր ծագովը, հանրային իմաստով ասված՝ բջիջը, այսինքն կյանքի զորությունը պարփակող միավոր կազմը։ Համապատասխանարար, հարստարապետական ձևակերտման հղանակը փակ ձեմից վերածվեց բաց ձեմի։ Քաղաքների կազմավորումը այժմ իրագործվում է ամող մարմնի եղանակով, որպես շարունակ զարգացող անսարչանափակ մի շարադրանք։ Միավոր ժամանակը հաջորդականությամբ մարմինն է առնում ընդհանուր հորինվածքը, իսկ հորինվածքի հիմնական տարրերը լինում են՝ բջիջը և ցանց-կառույցը։

Սավալներով անդադրված, հանրային բնույթ կոռոզ դաշինները, հարթ մակերեսները ոչ միայն խմբավորման վայրեր են, այլև իմաստավորվություն մարդկանց միջև առաջացած հաղորդակցությունների միջոցով։ Արդի բաղադրաշինության բարձրագույն նորատակը մարդը մարդուն է։ Ուստի ներքին փողոցը վերածվում է հանրային կյանքի ամենաշերմ կննտրոնի. վերացվում է փողոցի և տների միջն գոյություն ունեցող պատճեց, և կարմիր դիմեր այլև սահմանում է փողոցի միջին լայնությունը և ոչ թե շննդերի տեղադրումը կամ մակերեսների ընդլայնումը։ Տարածությունները ծավալները ներթափանցերով, իրար են շաղկապվում։ Հանրային կյանքը հարստացնում և դունավորում է անհատի առանձնահատկությունները. առօրյան վերագտնում է աղնիվ փոխհարաբերությունների կապը։

Ըստ այդմ, գոյություն ունեն քաղաքներ ձևակերպություն տարբեր սովածարկելու:

— Բաց ձեզ շարադրական միակ համակարգն է, որ հնարավորություն է ընձևում բազմաձև միացումներով ժամանակակիցներ շարագիցներ, եռականական և այլ բազմակողմ միավոր ժամանակներ իրար համար միավորելով, առաջացնելու տարածության մեջ գտրգանալու հնարավորություն:

Տարածության պատկերացումը համապատասխան է տարածությունը կազմակերպելու, թնակառնողին ձևակերպելու հայեցալությանը: Հարցը՝ մավարդող կյանքը քաղաքաշինականորեն կազմակերպելն է՝ միշտ ավելի փոքրացնելով այն տարրերությունները, որոնք տուաշացել են այտօրվա կյանքի շարժական բնույթի և քաղաքային կայուն համակարգերի միջև: Իրար համապատասխան համար հակասական երեսություններ են սրանք, որ մի կողմից բացահայտում են անցյալի քաղաքների պահպանման, օգտագործման խոչոր ու գծվար հարցը, մյուս կողմից պարտադիր գարմանում արդի քաղաքաշինական մտադացումների իրազործման անհրաժեշտությունը:

Եթե ականություններ արտացըդում է երկրաշափական համակարգերի՝ շարունակ ընդլայնվելու հատկությամբ, ուստի՝ տարածությունը ձևակերպելու, կյանքը կազմակերպելու, քաղաքայինացումը տարածելու զորությամբ: Երկրաշափական պատկերացումը տարածության մեջ ժամանակականությունը է՝ խառացումներ կրելու, բայց և իրար կապելու իդեալ ցանցը, ժամանակային անհամար լուծումների ազբյուրները, շինարարական հնարավորությունների միավորողը:

Տարարապետական ձևակերպումը նորակառույց բնակավայրերում իրազործում է միավոր ժամաներից, ուր բջիջը պիտի նկատել (անզինացի հարաբերականությունը՝ մոտեցում) որպես «բնակելի» պայմանների և մարդու միջև առաջացող հարաբերություններ: Այս մոտեցման մեջ ընդպրկված է բնակելի պայմանները շարունակ բարեկավելու կարելիությունը:

Ահա մի այլ մոտեցում՝ հարաբերապետական շարադրանքը սկիզբ լին առնելու բջիջից (որպես ինքնուրույն կերպար), այլ բնակելի տարածությունը կազմակերպելուց, ինչպես և ընդհանուր զանգվածի պլաստիկ կերպարը մշակելուց հնար պիտի է վերադառնալ բջիջին և այն մշակել համակառույցի վերջնական կերպարը ստանալու համար: Այսինքն՝ մեկնել ընդհանուրից, նկատելով անհամականը որպես բաղադրիչ, իսկ հանրայինը՝ կազմակերպիչ: Այսպիսով, քաղաքների կազմավորման դասական թեման հնդաշրջվում է:

Խորանարդը, քաղադրման համար հնարավորությունների միատեսացումով, կերպարում է բրգաձեռ, այն ընդարձակվում է բոլոր ուղղություններով, խառանում որոշ կետերում, նորանում՝ միաձուլվելով բնապատճերի կազմին, և իրար շաղկապում փողոցը, ազատ տարածությունները, սպասարկման

կենտրոնները, բնակավայրերը՝ որպես առաջար քաղաքների նոր և միաժամանակ այնքան հին էություն: Մրա լավագույն օրինակներից են Զանդազորի, Նախիչևանի հին գյուղերը, ուր աները ներշնուրաված են քնությանը և մողովրդի ապրելակերպին, ներշնդրվելոված են բաց և փակ տարածություններում, տարբեր բարձրությունների մակերնեների վրա, ուր մարզը իր շափին համապատասխան է առանձին ամեն ինչ: Այդպես են նաև արարական կաղբաները, միջերկրականի համեստ գյուղերը: Այսօր այդպես են նախագծում Ֆրանսիայում մարտարապետ Կանդիլիսը, Վուդը, Յուիլը, Շրուվը և զրայրները: Եվելցարիայում՝ Ստուկին և Մարուկին, Բարայելում՝ Գոզովիշը, իսկ Մոնրեալում կարևոր է տեսանել արդեն, առաջին իրազործումներից մեկը՝ «Բնակավայր 67-ը», (ճարա. Մ. և Ն. Սաֆորիներին):

Իտալիայում Լեոնարդո Բիշին (Ֆրենցեն) ունի իր յուրահատուկ տեսակենտրոնի համար զանգվածների համակարգը մկուն է և պարփակված ընակելի տարածություններն իրենց սարբավորումներով երկարում ու միանում են ընդհանուր սպասարկումներին: Անհատական կյանքը բնորոշվում է ընկերացին կյանքով, հետևաբար քաղցրացին կենտրոնը խմբավորումների կենտրոն է, և պլանավորումը պիտի է արտահայտի այս իրողությունը Խալացի որոշ ճարտարապետների հայեցագությամբ առաջարարակ, պլատոնիկ արտահայտչականության միջոցով շեշտվում է ձևակերտված զանգվածների պարունակության պատկերավորումը: Եռուղրանքը չի սահմանափակվում խորանարդների համագրումների անհամար հնարավորությունների շուրջ, այլ նկատի ունենալով այդ հնարավորությունները, փորձում է ամրողին տալ ոչ միայն ծավալացին կերպար, այլ հատկապես պլատոնիկ ձևակերտում, այսինքն՝ հասարակականի ձևակերտված իմաստավորումը: Այս մոտեցումը նշանակում է հնիակառուցից և միավոր ծավալների միաձուլում: Դժվար չէ նկատել, որ այստեղ աճումը ընթանում է բջիջից՝ քաղմացման կենսաբանական օրներներով:

Կա նաև բջիջների զարգացման սկզբունքի հակառակ դիրքորոշումը: Ճարտարապետ Ա. Նոյմանի տուաշարկուու տարածությունը հորիզոնական և երշեմն ալիքավոր ուրվագծերի միջոցով բաժանվում է երեակայական շերտերի և, հարկարամինների նման, ամեն մի շերտ կրում է բնակելի տարածության միավորը և զարգանում բաղմապատկելիք միավորների տարրերը հնարավորություններով: Իդեալական ցանցը բնակելի միավորները կազմակերպնելու կաղապարն է և միաժամանակ կրող համակարգը: Այս կարող է տարբեր բարձրություններով անսահմաներին երկարել, ուղղությունը փոխել, խառնալ: Կառուցվածքների շարուղանքը ընկալվում է տարածությունը բաժանող ցանցերի կերպարներով և ձևակերտվում հորիզոնական ծավալների

Հարկագրական առողջ կտամ մակարդակած ծավալների համակարգով Կառույցը կազմված է ոչ թե սյուներից և հեծաններից, այլ հորիզոնական և ուղղաձիգ պատ հարթակներից։ Առաջարկված շինանյութերը՝ երկաթքետոն, դրաշմզած թիթեղ, պղատմասաւ Այսպիսի կառուցվածքներում պարփակիչ ընդհանուր ծավալը, ինչպես և ամենափոքր բազադրիչները կազմապարված են կազմավորման հետան կանոններով, հետեւարար բնակարանները շաղկապված են բնակարաններին, սենյակները՝ սենյակներին, կառույցը՝ կառույցին։ Ենքը դորժարանային արտադրանք է. բանվորը պետք է հավաքի տարբեր մասերը, տեղադրի, զոդի և այլն։ Ենքնարար բանվորը դառնում է մեխանիկ բանվոր։ Բնակարանները պատրաստվում են աշխատա, ինչպես, օրինակ, ստուարանները և, հետեւարար, տակասում է արհեստավորի այնքան կարնոր միջամտությունը։

Վերքերս անզիփացի հարատարապես Պ. Միտսոնը ասել է. «Անցյալի և այսօրվա ունեցած մեր դիրքերի տարբերությունը հետեւյան է՝ մենք շենքը այլևս տեսնում ենք որպես ամբողջության մի հաւաքած և ոչ թե որպես կղզիացած երեսությ, նման մի պոհմի, որ կարելի է կարդալ և իր ամբողջությամբ մեր հիշողության մեջ պահելու թշիշներով բնակելի զանգվածներ կազմնել, ցանցերում բնակելի միավորներ ահզադրել, տարածությունը շերտերի բաժանել և բնակարաններով ամբողջացնել՝ երեք տեսակներու են սրանք, որ առաջացնել են բաց ձեր հասկացությունից և ուր հորինվածքը նկուն է, կառույցները շարունակ աճելու և փոփոխվելու տեխնիկական հնարավորությունները ունեն։

Այսքանից հետո հարց է ժառանում. արդյոք կարո՞ղ է այսօրվա բազարը տարածական նկատ համակարգ ունենալ, որը միաժամանակ փոփոխական լինի, այսինքն շարունակ կազմավորման ներթակաւ։

Ինչպես արդյուն տեսանք, այստեղ դրվում են բազարի շարադրանքը բնորոշող անձայնացման և բազարայնացման հարցերը, որոնք կարելի է իրադրժել հետեւյալ երեք մոտեցումների հիման վրա։

1—շարադրական մոտեցում

2—կառուցողական մոտեցում

3—հաջորդականությունների շարություն իրագործելու մոտեցում։

Առաջինը զուտ ճարտարապետական է. կայուն և բոլոր խնդիրները լուծվում են ճարտարապետական ձեր միջոցով, այսինքն՝ փակ ձենքը շարադրանքով։ Երկրորդը կառուցողական մոտեցում է. Այն պետք է ընդգրկի և պարփակի ամբողջ բազարը։ Այս նպատակին հասնելու համար կարելի է առաջարկել օրինակ, Քենցած թանգեի մեջակառուցը կամ մեջաձեր։ Մեջակառուցը ցանց է, որը շաղկապում է բազարային այլ ցանցերի ամբողջ շարքը։ Մինչդեռ փոքր ցանցերը հանրային բնույթ ունեն՝ վաճառք, արդյունարերություն, տարբեր սպասարկումներ, երթեկություն։

Հաշորդականությունների շարքերը՝ մեր նկարագրած միավոր ժավալների համապատմներով զարգացող ամբողջական զանգվածներ են:

Դա նշանակում է ծրագրեր կազմել, իսկ ծրագրերը կազմելը դժվար է, որովհեան դժվար է բնարաններ մարդու մեջ առաջացնել նոր պահանջները, նախատեսել կյանքի ընթացքի ուղղությունը: Խնդրան էլ հետաքրքիր լինեն այդ մուտքամբներն, այնուամենայնիվ հիմնականը, ինչդեմ իտալացի ճարտարապետները շարտնակ պնդում են, մարդկային և զելությունների մեթոդիկ ուսումնասիրությունն է: «Եոր ժամանակությունը իրազրությունների զայնություն չէ միայն, այլ պիտի հիմնավորվի առարքեր ավալների իրական և ամբողջական պատկերացումներով: Պետք է գտնել մարդու պահանջների և քաղաքային ֆունկցիաների փոխհարաբերությունները, — նշում է է. Սավիոլին, իսկ Զ. Կ. Արգանը ասում է. «Այսօրվա մեր նախագծերը կազմավորման մեջ դրանքով արվեստի գործեր ենչ: Ըստ նրանց պիտի ուշադիր լինել իրազրության իրական պատկերացմանը և աշառագովել նախապաշտումներից: Ի վերջո, եղելությունների մեթոդիկ ուսումնասիրությունը և նոր ձևերի անընդհատ մշակումը ճարտարապետին մզում են զանելու քաղաքների նոր կերպարը: Այդպիսին է, առա, իտալական արդյի ճարտարապետության ընդհանուր տևական միտումը:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո իտալական կառավարությունը, նպատակ ունենալով նպաստել պատմական մեծ նշանակություն ունեցող քաղաքների բանդված շրջանների վերակառուցմանը, արտակարգ որոշում ընդունեց նոր պայմաններ և միջոցներ ընձեռնելով: Մրցանակաբարձիսությունների կարգով ընտրվեցին լավագույն նախագծեր: Վերակառուցումը պաշտոնական տեհատաների կամ մասնագետների նեղ շրջանների մտահոգությունը չէ միայն, այլ ամբողջ ժողովրդի պահանջը: Առաջին վերակառուցումներից մեկը հզազ Ֆիրենցիի Պոնտե Վեկիոն: Ողջ շրջանը արժեքավորվեց քաղաքաշինական հին ծրագրի հիման վրա, և դա հզազ սխալը: Նոր շինությունների ստեղծման հետականություն թաղամասում ծանրաբեռնվեց երթևեկությունը: Քաղաքի պահպանված ճարտարապետական հին շինքերը անբավարար դանդեցին նոր հաստատություններ կրելու համար:

Երկրորդ միսալը գալիս էր այդ պատմական թաղամասերի շուտափույթ վերակառուցումը իրազրութեալու անհամբերությունից: Պետք էր հիմնվել քաղաքի ընդհանուր հաստակագիր վրա, իսկ հատակագիրը կազմվեց շատ ավելի ուշ և նույն պատմանց Տորինոյի և այլ քաղաքների հետ: Չէ՞ որ ընդհանուր հա-

<sup>1</sup> P. Baligheroni, Nuove tipologie nuova dimensione urbana, «Città e Società», № 6, 1966, «Casabella-Continuità», № 273.

<sup>2</sup> G. C. Argan, Progetto e destino, Milano, 1965.

տակագծի իրագործումը կախում ունի ավագների ամբողջական կերպընկայումից և նոր ծավալականության զգայնությունից: Գործեականութենք, մասնակի շրջանների նախագծերով սահմանափակվելիս հարկ է ճշդրիտ և հարցազատման անդամությունը հաստակագծի բնույթին: Բայց այստեղ մի գժվարություն է առաջանում՝ հարկավոր է գտնել այն հնիթակառուցը, որը իրար է շաղկապելու անցյալի և այսօրվա ձևերը: Մարդն այսօր լրատ է քաղաքի պատմական կենտրոնը և ավելի հեռված կառուցում իր բնակավայրը, որը նոր ապրելակերպի համար ներդաշնակ կենտրոններ կազմակերպելու հարցավորություն կատարություն մարդկան մարդու մարդու մշակույթով և հոգեկան արժեքների հարակցությամբ կապված է իր երկրի անցյալին: Արդիմն հակառական դիրքորոշումներ, որոնց պատասխանը պիտի տան քաղաքաշինարարները՝ անցյալն ու ներկան կապելու և նորը կերտելու հանդինությամբ: Նվազագական մարտարարակետները եկան հետեւյալ եղրակացությանը՝ Քաղաքների սպագա զարդարումը լրացիտ շարադրել որպես շենքերի միջանկյալ և կղզիացած շենքերի շարք, ոչ էլ իրքն մի քանի տիպերի կարգավորված շարան: Պատը է նախատեսել առաջանալիք հարաբերությունները կազմակերպող բարդ համարգերի միջացողված տարածական առաջարկերը, որոնց միջացողված տարածական առաջարկերը են և վերադարձարար հանգելու են բնակավայրերի միակցություններին: Իրար են շաղկապելու սպասարկումների ուղիները, բաշխման կետերը, բազմաբնույթ երթևեկության ցանցերը՝ շենքերը, զբունելու, ժամանցների վայրերը: Մշակվելու են քաղաքային մեծ և բարդ համակարգերը, որոնց միջացողված կարելի կլինին կազմակերպել կյանքի նոր ձևեր: Այդ ձևերն ամփոփելու են ոչ միայն անժանություն ավագները, այլև համակարգերի ընդարձակման խել պատճառով նոպատճելու են կյանքի բնաշրջմանը: Նվազաւացիների փորձը ցույց է տալիս, որ այսպիսի մոռեցում կարելի է իրագործել մերժուագային ազատ տարածություններում, ինչպես՝ Հոռմից ոչ հեռու կառուցելիք հնաւույալ կենտրոններում՝ Տրե Ֆոնտանեն (ճարտ. Վակիարո, Ֆիորենտինո, Կարդանո, Պերուջինի և Վալլի, 1965), Տոր գե Պրեչի (ճարտ. Լ. Ալեքսանդր, Ֆիորենտինո, 1965), և Սպինաչետա (ճարտ. Պ. Մորոնի, Ն. դի Կայնո, Ֆիորենտինո, Ֆ. Բոտտինի, Լ. Բարբերա):

Սակայն նախարարական ամենամեծ մտահոգությունը եղավ ոչ այնքան նոր ավանեների կառուցումը, որքան հին քաղաքներում նոր կենտրոններ տեղադրելը և այս ինաստավով ուշադրավ է 1963-ին Տորինոյի համար նախատեսված ողեկավարման կենտրոնը» (ճարտ. Կ. և Մ. Ալբոնինո, Ֆ. Բոտտի, Ֆ. Բերլանդա, Բ. դի Ռոսսի, 1965), և Սպինաչետա (ճարտ. Պ. Մորոնի, Ն. դի Կայնո, Ֆիորենտինո, Ֆ. Բոտտինի, Լ. Բարբերա):

բով։ Առաջարկված ծավալային լուծումը արագընթաց հանապարհի նոր մասշտաբը ենթաշնորհում է քաղաքի նոր կազմին։ Համակարգ այս դիրքորոշումը ընորոշում է զնկավարման կենտրոնի նախարարական շարադրանքը։

Այս տիպի կենտրոնների կազմավորմամբ առաջանում են ուժների նոր գծեր, ճգողովթյան նոր բնեուներ։ Նախագծումը կատարվում է համամասնությունների պատկերումով, այսինքն՝ պատկերված ողանի (պիանո կուադրո) միջոցով։ Սա ընդհանուր պլանում նախատեսված կանոնադրությունների ձևակերտված մեկնաբանությունն է և ընդգրկում է քաղաքի ամբողջ տարածք։ Այսպիսի սկզբունքներով ընորոշվում են քաղաքատկերի կազմը, ծավանները և քաղաքի ընդհանուր կերպարը։ Անցյալը իմաստավորման և մեկնաբանվում է նոր համակացությամբ, միջոցներ են ստեղծվում առաջարկացման համար, քայլ ոչ ունական իմաստով, այլ համաշափությունների և ենթակառությունների օգտագործմամբ։

Այդպիսով, ըստ իտալական հարստարապետների, կյանքի շարունակ փոփոխված տվյալներից առաջացած հոսանքները չեն կարող կանգնեցվել քաղաքաշինական սկզբունքների պատճենշներով, ուրեմն պիտի կազմակերպել առընթերաշափերի միջոցով։ Քաղաքների կազմավորման հարցը միշտ բաց է, իսկ իտալական օրենսդրությունը բավական նկուն է և ընդառաջում է կառուցողական նոր առաջարկներին։ Քաղաքի ընդհանուր համակագիծը հիմք է, քայլ ոչ թե մերժական լուծում։ Այն շարունակ իրագործման ընթացքում դանչող ծրագիր է, իմաստ, և ոչ թե սահմանում։ Դա շարունակ պլանավորելու հարավորություն է առջիս հարստարապետին։

Հարստարապետական հարամուն ընթացքը կարող է իրագործվել միավոր չափերի պարբերական օգտագործմամբ։ այդպիսով հանապարհ է քացվում շինարարական տարրերի գործարանային արտադրության և հետեարար, հանրային պահանջները առաջնովելու համար։ Յանցերի հանգույցներում կարելի է գանել ձեռների ու համաշափությունների անհատական արտահայտչականություն։ Սակայն պետք է զգուշ լինել, որովհետեւ երբ մարդող կորցնում է հասկացողությունը, մաքերի խառնաշփոթություն է առաջանում ու նախագծողները կառչում են զուտ տեխնիկային։ Կազմավորելով տարածությունը, մարդոր կառուցում և կառուցվում է այնքանով, որքանով համակարգը ամենալու նյութավորմանը տևի Զուտ տեխնիկական կազմում պարփակված արտահայտչական հնարավորությունը դրանորում է շինության հանգույն կերպարը, զիտական ավլաներին գերիշխելու զիտակցությունը, նյութը տարածության մեջ կազմավորելու հպարտությունը։ Իսկ քանդակած քար, հույզեր առաջացնող պարզ պատճենագործությունը, կապելլա զեցի Պացցիի հավասարակշռված ներդաշնակությունը, Սանտա Մարիա դել Ֆիորեի դմբեթի հզորությունը ձեռակերտված իրադրություններ են, որոնք հակառագրական նշանակություն ունեն։

Դարերի ընթացքում ստեղծված արվեստի գործերը մշակույթը լուսավորող կենարոններ են, պետք է իմանալ այդ լույսի իմաստը և կարողանալ ընդունել նրանով ու ոգու ամբողջ ուժով նոր կերպարներ ստեղծել, որպեսզի մարդը գնդացացնի իր առօրյան և արժանի դառնա անցյալի ժառանգությանը ճարտարապետական ամեն մի ստեղծագործություն վկայություն է մշակույթի դարձացման հանապարհին:

1964-ին Վենետիկի քաղաքապետարանը կայսրանամերձ Տրոնենտատա արհեստական կղզին բարձրացնելու նպատակով միջազգային մրցանակաբաշխություն հայտարարեց: Նախատեսվում էին՝ նավերի մոտեցում, նավամատուցների հարմարանքներ, ավտոմեքենաների մեծ կանգառեղեր, հյուրանոցներ, պահեստներ: Հանձնաժողովը ընտրեց հինգ նախագիծ, որոնք արժանացան առաջին և մի նախագիծ՝ երկրորդ մրցանակի: Առաջարկվեցին հետնայի լուծումները:

Հարտարապետներ ի. Ռազմապահին, Ա. Ֆուկարին, Պ. Մայնասիսը հերթում նև քաղաքաշինարարների այն տեսակետը, ըստ որի Հագունան պիտի դիտել որպես «կառուցվելու մակերես» (այսինքն քաղաքը ընդլայնելու հետրավորություն), հաստատելով, որ Լազունան ոչ ծով է, ոչ էլ հողամաս, այլ «կյանք ունեցող երկրամաս» և քաղաքում հետրավորություններ ունեցող տարածությունը: Դիտավորյալ մեջբերում ենք երկրամասին տրված մեկնարանությունը, որովհետև տեղանքի հասկացողությունը դիրքորոշում է նախադառնի տեսակետը և բնորոշում հարտարապետական ձևավորման ապագայ կազմը: Ջրի մակերեսն այնքան իրական է, որքան հողամասը, իսկ ամբողջ Վենետիկը կառուցված է այդ երկու տարրերը իրար հյուսվելով, որպես մարդ-աշխարհագրական հոկա և նղակի երկույթ, ուր մարդու և բնակչյան պայքարը առօրյա իրողություն է: Պայքար է դա, որ մղվում է ոչ միայն քաղաքի պահպանման, այլ նարտարապետական նոր արժեքներ ստեղծելու նպատակով: Հեղինակենքներն առաջարկում են հիմնական սպասարկումների շենքին մշտական կազմ առաջ գնդի ջուրը երկարող մի հսկա թեկն կառուցմամբ, իսկ նավերի մոտեցումներն առաջովիկ ջրի երեսը ծածկող երկաթբետոնն հարթակներով: Հարթակների տեղադրման հղանակով է մեկնարանվում ջրի կատարած գերր: Մոտեցման հանապարհները ջրից պահպանող կողերով են հողին որը ջրի մակերեսութիւն մեկ մետր ցածր է) և տեղադրվելու են բնական ջրանցքների ուղղությամբ: Հարտարապետությունը միավորվելու է և ոչ թե հակագրվելու է բնությանը: Այս կապակցությամբ հեղինակները նշում են՝ «Վենետիկյան հարցերի բարգությունը այնպիսին է, որ միայն անժանո՞թ ձենքը, արմատական գյուտերը կարող են դրանց լուծում տալու նվ, իսկապէս, անժանո՞թ ձենքը, գյուտերը, տեղագրության իրողությունը, մակերևութարանական կազմություն, կառուցվելիք կղզու փոխհարաբ երսություններն ապահովող

